

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ



1. ՆԻԿՈԼԱՅ ԱՌՈՒՏԱՄՅԱՆ	
Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման արդի հիմնախնդիրները	2
2. ԵՐՎԱՆԴ ԴԱԼԼԱՔՅԱՆ	
ՀՀ դատարանների կողմից սահմանադրական նորմերի անմիջական կիրառումը որպես նրանց անկախության ապահովման երաշխիք	7
3. ՄԱՄՎԵԼ ՄԵԼԻՔՅԱՆ	
ՀՀ ֆինանսական համակարգում ընկերության մասնակիցների անձնական գույքային պատասխանատվության հիմնախնդիրները	13
4. ԼԻԼԻԹ ԶԱՄԱԼՅԱՆ	
Տեսաձայնագրություններն ու լուսանկարահանումները դատավարական իրավունքում	19
5. ԳՈՒՐԳԵՆ ԶՈԹԱՆՉՅԱՆ	
Մարդուն առևանգելու սահմանազատումը պատանդ վերցնելուց	27
6. ԴԱՎԻԹ ՀՈՒՆԱՆՅԱՆ	
Գործը մեղադրողին վերադարձնելու ինստիտուտը որպես գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի վերակենդանացում ՀՀ քրեական դատավարությունում	31
7. ԱՆՆԱ ԴԱՆԻԲԵԿՅԱՆ	
Անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը ՀՀ քրեական օրենսդրությունում	38
8. ԼԻԼԻԹ ԱԶԱՏՅԱՆ	
ՀՀ օրենսդրության համապատասխանությունը փողերի լվացման վերաբերյալ միջազգային ստանդարտներին	44
9. ՍՈՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ	
Հասարակական կարծիքի ձևավորման հիմնախնդիրները ՀՀ մամուլի քաղաքական հրապարակախոսության մեջ	50
10. АНИ АКОПЯН	
Актуальность проблемы присоединения Европейского Союза к Европейской конвенции о защите прав человека и Лиссабонский процесс	59
11. МЕРУЖАН СТАМБОЛЦЯН	
Геополитический интерес как детерминант современного политического процесса: международный аспект	72
12. STEPAN TSAGHIKYAN & A. ALEKYAN	
The basic criteria of anticorruption policy	77

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ >>

ՆԻԿՈԼԱՅ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարի տեղակալ

ՊԱՏԺԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Պատիժը քրեական իրավունքի հիմնական ինստիտուտներից մեկն է և իրենից ներկայացնում է պետության արձագանքը անձի կողմից հանցագործության կատարմանը, հանցագործություն կատարած անձի համար՝ նրա կողմից կատարված արարքի քրեաիրավական բացասական հետևանքն է:

Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը նշանակվում է դատարանի դատավճռով հանցագործություն կատարելու մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և կայանում է դատապարտյալին իրավունքներից և ազատություններից օրենքով սահմանված կարգով զրկելու կամ սահմանափակելու մեջ:

Պատիժների կատարմամբ իրականացվում են պատժի՝ օրենքով նախատեսված նպատակները, այդ թվում՝ դատապարտյալների ուղղումը: Եթե դատապարտյալների ուղղումը՝ որպես պատժի նպատակ, իրականացվել է մինչև պատժի ժամկետի ավարտը, ապա պատժի հետագա կրումը դադարում է աննպատակահարմար: Այդ պատճառով, մարդասիրության սկզբունքին համապատասխան, օրենքը դատարանին հնարավորություն է տալիս պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատել այն անձանց, ովքեր ուղղվելու համար կարիք չունեն նշանակված պատժի մնացած մասը կրելու: Այս պարագայում պատժի կրումից վաղաժամկետ ազատելը մի կողմից հանդիսանում է իրենց ուղղումն ապացուցած դատապարտյալների համար խրախուսանքի, իսկ մյուս կողմից՝ պատիժը կրելու ընթացքում դատապարտյալների կողմից օրինակելի վարքագծի դրսևորման խթանիչ միջոց¹: Ասվածից հետևում է, որ այն դատապարտյալների պայմանական վաղաժամկետ ազատումը, ովքեր դրան արժանացել են, նպաստում է պատժի առջև դրված խնդիրների արագ և արդյունավետ լուծմանը, և դրանով նպաստում է նաև հանցավորության դեմ պայքարին: Նույն սկզբունքն ամ-

րագրված է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի պայմանական ազատման (պայմանական վաղաժամկետ ազատման) մասին 2003 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունված թիվ (2003) 22 հանձնարարականում (այսուհետ՝ Հանձնարարական), որի 3-րդ կետի համաձայն՝ պայմանական ազատումը պետք է նպատակ ունենա աջակցել դատապարտյալներին տեղափոխվելու բանտային կյանքից օրինապահ կյանքի հասարակության մեջ՝ հետ-ազատման պայմանների և հսկողության միջոցով, ինչը կաջակցի հանրային անվտանգության ապահովմանը, ինչպես նաև հասարակության մեջ հանցավորության նվազեցմանը:

Խնդրո առարկայի շուրջ առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով դիտարկենք, թե ինչպես են կարգավորված պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտին վերաբերող հիմնահարցերը տարբեր երկրներում:

Անգլիայում (Մեծ Բրիտանիա), օրինակ, վաղաժամկետ կարող են ազատվել որոշակի ժամկետով դատապարտված անձինք: Պայմանական վաղաժամկետ կարող են ազատվել նաև նրանք, ովքեր դատապարտված են ցմահ ազատազրկման²:

Պայմանական վաղաժամկետ անձը կարող է ազատվել պատժի ժամկետի մեկ երրորդից ոչ պակասը կրելուց հետո կամ ազատազրկման 12 ամիսը կրելուց հետո, կամ ցմահ ազատազրկման դեպքում՝ Պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովի կամ Պետ. քարտուղարի համաձայնությամբ (Secretary of State): Պայմանական վաղաժամկետ ազատելու համար հիմք կարող են հանդիսանալ ոչ միայն լավ վարքագիծը, այլև կարծիքն այն մասին՝ կարող է արդյոք դատապարտյալը ճիշտ կյանք վարել «բանտի պատերից դուրս»: Պայմանական վաղաժամկետ ազատվածների նկատմամբ հսկողությունն իրականացնելու պարտականությունը դրվում է պրոբացիայի համապատասխան ծառայողի վրա: Ցուցումները խախտելու

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դեպքում պայմանական վաղաժամկետ ազատելու մասին լիցենզիան կարող է հետ կանչվել Պետ. քարտուղարի (Secretary of State) կողմից, ինչին հետևում է տեղափոխումն ուղղիչ հիմնարկ՝ պատժի կրումը շարունակելու համար³ :

Պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովը գործադիր ոչ գերատեսչական մարմին է: Նրա անդամները նշանակվում են արդարադատության նախարարի (Justice Secretary) կողմից, և նրանք իրականացնում են դատապարտյալների բարեհաջող վերաինտեգրումը դեպի հասարակություն պաշտպանելու դերակատարումը: Հանձնաժողովի անդամները նաև պատասխանատու են պայմանական վաղաժամկետ ազատման ռիսկերի գնահատման համար: Հանձնաժողովը խորհուրդ է տալիս նախարարին մնան ռիսկերի վերաբերյալ և կայացնում է որոշում իր անունից: Հանձնաժողովի կազմավորումը նախատեսված է օրենքով, որը պահանջում է, որ այդ անդամն ունենա հետևյալ հատկանիշներից մեկը.

- դատական համակարգում աշխատանքի
- փորձ,
- հոգեբույժ,
- պրոբացիոն ծառայող,
- քրեաբան:

Հանձնաժողովը բաղկացած է 170 անդամից, որը ներառում է ոչ լրիվ դրույքով ղեկավար, ոչ լրիվ դրույքով դատավոր-ղեկավարի տեղակալ, լրիվ դրույքով և ոչ լրիվ դրույքով անկախ անդամներ և ոչ լրիվ դրույքով դատական ծառայող, հոգեբույժ, հոգեբան, պրոբացիոն ծառայող և քրեաբան անդամներ: Հանձնաժողովին սպասարկում են գործադիր տնօրենը և 100 հոգանոց անձնակազմը:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում պայմանական վաղաժամկետ ազատման համակարգն ունի բավականին հետաքրքիր առանձնահատկություններ: ԱՄՆ-ի քրեական իրավունքում պայմանական վաղաժամկետ ազատումը՝ ազատումն է ազատագրկման վայրից մինչև դատավճռով կամ օրենքով նշանակված պատժի առավելագույն ժամկետը լրանալը, այն պայմանով, որ ազատվածը որոշակի ժամանակահատվածում անվերապահորեն հետևի որոշակի պայմանների (լավ վարքագիծ ունենա, խախտումներ թույլ չտա, այլ հանցագործություններ չկատարի և այլն)⁴: Պայմանական վաղաժամկետ ազատումը թույլատրվում է ոչ պակաս, քան երեք հիմքերի միաժամանակյա առկայու-

թյան դեպքում.

- 1) եթե օրենքը չի արգելում որոշակի հանցագործություններ կատարած անձանց վաղաժամկետ ազատումը,
- 2) եթե դատապարտյալը կրել է պատժի որոշակի ժամկետը,
- 3) եթե մարմինը, որի վրա դրված է հարցի լուծումը, ճանաչում է, որ տվյալ դատապարտյալը «իրեն լավ է պահել» և ընդունակ կլինի ազատումից հետո կատարել ցուցումները:

Հազվադեպ չեն դեպքերը, երբ պայմանական վաղաժամկետ ազատման ենթակա չեն ցմահ ազատագրկման, սպանության, բռնաբարության համար դատապարտված անձինք, ովքեր փախուստի փորձ են կատարել: Որոշ նահանգներում ցմահ ազատագրկման դատապարտված անձանց համար սահմանվում են ազատագրկման առավել բարձր ժամկետներ, որոնք հիմք են տալիս պայմանական վաղաժամկետ ազատման հարցը քննարկել 35 և ավելի տարի անց:

Պայմանական վաղաժամկետ ազատման համար հիմք հանդիսացող ժամկետը դատավճռում սահմանված նվազագույնն է: Եթե այն սահմանված չէ, ապա պայմանական վաղաժամկետ ազատման համար հիմք է հանդիսանում որոշակի պատժի կամ անորոշ դատավճռով սահմանված պատժի առավելագույնի մասը (1/2, 1/3 կամ 2/3):

Մինչև պայմանական վաղաժամկետ ազատման մասին գործի լուծումը դատապարտյալը պետք է նախապատրաստի պայմանական վաղաժամկետ ազատումից հետո իր ազատության մեջ գտնվելու պլանը՝ նշելով, թե որտեղ և ում հետ է նա ապրելու, ինչով է պատրաստվում զբաղվել, ինչպիսի ապրելակերպ է վարելու:

Վաղաժամկետ ազատման պայմաններն են՝

- 1) նոր հանցագործություն չկատարելը.
- 2) այլ պարտականությունների կատարումը, որոնք նախատեսված են այն անձանց համար, ում նկատմամբ պրոբացիա է նշանակված:

Պայմանական վաղաժամկետ ազատման հարցը լուծող մարմինները պայմանական վաղաժամկետ ազատման խորհուրդները կամ բյուրոներն են, որոնք կազմված են նախկին բանտային ծառայողներից կամ այլ հաստատություններում (հաճախ բանտերում) ծառայող անձանցից: Վերջիններս հաճախ իրենց պարտականությունները

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կատարում են համատեղությամբ: Վեց նահանգներում հարցը լուծում է նահանգապետը իրեն կից գտնվող խորհրդի հետ խորհրդակցելուց հետո: Այս մարմինները լուծում են ինչպես պայմանական վաղաժամկետ ազատման և պայմանական ազատվածների նկատմամբ հսկողություն կազմակերպելու հարցերը, այնպես էլ ազատագրկման վայրեր հետ ուղարկելու հարցը:

Ֆրանսիայում պատժի հետագա կրումից ազատումը՝ վաղաժամկետ պայմանական կամ առանց պայմանի ազատմանը վերաբերող իրավահարաբերությունները կարգավորվում են Ֆրանսիայի 1958 թվականի Քրեական դատավարության օրենսգրքով⁵: Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն պայմանական վաղաժամկետ ազատման համար հիմք են ծառայում՝

1) «սոցիալական վերաադապտացման մասին ծանրակշիռ տվյալների առկայությունը»,

2) ազատագրկման ժամկետի ոչ պակաս, քան կեսը կրելը (ռեցիդիվիստների համար՝ 20 տարի, ցմահ ազատագրկման դատապարտվածների համար՝ 18 տարի (ՔԴ-Օ 729-րդ հոդված)):

Պայմանական վաղաժամկետ ազատում չի կարող տրամադրվել դատարանի կողմից որոշված անվտանգության ժամկետի ընթացքում (դա այն ժամկետն է, որը նշանակվում է ծանր հանցագործություններ կատարելու համար դատապարտվելու դեպքում):

Պայմանական ազատման իրավունքը պատկանում է պատիժների կատարման գծով դատավորին և պատիժների կատարման գծով դատարանին: Եթե դատապարտյալին նշանակվել է մինչև 10 տարի ժամկետով ազատագրկում կամ պատիժը կրելուն մնացել է 3 տարի, ապա որոշումն ընդունում է պատիժների կատարման գծով դատավորը, իսկ մնացած բոլոր դեպքերում պայմանական վաղաժամկետ ազատումը տրամադրում է պատիժների կատարման գծով դատարանը (ՔԴ-Օ 730-րդ հոդված): Պայմանական վաղաժամկետ ազատման տրամադրումն ուղեկցվում է, այսպես կոչված, «հատուկ պայմաններով» և «աջակցության ու վերահսկողության միջոցներով», «որոնք կոչված են հեշտացնել և հաստատել ազատվածի վերադարձը նորմալ կյանքի» (ՔԴ-Օ 731-րդ հոդված): Այդպիսի միջոցների կիրառման ժամկետը որոշվում է պայմանական վաղաժամկետ ազատման մասին որոշման մեջ: Այն չի կարող պատժի չկրած մասից պա-

կաս լինել և կարող է գերազանցել ոչ ավելի, քան մեկ տարով: Այնուամենայնիվ, այդպիսի միջոցների կիրառման ժամկետը չպետք է գերազանցի տասը տարին: Յմահ ազատագրկման դատապարտված, իսկ հետագայում պատժի կատարումից ազատված անձի համար այդպիսի ժամկետը կազմում է ոչ պակաս, քան հինգ տարի և ոչ ավել, քան տասը տարի (ՔԴ-Օ 732-րդ հոդված)⁶:

Պայմանական վաղաժամկետ ազատման մասին որոշումը կարող է վերացվել «նոր դատապարտման, հայտնի դարձած վատ վարքագծի դեպքում», պայմանական վաղաժամկետ ազատման մասին որոշմամբ հատուկ սահմանված ազատման պայմանների խախտման դեպքում: Պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու դեպքում անձի կողմից նոր հանցագործություն կատարելու կապակցությամբ այդ հանցագործության համար պատժին միացվում է նախկին դատապարտման չկրած ժամկետը: Իսկ եթե սահմանված ժամկետի ընթացքում պայմանական վաղաժամկետ ազատումը չի վերացվում, ազատումը դառնում է վերջնական: Պատիժը համարվում է կրած պայմանական վաղաժամկետ ազատման օրվանից:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ազատագրկման ձևով պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը կարող է կիրառվել դատարանի կողմից, եթե՝

1) դատապարտյալը կրել է պատժի 2/3-ը (բոլոր դեպքերում 2 ամսից ոչ պակաս),

2) կարելի է ակնկալել, որ անձը և առանց պատժի հետագա կրման չի կատարի քրեորեն պատժելի արարք,

3) դատապարտյալը տվել է իր համաձայնությունը:

Որոշ դեպքերում դատարանն իրավունք ունի պայմանական վաղաժամկետ ազատել նաև ավելի քիչ ժամկետ կրելու պայմաններում, այսինքն՝ պատժի կեսը: Դա կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ՝

1) դատապարտյալը ազատագրկման ձևով պատիժ է կրում առաջին անգամ,

2) նշանակված պատիժը չի գերազանցում 2 տարին,

3) գոյություն ունեն անձին և կատարված արարքը բնորոշող հատուկ հանգամանքներ⁷:

Պայմանական ազատվածի վրա տարած-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վում են հատուկ ցուցումների և պարտականությունների կատարմանը վերաբերող բոլոր կանոնները, որոնք նախատեսված են պատժի կատարման հետաձգում տրամադրելիս: Ինչպես նաև նշանակվում է փորձաշրջան, և ազատվածն անցնում է օգնականի հսկողության տակ:

Պայմանական վաղաժամկետ ազատումը հնարավոր է նաև ցմահ ազատազրկման դեպքում: Դրա համար անհրաժեշտ են հետևյալ միաժամանակյա պայմանները՝

- 1) դատապարտյալը կրել է ազատազրկման 15 տարին,
- 2) պատժի հետագա կրման անհրաժեշտություն չկա,
- 3) գոյություն ունեն այլ պայմանական վաղաժամկետ ազատման համար պահանջվող նախադրյալներ:

Առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ընթացակարգերը տարբեր երկրներում, որոնցից որոշների մասին արդեն վերը նշվեց: Սակայն եթե փորձենք պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտները պայմանականորեն դասակարգել ըստ ձևերի, ապա միջազգային փորձի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք հիմնականում գործում են դատական, արտադատական և խառը ձևերով:

Այժմ փորձենք միջազգային փորձն ուսումնասիրել ըստ հիշյալ պայմանական դասակարգման:

Դատական ընթացակարգի օրինակ է գործում նաև *Իսպանիայում*,² որտեղ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հարցը լուծում է հսկող դատարանը՝ բանտի վարչակազմի միջնորդությամբ:

Ալբանիայում ևս պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հարցը լուծում է դատարանը՝ հասարակական կազմակերպության, պետական կառավարման մարմնի կամ դատապարտյալի միջնորդությամբ:

Շվեդիայում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հարցը լուծում է դատարանը՝ պատիժների վաղաժամկետ ազատման և այլընտրանքային պատիժների կատարման ծառայության եզրակացության հիման վրա:

Պատժից պայմանական վաղաժամկետ

ազատման դատական ընթացակարգ է գործում նաև *Էստոնիայում*:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման արտադատական ընթացակարգը նույնպես ունի որոշակի տարածում մի շարք (հիմնականում՝ անգլո-սաքսոնական) երկրներում:

Այսպես՝ *Ավստրալիայում* և *Նոր Զելանդիայում* պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հարցը լուծում է պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովը: Այն օրենքով նախատեսված անկախ մարմին է, որը չի մտնում ո՛չ կառավարության, ո՛չ քրեակատարողական ծառայության, ո՛չ արդարադատության նախարարության, ո՛չ ոստիկանության իրավասության տակ: Այն բաղկացած է 17 դատավոր անդամից և 17 ոչ դատավոր անդամից: Թափուր տեղեր առաջանալու դեպքում դրանց վերաբերյալ տրվում է հայտարարություն, և անդամները Գերագույն դատավորի առաջարկությամբ նշանակվում են կառավարության ղեկավարի (Governor General) կողմից: Բանտեր այցելող խումբը բաղկացած է երեք հոգուց, որոնցից երկուսը պետք է լինեն ոչ դատավոր անդամներ, իսկ խմբի ղեկավարը՝ դատավոր անդամ: Խումբը նվազագույնը ամիսը մեկ անգամ պետք է այցելի քրեակատարողական մեկ հիմնարկ: Հանձնաժողովի կազմից բաղկացած հինգ հոգանոց ընդլայնված խումբը երեք ամիսը մեկ անգամ պետք է այցելի յուրաքանչյուր շրջան և հանդիպի բոլոր դատապարտյալներին, որոնց վաղաժամկետ ազատման ժամկետը վրա է հասել, և այդ բոլոր դատապարտյալները իրենց ժամկետը լրանալուց 12 ամսվա ընթացքում պետք է պարտադիր հանդիպեն այդ հանձնաժողովին:

Կանադայի Ազգային պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովը (National Parole Board) բաղկացած է 37 (կարող է լինել մինչև 45) մշտական անդամներից և 37 ժամանակավոր անդամներից (կարող է լինել մինչև 40), որոնք նշանակվում են Governor in Council-ի՝⁸ կողմից նախարարի առաջարկությամբ՝ համապատասխանաբար 10 տարի և 3 տարի ժամկետով: Հանձնաժողովի նախագահը ևս նշանակվում է Governor in Council-ի կողմից մշտական անդամների կազմից, նախարարի առաջարկությամբ ժամանակավոր անդամների կազմից նշանակվում է նաև հանձնաժողովի գործադիր փոխստորները: Ժամանակավոր աշխատողն ունի նույն իրավունքները, ինչ մշտա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կանը:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման արտադատական ընթացակարգ է գործում նաև *Իսրայելում*⁹:

Այսպիսով, պայմանական վաղաժամկետ ազատման տարբեր երկրներում գոյություն ունեցող համակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք, անշուշտ, ունեն համապատասխան երկրի իրավական համակարգով պայմանավորված առանձնահատկություններ, սակայն մեկ բան ընդհանրական է, որ վաղաժամկետ ազատման համար անհրաժեշտ է համապատասխան հիմքերի և պայմանների առկայություն: Դրանք են՝

- 1) պատժի որոշակի ժամկետն արդեն իսկ կրած լինելը,
- 2) դատապարտյալի դրական վարքագիծը,

որը հնարավորություն է տալիս կարծելու, որ պատժի հետագա կրման անհրաժեշտությունը բացակայում է,

3) նոր հանցագործություններ չկատարելու և պրոբացիայի մարմինների կողմից պահանջվող պարտականությունների կատարման անհրաժեշտությունը (հսկողության միջոցներ),

4) նշված հարցը լուծող մարմինը վաղաժամկետ ազատումը մերժելու դեպքում պետք է մանրամասն հիմնավորի, թե դատապարտյալը որ չափանիշին չի համապատասխանում և ինչու:

Պետք է նշել նաև, որ հիշյալ այն երկրներում, որտեղ գործում է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դատական ընթացակարգը, բանտի վարչակազմի և դատարանի միջև միջանկյալ հանձնաժողովներ գոյություն չունեն:

Շարունակությունը՝ հաջորդ համարում:

¹ Տե՛ս Рыбак М.С. Вопросы правового стимулирования и проблемы субъективного права на льготу осужденного к лишению свободы в современных условиях // Современные проблемы правоприменительной деятельности органов УИС в РФ. Сб. статей Саратов, 2002.

² Տե՛ս Liebling A. & Maruna S. (2005) *The Effects of Imprisonment*. Cullompton: Willan.

³ Տե՛ս http://www.paroleboard.gov.uk/policy_and_guidance/

⁴ Տե՛ս Gormsen L. (2007). On the Hill, Experts Call for Change. *Corrections Today*. December 2007. Vol. 69. Issue 6, p. 68 http://www.reentrypolicy.org/announcements/Senate_Passes_SCA Manitonquat. (1996). *Ending Violent Crime: A Vision of a Society Free of Violence*. Publisher.

⁵ Տե՛ս Pierre Pïlissier, «Editorial», *Champ pïnal, Editoriaux* Editoriaux archivïys, [En ligne], mis en ligne le 18 avril 2006.

⁶ Տե՛ս *Act no. 2004-204 of 9 March 2004 art.162 VIII Official Journal of 10 March 2004, in force 1 January 2005.*

⁷ Տե՛ս Персесян А.А. Вопросы наказуемости в уголовном праве ФРГ и США. - М.: Наука, 2005.

⁸ Տե՛ս Պաշտոնատար անձ, որը կառավարության առաջարկով նշանակվում է թագուհու կողմից և համարվում է նրա ներկայացուցիչը:

⁹ Տե՛ս *Международное право*. - М.: Наука, 2005.

¹⁰ Տե՛ս Никифоров Б.С., Решетников Ф.М. *Современное американское уголовное право*. - М.: Наука, 2006.

ԵՐՎԱՆԴ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՆՈՐՄԵՐԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ
ՆՐԱՆՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԵՐԱՇԽԻՔ**

Ինչպես հայտնի է, Սահմանադրության հատուկ իրավաբանական բնույթը դրսևորվում է նրա բարձրագույն իրավաբանական ուժի մեջ, որն իր ամրագրումն է ստացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածում: Միաժամանակ նույն հոդվածով սահմանվում է, որ Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն, ինչը ենթադրում է այդ նորմերի ոչ միայն իրավական բարձրագույն ուժով օժտվածության պայմանի, այլև Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում դրանց ուղղակի ազդեցության առկայության մասին:

Դա նշանակում է, որ սահմանադրական նորմերն օրենքների և իրավական այլ ակտերի նկատմամբ օժտված են գերակայությամբ: Բնականաբար այստեղ խոսքը ոչ այնքան Սահմանադրության՝ որպես, այսպես կոչված, «հանդիսավոր հռչակագրի» մասին է, այլ լիարժեք իրավական այն ակտն է, որի նորմերով անհրաժեշտության դեպքում պետք է ղեկավարվել կոնկրետ գործեր քննելիս:

Օրենքի՝ դատական կիրառման պրակտիկայի ձևավորման համար ՀՀ Սահմանադրության նորմերը հիմնարար են և միաժամանակ՝ գործուն կողմնորոշիչներ: Միայն Սահմանադրության՝ որպես գործող իրավունքի ժամանակակից ընկալումը կարող է թույլ տալ դուրս բերելու դատարաններին որակապես մի նոր մակարդակ: Դա սահմանադրական չափորոշիչներով պայմանավորված իրավակիրառման մակարդակն է: Այդ մոտեցումը վկայում է, որ դատական իշխանությունն իր գործունեության մեջ ունի անկախության սկզբունքի իրականացման լրացուցիչ մեխանիզմ, այն է՝ արդարադատության իրականացում սահմանադրական նորմերի և սկզբունքների ուղղակի կիրառության միջո-

ցով: Այն դեպքում, երբ, վիճելի իրավահարաբերությունների կարգավորման անհրաժեշտությամբ պայմանավորված, դա կապված է օրենքի գնահատման հետ, ապա պետք է կարգավորի և, համապատասխանաբար, նաև օրենսդրի գործողությունները պետք է ուղղված լինեն հենց այդ խնդրի իրավական կանոնակարգման հարցերին:

Արդարադատություն իրականացնելիս դատարաններն իրենց լիազորությունները իրականացնում են տրամաբանական և համակարգային առումով փոխկապակցված հետևյալ տարրերի միջոցով՝ վիճելի հարաբերությունների իրավական դասակարգում, դրանց գնահատում, ամփոփիչ ակտի ընդունում: Ընդ որում, բոլոր անհրաժեշտ դեպքերում կիրառվում են Սահմանադրության՝ որպես անմիջական գործողության ակտի նորմերը: Մեր կարծիքով՝ կոնկրետ գործ լուծող դատական ակտ կայացնելիս դատարաններն անմիջականորեն կարող են ղեկավարվել սահմանադրական նորմերով՝

ա) երբ Սահմանադրության նորմով ամրագրված դրույթները, ելնելով վերջիններիս իմաստից, լրացուցիչ կանոնակարգում չեն պահանջում և չեն պարունակում այդ նորմի կիրառմամբ պայմանավորված նոր օրենքի ընդունման հնարավորություն,

բ) երբ դատարանը գալիս է այն եզրակացության, որ մինչև ՀՀ Սահմանադրության ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող օրենքը հակասում է Սահմանադրությանը,

գ) երբ դատաքննության ընթացքում դատարանը պարզում է, որ այն օրենքը, որն ընդունվել է ՀՀ Սահմանադրության ուժի մեջ մտնելուց հետո, գտնվում է ակնհայտ հակասության մեջ Սահմանադրության համապատասխան դրույթների հետ,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դ) երբ դատարանի քննության ենթակա իրավահարաբերությունները կարգավորող օրենքի բացակայության պարագայում կիրառման ենթակա իրավական ակտը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Այդպիսի կիրառությունն անհրաժեշտ է, հատկապես գործող օրենսդրության մեջ սահմանադրորեն չկարգավորված կամ մասամբ կարգավորված «բացերի» առկայության դեպքում:

Ակնհայտ է, որ սահմանադրական նորմերի և սկզբունքների ուղղակի կիրառության լիազորությունների հիմքում ընկած է դատարանի՝ որպես պետական իշխանության ճյուղի անկախության գաղափարը, ինչը թույլ է տալիս ստեղծել դատական իշխանության իրագործման անհրաժեշտ մեխանիզմներ այն բնագավառում, որտեղ օրենսդիրն ի սկզբանե չէր նախատեսել, սակայն դրանք բխում էին տվյալ սահմանադրական կարգավորման բովանդակությունից:

Գրա հետ մեկտեղ հնարավոր է մի իրավիճակ, երբ օրենքի բացակայության ժամանակ ոչ միշտ է հնարավոր կամ ընդհանրապես անհնար է ՀՀ Սահմանադրության նորմերի ուղղակի կիրառությունը, և արդյունքում դատարանը, առանց որոշակի նորմի առկայության, չի կարող լուծել տվյալ վեճը:

Բնականաբար, հարց է ծագում, թե ինչպե՞ս լուծել այն գործերը, երբ կիրառման ենթակա օրենքը հակասում է Սահմանադրությանը, բայց դրանում անմիջական ազդեցության համապատասխան նորմը բացակայում է: Բացի դրանից, դատարաններում հաճախ տարբեր կերպ են մեկնաբանում կամ կիրառում առանձին սահմանադրական դրույթները, իսկ երբեմն էլ բոլորովին հղում չի կատարվում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումների վրա: Եվ այս դեպքում, ինչպես վկայում է դատական պրակտիկան, սահմանադրական նորմի անմիջական գործողության սկզբունքի իրացման այսպես կոչված իրավական «մշակույթը» գտնվում է կայացման փուլում և այդ սկզբունք - նորմը դեռևս չի հանդիսանում այն հենքը, որի հիման վրա կիրականացվի դատական արդյունավետ գործունեություն:

Սահմանադրության նորմերի անմիջական կիրառությունը կարող է զուգակցվել Սահմանադրությանը հակասող գործող իրավական ակտերի

կիրառությունից հրաժարման հետ: Այս դեպքում արդարադատություն իրականացնելիս դատարանը, գործը լուծող ակտ կայացնելիս, կարող է հրաժարվել իրավական այն ակտի կիրառումից, որը թեև տվյալ գործում ենթակա է կիրառման, բայց ակնհայտորեն հակասում է Սահմանադրությանը:

Ընդ որում, հարկ է նշել, որ սահմանադրական պահանջներին ակնհայտ հակասությունը կարող է կրել տարբեր բնութագրումներ: Այսպես, ըստ նորմատիվային ակտի ընդունման կարգի, եթե բացառապես օրենքով սահմանման ենթակա հարկը կամ պարտադիր այլ վճարը սահմանվել ու ներմուծվել են գործադիր իշխանության կամ այլ մարմնի ակտով, ապա դա նշանակում է, որ այդպիսի ակտով ուղղակիորեն սահմանվում է սահմանադրական այնպիսի պարտականություն, որը պետք է սահմանվեր միայն օրենքով: Օրինակ՝ 1997-1998 թվականներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված օրենքի ուժ ունեցող որոշումները «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների սահմանելու մասին», «Բնապահպանական վճարի դրույքաչափերի մասին» և այլն, կամ ներկայումս գործող «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գործողության մեջ դնելու մասին» ՀՀ Գերագույն խորհրդի 1994 թվականի փետրվարի 14-ին ընդունված որոշումը և այլն:

Հրաժարվելով կիրառել Սահմանադրության սկզբունքներին և նորմերին հակասող օրենքը՝ դատարանը պարտավոր է ըստ էության լուծել գործը՝ ելնելով օրենքի կամ իրավունքի անալոգիայից (համանմանություն), ի տարբերություն այն դեպքերի, երբ հնարավոր է սահմանադրական նորմերի անմիջական կիրառությունը: Բնականաբար, այստեղ կրկին կարող է հարց ծագել՝ իսկ դատարանը պարտավո՞ր է արդյոք Սահմանադրությանը ակնհայտ հակասող օրենքի սահմանադրականության հարցով դիմել սահմանադրական դատարան:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող են դիմել դատարանները՝ իրենց վարչություն գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը սահմա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նում է, որ սահմանադրական դատարան դիմում են դատարանները, եթե գտնում են, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված որևէ իրավական ակտի, որն ունի նորմատիվ բնույթ, դրույթը կամ դրույթները, որոնք ենթակա են կիրառման իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով, հակասում են Սահմանադրությանը:

Հիշատակված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանադրական դատարան դիմելը ընդամենը դատարանների հայեցողական լիազորությունն է, բնականաբար այստեղ խոսք չի կարող գնալ Սահմանադրությանը ակնհայտ հակասող նորմատիվ ակտի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմելու պարտականության մասին:

Միևնույն ժամանակ, եթե դատարանը գտնում է, որ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները սահմանափակվել են ոչ օրենքով, այլ իրավական այլ ակտով, ապա այդպիսի դեպքերում, կարծում ենք, որ վերջինիս սահմանադրականության հարցով դատարանի կողմից սահմանադրական դատարան դիմելը ոչ նպատակահարմար է այնքանով, որքանով ՀՀ Սահմանադրության 6-րդ և 83.5-րդ հոդվածներով ամրագրված դրույթների ուղղակի կիրառմամբ լուծվում են կոլիզիոն (բախումային) խնդիրները:

Այստեղ հիմնական բանավեճը պայմանավորված է ոչ այնքան սահմանադրական դատարան դիմելու լիազորության իրականացմամբ, որքան՝ պետական իշխանության համակարգում դատարանի անկախության դերակատարմամբ, առավել ևս, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով յուրաքանչյուրին երաշխավորվում է իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանություն:

Մեր կարծիքով՝ դատարանը չպետք է ղեկավարվի ձևական այն պահանջներով, որոնք որոշում են նրա իրավունքը կամ պարտականությունը Սահմանադրական դատարան դիմելու խնդրով: Սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ արդարադատություն իրականացնելիս առանցքային են համարվում այն խնդիրները, որոնք առնչվում են յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակների կենսագործման և այդ պաշտպանության միջոցների ապահովման հետ, ուստի, կարծում ենք,

որ սահմանադրական դատարան դիմելն անհրաժեշտ է, եթե դատավորի համար ակնհայտ է, որ իր կիրառած օրենքը (թեև ակնհայտորեն հակասում է Սահմանադրությանը) իրավակարգավորման համակարգում լայն կիրառում ունի ինչպես գործադիր իշխանությունների մարմինների, այնպես էլ՝ պաշտոնատար անձանց և կազմակերպությունների, իրավունքի այլ սուբյեկտների կողմից: Այս դեպքում, եթե նույնիսկ դատարանը հրաժարվել է կիրառել այդ օրենքը և ուղղակիորեն ղեկավարվել է Սահմանադրության նորմերով, ապա օրենքը շարունակում է գործել՝ առաջացնելով ոչ հավասար պայմաններ այն կիրառողների համար:

Պրակտիկայում հաճախակի են այն դեպքերը, երբ օրենքները կամ դրանցում առկա դրույթները գործում էին բացառիկ ակտիվորեն և այն էլ երկար տարիներ՝ չնայած այն բանին, որ հակասում էին Սահմանադրությանը և դրանց գործողությունը դադարեցվում էր միայն ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներից հետո:

Սահմանադրության նորմերի անմիջական կիրառությունը, իհարկե, դատական իշխանության անկախության երաշխավորման լրջագույն և գործուն մեխանիզմներից է: Այն ապահովում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը կոնկրետ իրադրություններում և, հակառակը, ի լրացում օրենսդրի կողմից ընդունված նորմատիվային կարգավորման, դատարանին և նրա որոշումներին հաղորդում է սահմանադրական կամ բարձրագույն նորմատիվային կարգավորիչի մակարդակ:

Հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման համակարգից այսպես կոչված «խտտան» օրենքի «հեռացման» մեխանիզմին մոտ ընթացակարգով են ղեկավարվում նաև ՀՀ դատարանները, երբ արդարադատություն իրականացնելիս հաշվի են առնում ՀՀ սահմանադրական դատարանների որոշումները կամ դրանցում արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, ըստ իրենց սահմանադրաիրավական բնութագրման, պարտադիր են բոլորի համար, վերջնական են, գործում են անմիջականորեն, ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, բողոքարկման ենթակա չեն և չեն կարող հաղթահարվել համանման օրենքի կրկնակի ընդունման ճանապարհով:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշում-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ների այդ հատկանիշներն ամրագրվել են ինչպես ՀՀ Սահմանադրությամբ (92, 100, 101, 102 և այլ հոդվածներ), այնպես էլ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով (61, 64, 68, 69 և այլ հոդվածներ): Ինչպես հետևում է Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի հիշատակված հոդվածների համակարգային առումով վերլուծությունից, վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այն իրավաբանական ուժը կորցնում է սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Սակայն այդ նորմատիվային ամրագրումը դեռևս չի կարող բավարար համարվել: Սահմանադրական դատարանի որոշումները՝ որպես իրավունքի աղբյուր, պետք է ունենան սահմանադրորեն ամրագրված իրենց ընդունման կարգը, էական բնութագրերը, ուժի մեջ մտնելու կարգը, հրապարակումը, կատարումը և ակտի այլ բաղադրիչներ, որոնք օժտված են նորմատիվության հատկանիշներով: Կարծում ենք, որ հատկապես գոյություն ունեցող անորոշության արդյունքում է, երբ բազմաթիվ իրավագետներ մինչև այժմ չեն ընդունում դատարանների կողմից իրավական ակտի գործողությունը դադարեցնելու իրավասությունը, և դա վերագրում են օրենսդիր և իրավաստեղծ այլ մարմիններին:

Գիտական շրջանակում առկա են տարբեր տեսակետներ այդ հարցի շուրջ: Այսպես՝ ակադեմիկոս Վ.Ս. Ներսիսյանը գտնում էր, որ դատարանն իրավունք ունի տալու նորմատիվային իրավական ակտի միայն իրավական որակավորումը (իրավական գնահատականը և բնութագիրը) և այն էլ այդ ակտի՝ Սահմանադրությանը, օրենքներին համապատասխանության կամ չհամապատասխանելու տեսանկյունից: Դատական մարմնի որոշումը Սահմանադրությանը, օրենքին հակասելու մասին կարող է դիտարկվել՝ որպես իրավասու իրավաստեղծ մարմնի կողմից այդ ակտը չեղյալ համարելու հիմք, բայց ոչ այն փոփոխելու համար: Նրա կարծիքով՝ սահմանադրությանը հակասող ակտի ուժը կորցնելը արդեն սահմանադրական հաստատում է, այլ ոչ թե դատարանի, որն իրավունք ունի տվյալ ակտը ճանաչել միայն Սահմանադրությանը հակասող՝

Սակայն, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները օժտված են ինքնաբավության հատկանիշով և դրանք չեն պահանջում մեկ այլ մարմնի որոշումների ընդունում: Նորմաստեղծ մարմինը չպետք է կրկնօրինակի սահմանադրական դատարանի ընդունած որոշմանը և չեղյալ համարի Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավական ակտը կամ դրա դրույթը: Այս դեպքում սահմանադրական դատարանը, պետության այլ նորմաստեղծ մարմինների հետ մեկտեղ, իր ընդունած որոշումների միջոցով մասնակցում է պետության օրինաստեղծ գործառույթի իրագործմանը²:

Օրենքի ամեն մի նոր հրապարակման ժամանակ, որի դրույթները ճանաչվել են Սահմանադրությանը հակասող, նշված նորմերը չեն կրկնվում, այլ ծանուցվում է, որ դրանք անվավեր են համարվել ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ: Այսպես օրինակ, չնայած այն հանգամանքին, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ եթե մինչև իրավական ակտի պաշտոնական վերահրատարակման կամ ոչ պաշտոնական հրատարակման օրը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից համապատասխան իրավական ակտը կամ դրա որևէ դրույթ ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող և անվավեր, ապա այդ ակտը հրատարակելիս կամ վերահրատարակելիս նշվում են տվյալ դրույթը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը, այնուամենայնիվ անհրաժեշտ է նշել, որ պաշտոնական ինկորպորացիան իրականացնելիս հիշատակված խնդիրը դեռևս համակարգային առումով իր վերջնական լուծումը չի ստացել:

Մինչև վերջերս ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կիրառման միասնական մեխանիզմներ չեն մշակվել: Շատ հարցերում դրանք պայմանավորված են որոշումների բնույթով: Այսպես, յուրաքանչյուր որոշում ունի իր (անհատական) կարգավորման առարկան, որը մի կողմից՝ պայմանավորված է կոնկրետ իրավական վիճակի կանոնակարգման անհրաժեշտությամբ, իսկ մյուս կողմից՝ մատնանշում է դատական տվյալ ակտի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իրավական հետևանքները: Այդ պատճառով սահմանադրական դատարանի որոշումների նորմատիվության ծավալը (իրավաբանական ուժը, իրավական հետևանքները) կարող են տարբեր լինել (ըստ գործի տեսակի, դրանց գործողությունը ժամանակի ընթացքում, տարածության մեջ և անձանց շրջանակում, ըստ դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումների, եզրակացությունների մակարդակի՝ համաիրավական, ոլորտային, առանձին ինստիտուտի շրջանակներում և այլն):

Անկասկած, դատարանի որոշման կիրառումը չի ենթադրում դրա կատարումն ապահովել հենց այն գործերի մասով, որոնք առիթ են հանդիսացել դատաքննության համար: Սահմանադրական դատարանը ընդունելով դրանք իր վարույթ՝ իրավական նորմերի սահմանադրականության կոնկրետ և վերացական վերահսկողության շրջանակում սահմանափակված չէ միայն դիմողի սահմանադրական իրավունքների պաշտպանության խնդրով:

Այդպիսի որոշումների կատարման մեխանիզմում դատաքննության մասնակիցների նկատմամբ կիրառվում են ճյուղային դատավարական նորմեր: Սակայն, սահմանադրական դատարանի որոշումների կիրառումը դուրս է գալիս դրանց կատարման ընթացակարգերի սահմաններից, քանի որ այդ որոշումների վերջնական և բոլորի համար պարտադիր լինելը նախատեսում է բոլոր դատարանների ու այլ իրավակիրառողների համար կոնկրետ պարտականություն, ինչը այդ որոշումներին հաղորդում է յուրահատուկ սահմանադրաիրավական բնույթ:

Գտնում ենք, որ սահմանադրական դատարանի որոշումների կիրառման ընթացակարգերը դատարանների կողմից պետք է դիտարկվեն որպես իրավական ակտերի սահմանադրականության խնդրով դատական վերահսկողության ձևերից մեկը: Նորմավերահսկման գործունեության մեխանիզմը ակնհայտ է՝ վեր հանել իրավական ակտի այսպես կոչված «խտտանությունը», թեկուզև սահմանադրական դատարանի ակտի հիման վրա ճանաչել Սահմանադրությանը հակասող և հիմնավորել այդ ակտի անվավեր լինելը:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների և իրավական դիրքորոշումների կիրառման մեկ այլ առանձնահատկության էությունն այն է, որ կոնկրետ գործով արդարադատություն իրականացնելիս այդ աղբյուրներն իրենց ազդեցությունն

են ունենում ոչ միայն Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմերի վրա, այլև ապահովում են իրավունքի և իրավական համակարգի զարգացումը:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Ակնհայտ է, որ Օրենքի նշված դրույթից հետևում է երկակի բնույթի պատասխանատվության առկայություն: Առաջին հերթին՝ սահմանադրական դատարանի որոշումը հասցեագրվում է օրենսդիրին և պետական իշխանության այլ մարմիններին, որոնք ընդունում են նորմատիվային ակտեր և պարտավոր են դրանք չեղյալ հայտարարել կամ համապատասխանեցնել սահմանադրական դատարանի որոշումներին: Այսինքն՝ ակնհայտ է դատարանի որոշման կարգավորիչ դերակատարությունն ու գերակայությունը հատկապես օրենքների նկատմամբ, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ դրանք օժտված են այսպես կոչված՝ «ստուգված» բնույթով, քանզի անցնում են սահմանադրական դատավարական ընթացակարգերով:

Մյուս կողմից, սահմանադրական դատարանը իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ՝ ձևավորված իրավակիրառական պրակտիկան («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդված): Այսինքն՝ իրավակիրառությունը ստանում է ուղղակի ազդեցության մի նոր աղբյուր, որն իր ներգործությունը տարածում է վիճարկված նորմի կարգավորման ոլորտ չներառվող բազմաթիվ իրավահարաբերությունների վրա:

Սահմանադրական դատարանի որոշմամբ որևէ նորմատիվային ակտի՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչումը չի նշանակում հրաժարվել տվյալ նորմերը կիրառել այն հասարակական հարաբերություններում, որոնք անմիջապես կարգավորվում են այդ նորմերով: Ընդհակառակը, սահմանադրական դատարանի որոշման իրավական հետևանքները ծնում են յուրաքանչյուր իրավակիրառողի, այդ թվում՝ դատարանների համար նոր պարտականություններ՝ հակասահմանադրական ճանաչված նորմեր կիրառելուց հրաժարվելու վերաբերյալ: Այդ երևույթը մասնագիտական գրականությունից հայտնի է «Սահմանադրա-

www.moj.am

կան դատարանի որոշումներով պայմանավորված ընդհանուր իրավասության դատարանների պարտականությունների սահմանների փաստացի ընդլայնում» անվանումով³:

Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ որևէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Հավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել նաև այդ դրույթները:

Հիշատակված նորմի վերլուծությունից հետևում է, որ դատարանները չպետք է կիրառեն այն նորմերը, որոնք ձևականորեն չեն անցել այսպես կոչված «որակագրկման» սահմանադրական ընթացակարգ, սակայն փոխկապակցվածության պայմանով և ճանաչվել են Սահմանադրությանը հակասող ու անվավեր: Բնականաբար, կոնկրետ գործի շրջանակում չափազանց բարդ խնդիր է վեր հանել փոխկապակցված այդպիսի ակտերի շրջանակը հատկապես իրավական ակտերի ողջ համալիրում:

Դա բավական բարդ խնդիր է և նրա որոշումը զգալիորեն տարբերվում է իրավակիրառման մյուս ընթացակարգերից, հատկապես, երբ դա վերաբերում է դատարաններին: Այսպես օրինակ, սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 8-ի ՄԳՈ-690, 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՄԳՈ-765 և 2009 թվականի հուլիսի 28-ի ՄԳՈ-818 որոշումների համաձայն՝ քաղաքացիական և քրեական դատավարությունում վճարելի բողոքն առանց պատճառաբանության վերադարձնելու վերաբերյալ դրույթները ճանաչվել են Սահմանադ-

րությանը հակասող ու անվավեր: Սակայն այդ որոշումների ընդունման ժամանակ բաց էր մնացել հիշյալ դրույթների հետ փոխկապակցված ՀՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նույնաբովանդակ դրույթը, ինչը, կարծում ենք, նույնպես կիրառելի չպետք է լինի դատարանների կողմից՝ անկախ այն հանգամանքից, թե վերջինս ձևականորեն չի անցել այսպես կոչված «որակագրկման» ընթացակարգ:

Չնայած այն հանգամանքին, որ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելու գործընթացը կրում է առավելապես ստուգիչ բնույթ, քան իրավակիրառական, այնուամենայնիվ, սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա են լուծվում սոցիալական բազմաթիվ վեճեր: Ընդ որում, դատարանները, հիմնվելով սահմանադրական դատարանի այդ որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների կամ սահմանադրահիրավական կողմնորոշիչների վրա, ինքնուրույն են իրականացնում օրենսդրությունում դրանց կիրառման կամ իրավական պրակտիկայի օրենսդրականացման միջոցառումներ, ինչն ակնհայտորեն հաստատում է դատական իշխանության անկախության իրացման շրջանակները նաև մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության ընթացակարգերում:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների և այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների կիրառումը կարող է դիտարկվել որպես դատական սահմանադրական վերահսկողության ձև, քանի որ դրանց հիման վրա դատարաններն ինքնուրույն են որոշում այս կամ այն ակտի դրույթների սահմանադրականության հարցերը: Իսկ դա դատարանների՝ որպես պետական իշխանության ինքնուրույն մարմինների անկախ գործունեությանը որակապես նոր ոճ է հարորդում արդարադատություն իրականացնելիս:

¹ Տե՛ս Нерсесянц В.С. Суд не законодательствует и не управляет, а применяет право. // Судебная практика как источник права.- М., 1997. С. 38-40.

² Տե՛ս Гаджиев Г.А. Racio decidendi в постановлениях Конституционного Суда России. // Конституционное правосудие. Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии. 1999. N 2(4). С. 12-13.

³ Տե՛ս Гаджиев Г.А., Пепеляев С.Г. Предприниматель – налогоплательщик - государство. Правовые позиции Конституционного Суда РФ. М., 1998. С. 71-72.

ՍԱՄՎԵԼ ՄԵԼԻՔՅԱՆ

Հայաստանում Ֆրանսիական համալսարան հիմնադրամի մագիստրոս, ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչության աշխատակից



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ¹ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ
ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ**

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընկերությունը պարտավոր է պատասխանատվություն ստանձնել իր պարտավորությունների դիմաց և բավարարել իրեն ներկայացված օրինական պահանջները: Ընկերության մասնակիցները (բաժնետերեր) (այսուհետ՝ մասնակից), որոնք ձեռք են բերում մասնակցություն ընկերությունում, գիտակցում են այն ռիսկը, որ եթե ընկերությունը ճանաչվի պատասխանատու, իրենք կարող են կորցնել իրենց ներդրումները կամ դրանց մի մասը: Ամեն դեպքում ընկերությունն իրավունքի ինքնուրույն սուբյեկտ է, որը պատասխանատու է միայն իր պարտավորությունների համար:

Նախադեպային իրավունքի համակարգի որոշ երկրների դատարանների կողմից մշակվել և կիրառվում են սահմանափակ պատասխանատվության սկզբունքի մի խումբ դատավարական բացառություններ: Այս բացառությունները թույլ են տալիս «մի կողմ դնել» իրավաբանական անձի ինքնուրույնությունը², և պատասխանատվության ենթարկել մասնակիցներին, որոնք օգտագործում են ընկերությունն իրենց պայմանագրային կամ օրենսդրական պարտականությունների կատարումից խուսափելու նպատակով:

Չնայած ընկալման համար այս սկզբունքը բավականին պարզ է, սակայն ամենափորձառու իրավաբաններն անգամ բացահայտում են, որ գտնվում են անորոշության մղձավանջում: Բազմաթիվ հեղինակներ տարբեր ժամանակաշրջաններում նշել են, որ դժվարանում են որևէ ուղղորդող «գիծ» գտնել բազմաթիվ դատարանների կողմից ստեղծված նախադեպային լաբիրինթոսում, քանի որ կայացված որոշումները հաճախ հիմնված են ոչ թե իրավունքի նորմերի, այլ արդարության և կարեկցանքի սկզբունքների վրա:

Ինչպես աշխարհի բոլոր երկրներում Հա-

յաստանում ևս իրավաբանական անձը կարող է օգտագործվել ոչ իրավաչափ նպատակներ կենսագործելու դրդումներով: Նշված խնդրի լուծման և ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել միջազգային համապատասխան փորձը: Նշված երևույթն առավել խորն ընկալելու նպատակով սույն հետազոտության շրջանակներում պատասխատվում ենք ուսումնասիրել տարբեր երկրների, մասնավորապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Կանադայի (Քվեբեքի) փորձը: Նշված երկու համակարգերի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջիններս զարգացման բարձր մակարդակ, կայացած իրավական համակարգ և ավանդույթներ ունեցող երկրներ են, և միաժամանակ հանդիսանում են 2 հիմնական ժամանակակից իրավական համակարգերի՝ մայրցամաքային և անգլոսաքսոնական իրավական ընտանիքների ներկայացուցիչներ³:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում, 20-րդ դարի 30-ական թվականներից սկսած, առկա է ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության վերաբերյալ դատական նախադեպերի հսկայական շտեմարան: Դատական նախադեպերի վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ ամերիկյան դատարանները անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու համար անպայման պահանջում են ներքոհիշյալ քննարկվող 2 կամ ավելի չափանիշների առկայությունը:

Դրանցից առաջինը «Խառնված գործառույթների» չափանիշն է: առնված գործառույթների մասին կարող ենք խոսել այն դեպքերում, երբ ընկերության և նրա սեփականատերերի գործա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ռույթները միախառնված են, և հաճախ դժվար է վերջիններիս միջև տարբերակում մտցնել: Դուստր և մայր ընկերությունների համատեքստում գործերի միախառնվածության արդյունքում հաճախ դուստր ընկերությունը չի ունենում սեփական գործունեության ծրագիր, քանի որ նրա բոլոր գործողությունները թելադրվում և վերահսկվում են մայր ընկերության կողմից:

Դատարաններն առավել հեշտությամբ են ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկում այն ընկերություններում, որտեղ չեն պահպանվում կորպորատիվ ձևականությունները: Նման ձևականությունների օրինակ են արժեթղթերի թողարկումը, ընկերության ղեկավարների ընտրությունը, վարկերի և այլ գործարքների փաստաթղթավորումը: Կորպորատիվ ձևականությունների չպահպանումը կարող է վկայել այն մասին, որ առկա է գործառույթների անթույլատրելի միախառնվածություն կամ ընկերության վերածումը «սոսկ գործիքի»:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու հիմք կարող է հանդիսանալ նաև «Կապիտալի ադեկվատության» չափանիշը: Ըստ պրոֆեսոր Բալենթայնի՝ «Եթե կապիտալը չնչին կամ անիրական է նախատեսվող գործունեության կամ կանխատեսվող կորստի ռիսկերի համեմատ, ապա դա կարող է հիմք հանդիսանալ ընկերությանն ինքնուրույն սուբյեկտի առավելությունից զրկելու համար»⁴:

Ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու հարց է առաջանում նաև բոլոր այն դեպքերում, երբ դատարանը պարզում է, որ ընկերության գոյությունը պայմանավորված է բացառապես պայմանագրի կամ օրենքի շրջանցմամբ, կամ ընկերության օգտագործումը հետապնդում է խարդախություն իրականացնելու նպատակ:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու համար կիրառվում է մասնակից չհանդիսացող պարտատերերի օգտին մասնակիցների պահանջների սուբորդինացիայի տեսությունը, որը կոչվում է նաև *Deep Rock* տեսություն⁵: Ընկերության սնանկության կամ լուծարման հանձնաժողովի գործունեության ժամանակ մասնակից չհանդիսացող պարտատե-

րերը կարող են հիշատակել այս տեսությունը՝ պահանջելով դատարանից պարտադրել մասնակից-պարտատերերին «անցնել հերթի վերջ»: Հերթի վերջում մասնակից-պարտատերերը չեն ստանա կամ կստանան փոքր գումարներ, որի արդյունքում շահում են մասնակից չհանդիսացող պարտատերերը, քանի որ առկա գումարը բաշխվում է ավելի քիչ անձանց միջև:

Այժմ խոսենք ընկերության մասնակիցներին անձնական պատասխանատվության ենթարկելու կանադական փորձի մասին: Կանադան ժառանգել է 2 իրավական համակարգ՝ մայրցամաքային համակարգը ֆրանսիացիներից և անգլոսաքսոնական համակարգը անգլիացիներից:

Կանադայի բոլոր նահանգների իրավական համակարգերը, բացառությամբ Քվեբեքի, հիմնված են անգլոսաքսոնական իրավունքի վրա: Քվեբեքն ի սկզբանե եղել է ֆրանսիական գաղութ, որտեղ կիրառվել է մայրցամաքային իրավունքը: Քվեբեքի քաղաքացիական օրենսգիրքը նույնպես ամրագրել է իրավաբանական անձի ինքնուրույնությունը և որպես ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու շարժառիթ է դիտարկում մանիպուլյացիան և ընկերության ու նրա մասնակցի նույնականացման գաղափարը:

Անձնական գույքային պատասխանատվության ինստիտուտի կիրառման համար անհրաժեշտ է, որպեսզի ընկերության մասնակիցը մանիպուլյացիայի ենթարկի իրավաբանական անձին և չարաշահի վերջինիս տնտեսական նպատակը՝ խարդախության, իրավունքի չարաշահման կամ հանրային կարգի խախտման նպատակով՝ միաժամանակ վնաս պատճառելով այլ անձանց և բացառելով իր անձնական պատասխանատվությունը⁶:

Մանիպուլյացիան, որի արդյունքում կկիրառվի Քվեբեքի քաղաքացիական օրենսգրքի 371-րդ հոդվածը, կարող է իրականացվել երկու եղանակով: Առաջին դեպքում մասնակիցն օգտագործում է ընկերությունը՝ խարդախությունը, իրավունքի չարաշահումը կամ հանրային կարգի խախտումն օրինականացնելու նպատակով: Այս դեպքում ընկերությունն օգտագործվում է որպես վարագույր՝ ծածկելու համար իր մասնակիցների արարքները և անձնական վարքագիծը:

Երկրորդ դեպքում մասնակիցն օգտագոր-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ծում է ընկերությանը որպես միջնորդ և նրա միջոցով իրականացնում խարդախություն, իրավունքի չարաշահում կամ հանրային կարգի խախտում՝ բնականաբար խուսափելով անձնական պատասխանատվությունից: Հարկավոր է նաև, որպեսզի գործողությունն իրականացված լինի առավելապես հոգուտ բաժնետիրոջ, այլ ոչ թե՝ ընկերության:

Հայկական օրենսդրությունը ևս պարունակում է անձնական գույքային պատասխանատվության կիրառման իրավական բազա, մասնավորապես՝ խառնված գործառույթների կամ ընկերության և սեփականատերերի միջև միախառնվածության (ընկերության մանիպուլյացիայի հետևանքով) չափանիշների համատեքստում կարող ենք նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք կարող են հիմք ծառայել Հայաստանում ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու մեխանիզմի ներդրման համար: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձն ունի առանձնացված գույք, իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող, բացի այդ պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ:

Դրա հետ մեկտեղ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ հոդվածը սահմանում է. «Իրավաբանական անձն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Իրավաբանական անձի հիմնադիրը (մասնակիցը) պատասխանատու չէ իրավաբանական անձի, իսկ իրավաբանական անձը՝ իր հիմնադրի (մասնակցի) պարտավորությունների համար, բացառությամբ սույն օրենսգրքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ նախատեսված դեպքերի»: Ակնհայտ է դառնում, որ իրավաբանական անձի պարտավորությունների համար նրա հիմնադիրների պատասխանատվությունը բացառություն է ընդհանուր կանոնից: Սակայն ՀՀ օրենսդրությունը սահմանել է այդ անձանց սուբսիդիար պատասխանատվության դեպքեր ևս:

Ավելին օրենքի 96-րդ հոդվածը ընկերության կողմից մամուլում որոշակի տեղեկություններ

րի հրապարակման պարտականություն է սահմանում: Այս դրույթի շնորհիվ ապահովվում է ընկերության գործունեության թափանցիկությանը մի մասը, որն էլ բացառում կամ նվազեցնում է որոշ չափով ընկերության և սեփականատերերի միջև միախառնվածության գոյացման հավանականությունը: «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը ևս պարունակում է վերոհիշյալ դրույթներին համարժեք դրույթներ:

«Կորպորատիվ ձևականությունների չափապանում» չափանիշի շրջանակներում պետք է նշել, որ ՀՀ օրենսդրությունը պարունակում է բազմաթիվ դրույթներ, որոնք պահանջում են այս կամ այն կորպորատիվ ձևականության առկայություն: Այս բնագավառում քաղաքացիական օրենսգիրքը բովանդակում է մի շարք ընդհանուր դրույթներ և պահանջներ, ինչպես օրինակ՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածը, որում սահմանված է, որ իրավաբանական անձի հիմնադիր փաստաթուղթը նրա հիմնադիրների հաստատած կանոնադրությամբ սահմանվում են իրավաբանական անձի անվանումը, նրա գտնվելու վայրը, իրավաբանական անձի կառավարման կարգը, ինչպես նաև պարունակվում են համապատասխան տեսակի իրավաբանական անձանց համար օրենքով նախատեսված այլ տեղեկություններ: Կան նաև դրույթներ իրավաբանական անձի մարմինների ընտրության, նշանակման կարգի, անվանման և գտնվելու վայրի վերաբերյալ:

Ընկերության մասնակիցներին անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու բաղադրատարրեր են պարունակում նաև յուրահատուկ կարգավորում ունեցող «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը: Ինչպես «Բաժնետիրական ընկերությունների մասին», այնպես էլ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքներում նախատեսված է ընկերության կողմից որոշակի տեղեկատվության հրապարակում: Բնականաբար բանկերի համար տեղեկատվության այդ ցանկը փոքր-ինչ յուրահատուկ է՝ ելնելով նրանց գործունեության առանձնահատկություններից: Մասնավորապես «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ բանկերը պարտավոր են հա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մացանցում՝ բանկի տնային էջում, մշտապես հրապարակել՝

ա) բանկի ֆինանսական հաշվետվությունները և հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենը,

բ) օրենքով սահմանված ժամկետում՝ տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը,

գ) շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների պատճենները, ինչպես նաև բանկի շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ առկայության դեպքում,

դ) բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն,

ե) բանկի խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը և անձնական տվյալները:

Կորպորատիվ ձևականությունների պահանջները նույնպես բազմաթիվ են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում: Առաջին հերթին անդրադառնանք բանկի կանոնադրության նկատմամբ պահանջներին: Համաձայն վերը նշված օրենքի 20-րդ հոդվածի՝ կանոնադրությունը պետք է անպայման պարունակի՝ ա) բանկի լրիվ և կրճատ ֆիրմային անվանումը, բ) բանկի գտնվելու վայրը, գ) բանկի կազմակերպական-իրավական ձևը, դ) բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկի համար՝ տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի տեսակները (սովորական և արտոնյալ), քանակը և այլն:

Օրենքում հատակ ամրագրված են բանկի կառավարման մարմինների կազմավորման և գործունեության կարգը և իրավասությունները, բանկի ղեկավարների պատասխանատվությունը:

Հայաստանում բանկերի կապիտալացման հարցերը կարգավորվում են ինչպես «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Ավելի կոնկրետ օրենքի 44-րդ հոդվածը նշում է, որ ՀՀ կենտրոնական բանկը կարող է սահմանել բանկի կանոնադրական հիմնադրամի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը: Այսօր գործող և նոր ստեղծվող բանկերի կանոնադրական հիմնադրամը (կանոնադրական կապիտալը) պետք է լինի 50 մլն դրամ, իսկ ընդհանուր կապիտալը՝ 5 մլրդ դրամ:

«Պայմանագրի կամ օրենքի շրջանցում» և/կամ «Իմպերատիվ նորմի չկատարում» չափա-

նիշների հետ սերտորեն առնչվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով ամրագրված պատասխանատվության միջոցները, որոնք կիրառվում են օրենսդրության խախտումների համար վերը նշված օրենքի 7-րդ գլխում ամրագրված սկզբունքներին և ընթացակարգերին համապատասխան:

Բացի այդ, ինչպես «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով, այնպես էլ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով (հոդված 39-39⁶) նախատեսված են խոշոր գործարքների, շահագրգռվածության առկայությամբ և բանկի հետ կապված անձանց հետ գործարքների կնքման համար հատուկ ընթացակարգեր և որոշ սահմանափակումներ: Այս դրույթները սերտորեն կապված են նաև «ակտիվների յուրացում» չափանիշի հետ:

Բանկի մանիպուլյացիայից խուսափելու նպատակով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է, որ արգելվում է որևէ կերպ ներգործել բանկի ղեկավարների վրա՝ նրանց պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում կամ միջամտել բանկի գործունեությանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքի տնտեսական հանցագործություններ բաժնում տեղ գտած մի շարք հանցանքներ կարևոր նշանակություն ունեն մեր կողմից իրականացվող ուսումնասիրության համար: Ուշադրության է արժանի օրենսգրքի 178-րդ հոդվածը, որը վերաբերում է խարդախությանը և սահմանում է, որ խարդախություն է համարվում խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունքի ձեռք բերումը:

Կարևորվում են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 193 և 194 հոդվածները, որոնք վերաբերում են կանխամտածված սնանկությանը և կեղծ սնանկությանը: Մասնավորապես՝ հոդված 193-ի համաձայն՝ կանխամտածված սնանկությունը պարտապանի հիմնադիրների (մասնակիցների) կամ նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի, հավասարապես՝ նաև անհատ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ձեռնարկատիրոջ կողմից անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը կամ դրանց չափի ավելացումն է՝ սեփական կամ այլ անձանց շահերից ելնելով, և եթե պարտապանին կամ պարտատերերին պատճառվել է խոշոր վնաս:

Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածն էլ իր հերթին վերաբերում է յուրացնելուն կամ վատնելուն, այսինքն՝ հանցավորին վստահված ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությանը:

Մինչ առաջարկի ներկայացումը, հարկ ենք համարում փոքր-ինչ կանգ առնել՝ ամփոփելու Հայաստանում անձնական գույքային պատասխանատվության մեխանիզմի կիրառման փորձի արդյունքում ծագելիք պոտենցիալ խնդիրները: Խընդրահարույց կարելի է համարել անձնական գույքային պատասխանատվության մեխանիզմի կիրառման հետևյալ ասպեկտները և հետևանքները՝

- սահմանափակ պատասխանատվության
- անտեսում - հոգեբանական խնդիրներ,
- անհատների անձնական գույքի բռնազանձում,
- կիրառումը դատական մարմինների կողմից.
- նախադեպային իրավունքի մշակույթի և ավանդույթների բացակայություն,
- հակասություն գործող օրենսդրության հետ:

Հիմնվելով իրականացված միջազգային փորձի ուսումնասիրության վրա և հաշվի առնելով հայաստանյան իրադրության վերլուծությունը՝ հանգում ենք այն եզրակացությանը, որը նպատակահարմար չէ այս կամ այն մոդելի անփոփոխ տարբերակի ներդրումը, քանի որ թե՛ ամերիկյան և թե՛ կանադական մոդելը պարունակում են բաղադրատարրեր, որոնք չափազանց բարդ են, կամ ասենք՝ ծայրահեղ տեղայնացված, հանգամանքներ որոնք վերջիններիս ներդրումը Հայաստանում դարձնում են անհնար կամ անիրատեսական: Մինևույն ժամանակ, երկու երկրներում ձևավորված փորձը և առաջ քաշված լուծումները պարունակում են հայաստանյան իրավական համակարգի համար կենսական նշանակության տարրեր:

Հետևաբար, մենք առաջարկում ենք երկու մոդելներից միահյուսված տարբերակ՝ «Հայկական մոդելը», որը կհետևի ամերիկյան և կանադական փորձին և անձնական գույքային պատասխանատվության

ենթարկելու հիմք հանդիսացող չափանիշները կամրագրի քաղաքացիական օրենսգրքում: Նշված չափանիշների հավաքագրման գործում կարևոր տեղ պետք է հատկացնել անկախության 15 տարիների ընթացքում կուտակված հայկական փորձին:

Ավելին, ամերիկյան փորձը պարունակում է մեր հետաքրքրությանն արժանացած մեկ այլ տեսություն ևս: Խոսքը Deep Rock տեսության մասին է, որը մի շարք չափանիշներով մոտ է անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու տեսությանը: Վերոհիշյալ տեսության կիրառման ցանկության հիմնական շարժառիթը «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված դրույթն է: Մասնավորապես նշված հոդվածի համաձայն՝ լուծարային միջոցների հաշվին բանկի պարտավորությունները մարման երկրորդ հերթում են այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո⁷: Բացի այդ, Deep Rock տեսությունն առավել հեշտ է կիրառել, քանի որ այն առաջացնում է պակաս ծայրահեղ հետևանքներ: Այն փաստը, որ քննարկվող 2 տեսությունների կիրառման չափանիշները միանման են, կհեշտացնի վերջիններիս միաժամանակյա ներդրումը Հայաստանի ֆինանսական համակարգում⁸:

Վերադառնալով կիրառման քննարկված խնդիրներին՝ հարկ է նշել, որ սահմանափակ պատասխանատվության անտեսումը, ինչպես ցույց է տալիս տասնյակ տարիների միջազգային փորձը, չի առաջացրել որևէ շոշափելի բացասական հետևանք՝ կապված ընկերություններում ներդրումների կատարման ցանկության հետ, և կարծում ենք, որ Հայաստանը բացառություն չպետք է կազմի:

Դատական մարմինների կողմից անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու տեսության կիրառումը, իրոք, որոշակի աստիճանի դժվարություններ կարող է ստեղծել, այն պարզ պատճառով, որ Հայաստանում բացակայում են նախադեպային իրավունքի մշակույթը և ավանդույթները: Սակայն այս խնդիրը նույնպես անլուծելի չէ. Հայաստանի Հանրապետության

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

օրենսդիր մարմինն ընդունել է նոր դատական օրենսգրքը, որն արդեն իսկ նախատեսում է նախադեպային իրավունքի որոշ ինստիտուտների ներդրումը: Բացի այդ, Հայաստանում և նրա սահմաններից դուրս մասնագիտական վերապարաստումները, ինչպես նաև փորձի փոխանակման հնարավոր այլ տարբերակները բազմաթիվ են: Ինչ վերաբերում է գործող օրենսդրության և մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հետ հակասություններին, ապա վերջիններս մեխանիկորեն կվերանան «հայկական մոդելի» ընդունման պարագայում, քանի որ այն հիմնված է լինելու հենց քաղաքացիական օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների և նորամուծությունների վրա:

Ընդհանուր առմամբ, մեր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ դիտարկումների. անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու տեսությունը դատական պրակտիկայի արդյունք է, ծնունդ է առել նախադեպային իրավունքից և հիմնված է արդարության և կարեկցանքի սկզբունքների վրա: Բախվում ենք սպառնիչ, միանշանակ և միատեսակ չափանիշների բացակայության փաստին, սակայն օգտվում

հսկայական և երկարատև միջազգային փորձի առկայությունից: Հատկանշական է նաև, որ հիմնականում դատարանները միտված են պահպանելու սահմանափակ պատասխանատվության սկզբունքը և անձնական գույքային պատասխանատվությունը կիրառում են որպես պատասխանատվության բացառիկ միջոց:

Ներկայումս Հայաստանն ունի որոշակի օրենսդրական բազա, որը կարող է լրացուցիչ հեմարան ծառայել անձնական գույքային պատասխանատվության և Deep Rock տեսությունների ներդրման գործընթացում: Եզրափակելիս կուզենայինք մեկ անգամ ևս նշել, որ անձնական գույքային պատասխանատվության ենթարկելու տեսությունը, որն ուղղված է «իրական» սեփականատերերի բացահայտելուն ու վերջիններիս պատասխանատվության ենթարկելուն, ի գործ է զայել համակարգային որոշ ռիսկեր: Ինչ վերաբերում է կիրառման բարդություններին, ապա մանրամասն ու քրոնաջան տեղայնացման և տեսությունը հայկական իրականության պահանջներին համապատասխանեցնելու պարագայում կբացատվեն անհաղթահարելի դժվարությունները:

¹ Տե՛ս Սույն հետազոտության մեջ ընկերություն ասելով՝ հասկանում ենք բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին:

² Տե՛ս Ինքնուրույն իրավաբանական անձի, այսինքն՝ սահմանափակ պատասխանատվության գաղափարն ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդված):

³ Տե՛ս Հարկ է նշել սակայն, որ Քվեբեքը մաքուր մայրցամաքային համակարգի ներկայացուցիչ է, քանի որ այն ենթարկվել է անգլոսաքսոնական ուժեղ ազդեցությունների:

⁴ Տե՛ս BALLANTINE H., *Ballantine on Corporations*, 1946, 303

⁵ Տե՛ս Տեսությունն այս անունը ստացել է Deep Rock Oil Company-ի շնորհիվ, մի դուստր ընկերություն, որը մասնակցում էր *Taylor v. Standard Gas & Elec. Co.* գործին:

⁶ Տե՛ս BALLANTINE H.W. «*Separate Entity of Parent and Subsidiary Corporations*», (1925) 14 Calif. L. Rev. 12, 19.

⁷ Տե՛ս Բացառությամբ պարտատիրոջ և ՀՀ Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի:

⁸ Տե՛ս Գլուխ 1, Բաժին 1, Ենթաբաժին 1, §6:

ԼԻԼԻԹ ԶԱՄԱԼՅԱՆ

ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի երկրորդ տարվա ասպիրանտ (քաղաքացիական իրավունքի ամբիոն, միջազգային մասնավոր իրավունքի գծով)



**ՏԵՍԱԶԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐԸ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության գոյության անհրաժեշտ նախադրյալներից է ներդաշնակ և ճկուն նյութական և դատավարական օրենսդրության ձևավորումը, որը բխում է հասարակական հարաբերությունների զարգացման օրինաչափություններից ու հասարակական պահանջմունքներից և ամրագրում է արդի ժամանակաշրջանում ակտուալ համարվող ինստիտուտները: Նմանատիպ ինստիտուտներից է նաև տեսաձայնագրությունների և լուսանկարահանումների կատարումը, որի օրենսդրական կարգավորումը ՀՀ ճյուղային օրենսդրությամբ ներկայումս ոչ ամբողջական է իրականացվում: Գործող օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ գործող քաղաքացիական և վարչական դատավարության օրենսդրությունը հստակ չի նախատեսում տեսաձայնագրությունների և լուսանկարահանումների կատարման հիմքերը և կարգը, իսկ քրեական դատավարության ոլորտում խնդրառարկա հարցի կարգավորումը գրեթե բացակայում է:

ՀՀ բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի 18-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական ... իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին մասն ամրագրում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Նույն հոդվածի վերջին մասը նախատեսում է այն դեպքերը, երբ լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել, այլ կերպ ասած՝ երբ գործի դատական քննությունն իրականացվում է դռնփակ կարգով: Մասնավորապես, որպես նման դեպքեր՝ ՀՀ օրենսդիրը նախատեսում է հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումները:

ՀՀ Սահմանադրության վերոշարադրյալ պահանջներն ուղղակիորեն արտացոլված են նաև ընթացիկ դատավարական օրենսդրության մեջ, որը կարգավորում է գործերի դռնբաց և դռնփակ քննության կարգը համապատասխան իրավունքի ճյուղերի ոլորտներում:

Գործի դատական քննության արդյունավետ միջոցներից մեկը, համաձայն ՀՀ օրենսդրության, հրապարակայնությունն է, որի անհրաժեշտ նախադրյալներից է տեսաձայնագրություններ և լուսանկարահանումներ կատարելու իրավունքը:

Տեսաձայնագրություններ և լուսանկարահանումներ կատարելու իրավունքը, որպես օրենքով ընձեռված հնարավորություն, համապատասխան անձի համար հանդես է գալիս որպես ապացույցի ձեռքբերման նախադրյալ: Սակայն ՀՀ օրենսդիրը դատավարական իրավունքի ոչ բոլոր ճյուղերում է նախատեսել նման հնարավորություն, իսկ որոշ դեպքերում այն արտացոլվել է խիստ սահմանափակ բնույթով:

Տեսաձայնագրությունների և լուսանկարահանումների կատարման շրջանակները ՀՀ դատավարությունում որոշելու համար, նախ և առաջ, անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրել դատավարական իրավունքի համապատասխան ճյուղերի նորմերը, ապա կատարել համառոտ իրավահամեմատական վերլուծություն, ինչից պարզ է

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դարձել, որ օրենքի անկատարությունը բնորոշ է ոչ միայն ՀՀ իրավական համակարգին:

Մասնավորապես, մեր ուշադրության կենտրոնում են գտնվել ստորև շարադրված հետևյալ հարցերը.

- արդյո՞ք գործերի դատական քննության ընթացքում թույլատրվում է կատարել տեսագրություններ, ձայնագրություններ և լուսանկարահանումներ,

- ի՞նչ նախապայմանների առկայության դեպքում է կարելի օգտվել վերը նշված դատավարական իրավունքներից,

- արդյո՞ք դատարանը պարտավոր է յուրաքանչյուր անձի թույլ տալ օգտվելու վերոնշյալ դատավարական իրավունքներից,

- արդյո՞ք տեսագրությունները, ձայնագրությունները և լուսանկարները, ՀՀ գործող օրենսդրության համաձայն, հանդիսանում են ապացույցներ, և, եթե այո, ի՞նչ բնույթ ունեն դրանք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն¹ «Գործին մասնակցող անձինք և դռնբաց դատական նիստին ներկա գտնվողներն իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն և ձայնագրություն: Դատական նիստի կինո և լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով ու հեռուստատեսությամբ, կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ գործը քննող դատարանի թույլտվությամբ»:

Հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ դատական նիստի տեսաձայնագրումը և լուսանկարահանումը կարող են կատարվել բացառապես հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

- ա) դռնբաց դատական նիստի ընթացքում,
- բ) կողմերի կարծիքը լսելով և նրանց համաձայնությունն ստանալով,

գ) դատարանի թույլտվությամբ (ընդ որում՝ թույլտվությունը դատարանի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը): Հատկանշական է, որ տեսաձայնագրություններ և լուսանկարահանումներ կատարելու դատավարական իրավունքից օգտվելու թվարկված պայմանների շարքում «դատարանի թույլտվությունը» կարևորագույն և առաջնային նախապայման է:

Ուստի, եթե գործով կողմերից առնվազն մեկն առարկում է խնդրո առարկա գործողության դեմ՝ ներկայացնելով իր պատճառաբանությունները,

ապա դա համապատասխան գործողությունը կատարելու վերաբերյալ միջոցառությունը մերժելու հիմք է հանդիսանում:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ դատական նիստի սղագրությունը, ձայնագրությունը կամ նկարահանումը կարող է կատարվել նիստին ներկա գտնվող յուրաքանչյուր անձի կողմից, այդ թվում՝ նրա, ով դատավարության մասնակից չէ: Դա նշանակում է, որ նման հնարավորությունից կարող են օգտվել նաև լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչները:

Հատկանշական է, որ զանգվածային լրատվության ներկայացուցիչների մասնակցությունը ինքնին դեռևս չի վկայում նրանց միաժամանակ թե՛ տեսագրություններ, թե՛ ձայնագրություններ և թե՛ լուսանկարահանումներ կատարելու հնարավորություն ընձեռելու մասին: Օրինակ՝ դատարանը կարող է թույլ տալ ՋԼՄ ներկայացուցիչներին ներկա գտնվելու գործի դատական քննության նիստին, սակայն միաժամանակ կարող է սահմանափակել վերոնշյալ իրավունքներից օգտվելը: Առաջին հայացքից, թվում է, թե դա անտրամաբանական է, քանի որ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով ամրագրված՝ «զանգվածային լրատվություն» և «լրագրող» հասկացությունների բնորոշումներից կարելի է բխեցնել անսահմանափակ թվով անձանց համար հասանելի տեղեկատվություն փնտրելու, հավաքելու, ստանալու, պատրաստելու, խմբագրելու և տարածելու նախապայմանները: Ու, թեև Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ է եղել բավականաչափ միջոցների տեղեկատվության ազատության սկզբունքի պահպանման համար, սակայն կան նաև ոչ պակաս կարևոր այլ արժեքներ, որոնք չեն կարող անտեսվել որևէ ֆիզիկական, իրավաբանական անձի, պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից: Այսպես՝ եթե անգամ համապատասխան գործը «զաղտնիք պարունակող չի համարվում» և ենթակա չէ քննության դռնփակ կարգով, դատարանը, գտնելով, որ գործի քննության ընթացքում ՋԼՄ միջոցների կիրառման հետևանքով կարող է ոտնահարվել դատավարության որևէ մասնակցի արժանապատվությունը կամ դա կարող է բացասական ազդեցություն ունենալ մարդկային արժեքների վրա, լիովին իրավասու է սահմանափակել նման գործողության իրականացումը: Այս առնչությամբ, թերևս, տեղին է հիշատակել ՀՀ Սահմանադրության 3-րդ և 14-րդ հոդվածները, համաձայն որոնց՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»:

Իսկ ինչպե՞ս վարվել, երբ տեսաձայնագրությունները և/կամ լուսանկարները ձեռք են բերվել առանց դատարանի թույլտվության: Այդ կապակցությամբ հնարավոր է պատկերացնել մի քանի իրավիճակ: Առաջին դեպքում, դիցուք, համապատասխան անձն ընդհանրապես չի միջնորդել խնդրո առարկա գործողությունների կատարման թույլտվություն ստանալու համար: Բնական է, որ դա ոչ միայն հանդիսանում է դատավարական իրավունքի պահանջների խախտում, այլև ոտնահարում է դատավարության մասնակիցների իրավունքները և օրինական շահերը: Այստեղից կարելի է հանգել միակ տրամաբանական հետևության՝ առ այն, որ խնդրո առարկա գործողությունների հետևանքով ձեռք բերված նյութերը չեն կարող դիտվել որպես ապացույց:

Երկրորդ դեպքում դատարանը կարող է համապատասխան անձին թույլ տալ օգտվելու իր դատավարական իրավունքներից մասնակիորեն (միայն գործի քննության մի հատվածի ընթացքում կամ կիրառելով առանձին զանգվածային լրատվության միջոցներ): Այս առումով, խնդիր կարող է ծագել միայն այն դեպքում, երբ համապատասխան անձը փորձի օգտագործել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել դատարանի կողմից որոշված սահմաններից դուրս: Ելնելով ՀՀ օրենսդրի տրամաբանությունից՝ դրանով ևս կխախտվի ապացույցների թույլատրելիության պահանջը, քանի որ ձեռք են բերվել օրենքի պահանջների խախտմամբ: Այդ մասին է վկայում նաև ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի երկրորդ մասը, համաձայն որի՝ «Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը»:

Առավել հետաքրքրաշարժ է երրորդ դեպքը, երբ համապատասխան անձը միջնորդում է դատարանին՝ թույլ տալու կատարել տեսաձայնագրություններ և/կամ լուսանկարահանումներ, սակայն դատարանը, առանց բավարար պատճառաբանությունների, մերժում է կողմի միջնորդությունը՝ դրանով իսկ նրան զրկելով ապացույց ձեռք բերելու հնարավորությունից: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի երկրորդ մասն իրենդեմ ապացույցների շարքում հիշատակում է նաև լու-

սանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները: Սակայն, ինչպես ապացույցների այլ տեսակների դեպքում, դրանց ևս ներկայացվում են ապացույցների թույլատրելիության և վերաբերելիության պահանջները: Միաժամանակ, կողմին ապացույց ձեռք բերելու հնարավորությունից զրկելը հանդիսանում է գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության խախտում, ինչը չի կարող վեճի արդարացի և ճիշտ լուծման համար անհետևանք մնալ: Ստացվում է, որ այս առնչությամբ չկա որևէ մարմին, որն իրավասու է հսկողություն իրականացնել «դատարանի հնարավոր կամայականությունների նկատմամբ» կամ վերացնել նրա կողմից թույլ տրված խախտումները, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում խնդրո առարկա հարցերի վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշման բողոքարկման հնարավորություն: Գ-տնում ենք, որ իրավիճակը շտկելու նպատակով անհրաժեշտ է մշակել «դատարանի վարքագծին վերաբերող» որոշակի չափորոշիչներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, չի ամրագրում յուրաքանչյուր անձի կողմից դատական նիստի տեսաձայնագրման և լուսանկարահանման իրավունքը՝ այն վերապահելով միայն քրեական հետապնդման մարմիններին և դատարանին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ մասը սահմանում է. «Դատավարական գործողություններ իրականացնելիս կարող են կատարվել սղագրում, լուսանկարահանում, կինոնկարահանում, ձայնագրում և տեսագրում: Լուսանկարչական նեգատիվները և լուսանկարները, կինոժապավենները, դիապոզիտիվները, հարցաքննության ձայնագրությունը, տեսաերկերը, համակարգչային տեղեկատվության կրիչները, գծագրերը, պլանները, ծեփապատճենները, հետքերի դրոշմները, որոնք կազմվել կամ պատրաստվել են դատավարական գործողության ընթացքում, կցվում են քրեական գործին»:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Արձանագրությունում նշվում են տեղեկություններ դատավարական գործողության ընթացքում կիրառված տեխնիկական միջոցների, դրանց օգտագործման կարգի և պայմանների, այն օբյեկտների, որոնց նկատմամբ տեխնիկական միջոցները կիրառվել են, և ստացված արդյունքների, ինչպես

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նաև մասնակիցներին տեխնիկական միջոցների կիրառման մասին նախազգուշացնելու վերաբերյալ»:

Հետևապես, քրեադատավարական գործողություններ իրականացնելիս (ինչը հավասարապես վերաբերում է թե գործի մինչդատական վարույթին և թե դատարանում գործի քննության իրականացմանը) դրանց ընթացքը վարույթն իրականացնող մարմնի կողմից կարող է արձանագրվել նաև համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ, սակայն միայն դատավարության մասնակիցներին նախազգուշացնելու պարագայում:

Այսպիսով, թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ամրագրում է առանձին դատավարական գործողությունների ընթացքում տեսաձայնագրման և լուսանկարահանման հնարավորությունը², այն ուղղակիորեն իրավունք չի վերապահում գործի քննության դատական նիստը տեսաձայնագրման և նկարահանման ենթարկել³:

Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ գլուխը տեսաձայնագրությունների և լուսանկարների՝ որպես ապացույց որևէ տեսակի վերաբերյալ որևէ հիշատակում չի պարունակում, ուստի դրանք քրեական դատավարության շրջանակներում ապացույց հանդիսանալ չեն կարող: Դա, առնվազն, տարօրինակ է, քանի որ ՀՀ օրենսդիրը մի դեպքում նախատեսում է որ համապատասխան դատավարական գործողությունների արդյունքները, որոնք կարող են հանդիսանալ որպես ապացույցներ, կարող են արձանագրվել, մյուս դեպքում այդ «արձանագրությունները» ապացույց չի դիտում, այն դեպքում, երբ դրանք հանդես են գալիս «ապացույցներն ամրագրող ապացույցներ»: Գտնում ենք, որ ստեղծված իրադրությունը խիստ հակասում է արդար դատաքննության իրավունքի պահանջին և շտկման կարիք ունի: Առաջարկում ենք նախատեսել ընթացակարգ, համաձայն որի՝ քրեական գործերով դռնբաց դատական նիստերի ընթացքում կարող են կատարվել կինո և լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև՝ հեռարձակում ռադիոյով ու հեռուստատեսությամբ՝ պահպանելով դատավարական իրավունքի պահանջները, այլոց իրավունքները, օրինական շահերը, պատիվը, արժանապատվությունը և այլ մարդկային արժեքներ:

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի՝ 2008թ. ապրիլից մինչ 2009թ. հուլիսն ընկած ժամա-

նակահատվածի վերաբերյալ Հայաստանում «Դատավարությունների դիտարկում» նախագծի վերջնական զեկույցի⁴ ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ քրեական գործերի քննության ընթացքում հիմնական խախտումներն արձանագրվել են արդար դատաքննության, կողմերի հավասարության, ապացույցների վերաբերելիության և անընդունելիության առնչությամբ: Չեկույցում արձանագրված խախտումները⁵ վկայում են առաջին հերթին ՀՀ քրեադատավարական օրենսդրության անկատարության մասին, որի շտկման քայլերից մեկն էլ կարող է լինել խնդրո առարկա հարցի օրենսդրական կարգավորումը:

Առավել հետաքրքիր կարգավորում է նախատեսում ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ ՎԴՕ): Վարչական իրավախաբերությունների քննության կարգը ընդհանուր առմամբ նույնական է քաղաքացիադատավարական կանոններին՝ այն առանձնահատկություններով, որոնք պարունակվում են ՀՀ ՎԴՕ-ում: Մասնավորապես, ընդհանուր կանոնները տարածվում են դատական նիստի արձանագրման հարաբերություններին⁶: Ինչ վերաբերում է տեսաձայնագրման և լուսանկարահանման իրավունքին, ապա դատական նիստի կարգը սահմանող վարչական դատավարական նորմն այդ մասին լռում է:

Անդրադառնալով տեսաձայնագրությունները և լուսանկարները որպես ապացույց դիտելու հանգամանքին՝ հարկ է նշել, որ վարչական դատավարությունում այս առնչությամբ դրսևորվում է երկակի մոտեցում: Ելնելով ՀՀ ՎԴՕ 47-րդ, 48-րդ և 49-րդ հոդվածների բովանդակությունից՝ դրանք դիտվում են թե՛ որպես ուղղակի ապացույցներ (իրեղեն ապացույցներ) և թե՛ անմիջապա ապացույցներ (այսինքն՝ այլ ապացույցի բովանդակությունը վերարտադրող ապացույցներ)⁷:

Մասնավորապես, համաձայն ՀՀ ՎԴՕ 47-րդ հոդվածի՝ իրեղեն ապացույց թույլատրելու վերաբերյալ միջնորդությանը կարող են կցվել իրեղեն ապացույցի պատճենը, լուսանկարը կամ տեսագրությունը:

Միաժամանակ, ՀՀ ՎԴՕ 48-րդ հոդվածի 2-րդ կետը որպես իրեղեն ապացույցներ է դիտում նաև լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները:

Ստացվում է, որ լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները մի դեպքում հանդես են գալիս որպես իրեղեն ապացույց, մյուս դեպքում՝ ապացույցն ամ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րագրող ածանցյալ ապացույց:

Ածանցյալ ապացույցների գոյության անհրաժեշտությունն ամրագրված է նաև ՀՀ ՎՂՕ 49-րդ հոդվածի 4-րդ կետով, որը վերաբերում է իրեղեն ապացույցների զննման կարգին և նախատեսում է, որ զննման արդյունքները դատավորի խոսքից բառացի արձանագրվում են, իսկ արձանագրությանը կարող են կցվել զննման ժամանակ կազմված կամ ստուգված պլանները, գծագրերը, լուսանկարները, փաստաթղթերի պատճենները, զննման ժամանակ կատարված լուսանկարները կամ տեսագրությունները ...:

ՀՀ վարչական դատավարությունում յուրատիպ է նաև խնդրո առարկա ապացույցների ձեռքբերման գործընթացը: Մասնավորապես, ՀՀ ՎՂՕ 48-րդ հոդվածի 2-րդ կետն ամրագրում է. «... եթե անձի լուսանկարումը կամ նրա ձայնագրումը կամ տեսագրումն իրականացվել են առանց այդ անձի համաձայնության կամ զիտության, ապացույցը թույլատրելի է միայն այն դեպքում, եթե օրենքը չի արգելում այդ իրավիճակում առանց անձի համաձայնության լուսանկարումը, ձայնագրությունը կամ տեսագրությունը:

Գտնում ենք, որ այս առնչությամբ լուրջ հակասություն է առաջանում վարչադատավարական նորմերի միջև: Մի դեպքում, ՀՀ օրենսդիրը նախատեսում է, որ այն հարցերը, որոնք չեն կարգավորվում վարչական դատավարության օրենսգրքով, ենթակա են կարգավորման քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերով: Մյուս դեպքում, ՎՂՕ-ն, նախատեսելով ապացույցի ձեռքբերման յուրահատկություն, չի մանրամասնում այդ դեպքերը՝ թողնելով կարգավորումը քաղաքացիական դատավարությանը, որն առանց համապատասխան անձի համաձայնության ապացույց ձեռքբերելը համարում է անթույլատրելի: Ստացվում է, որ «եթե օրենքը չի արգելում այդ իրավիճակում առանց անձի համաձայնության լուսանկարումը, ձայնագրությունը կամ տեսագրությունը» արտահայտության շնորհիվ ՀՀ ՎՂՕ 48-րդ հոդվածի 2-րդ կետն առաջին հնարավոր չէ կիրառել, քանի որ ցանկացած պարագայում դա կհանգեցնի օրենքի պահանջների խախտման: Կարծում ենք, որ հիշատակված նորմը մանրամասնելու կարիք ունի և առնվազն պետք է նախատեսի, թե որ դեպքերում չի կարելի առանց անձի համաձայնության լուսանկարում, ձայնագրություն և տեսագրություն կատարել:

Անդրադառնալով եվրոպական երկրներում տեսաձայնագրությունների և լուսանկարահանում-

ների կատարման իրավական կարգավորման փորձին՝ նշենք, որ այն ունի յուրահատկություններ և առանձնահատկություններ, որոնք էականորեն տարբերվում են ՀՀ օրենսդրի կողմից որդեգրված քաղաքականությունից:

Ֆրանսիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը՝ դատական նիստի ընթացքում տեսաձայնագրություններ և նկարահանումներ կատարելու բացառիկ իրավասությունը վերապահում է դատարանին: Մասնավորապես, վկայակոչված իրավական ակտի 174-րդ հոդվածը դատավորին իրավունք է վերապահում գործի նախնական քննության ընթացքում դատավարական գործողությունները կամ դրանց մի մասը ենթարկել տեսաձայնագրման և/կամ լուսանկարման: Արձանագրությունը (և ժապավենը) պահվում են դատարանում՝ նիստերի քարտուղարի սենյակում, և դատավարության մասնակիցներից յուրաքանչյուրը կարող է ստանալ դրանց կրկնօրինակները:

Ուշադրության արժանի է այն, որ հոդվածը չի նախատեսում տեսաձայնագրում կամ լուսանկարահանում կատարելու վերաբերյալ դատավարության մասնակիցների թույլտվությունն ստանալու կամ այդ մասին նրանց նախապես տեղեկացնելու դատավարական կարգ: Գրեթե նմանատիպ կարգ է նախատեսված նաև Բելգիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝

Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգրքի՝ 308-րդ հոդվածի համաձայն՝ դատական նիստի բացման պահից սկսած՝ արգելվում է տեսագրող կամ ձայնագրող ցանկացած սարքի գործածումը: Առաջին ատյանի դատարանի նիստը նախագահը կարող է թույլ տալ իր հսկողության ներքո դատական վիճաբանություններն ամբողջությամբ կամ մասնակի ձայնագրելը: Նա կարող է նաև տուժողի կամ քաղաքացիական հայցվորի միջնորդությամբ թույլատրել տեսաձայնագրելու դատական նիստը կամ վերջիններիս կողմից դատարանում արված հայտարարությունները: Այս կարգով կատարված ձայնագրությունները կարող են որպես ապացույց օգտագործվել ինչպես առաջին ատյանի դատարանում, այնպես էլ՝ վերադաս դատական ատյաններում:

Գերմանիայի դատական օրենսգիրքը՝ որևէ ձևով չի ամրագրում տեսաձայնագրման և լուսանկարահանման դատավարական իրավունքը: Միակ հիշատակումը վերաբերում է դատական նիստի պարտադիր արձանագրմանը, որը նախատեսված է օրենսգրքի 45-րդ բաժնով:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայի քաղաքացիական դատավարությունը առավելապես կարգավորվում է Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքով (Zivilprozessordnung) և «Քաղաքացիական դատավարության բարեփոխումների մասին» Գ-Դ-Հ օրենքով (այսուհետ՝ Օրենք): Օրենքի յուրահատկություններից մեկն այն է, որ դրանով հնարավորություն է ընձեռվում դատական նիստն անցկացնել internet-ի օգտագործմամբ: Մասնավորապես, այն դեպքերում, երբ գործին պետք է մասնակից դառնա վկան կամ փորձագետը, ովքեր օբյեկտիվորեն հնարավորություն չունեն դատական նիստերի դահլիճ ներկայանալու (ֆիզիկական արատի, հեռավորության վրա գտնվելու, հիվանդության կամ այլ հարգելի պատճառներով), վերջիններիս հետ հաստատվում է էլեկտրոնային կապ՝ դատական նիստի ընթացքում հնարավորություն ստեղծելով նրանց տեսնել, լսել, հարցեր տալ, ստանալ բացատրություններ և իրականացնել դատավարական այլ գործողություններ¹²:

Գերմանիայի քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ բաժինն ամրագրում է բացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդության հրապարակման պարտադիր արձանագրման (ձայնագրման) պահանջ: Նույն իրավական ակտի 58a և 247a բաժիններն ամրագրում են վկայի հարցաքննության տեսաձայնագրման հնարավորություն (այսինքն՝ գործի քննության ընթացքում վկան արդեն չի ներկայանում և նրա հարցաքննության արձանագրությունը դիտվում է որպես ապացույց), որը կարող է իրականացվել հետևյալ դեպքերում.

ա) տասնվեց տարեկանից ցածր տարիք ունեցող անձանց դեպքում, որոնց քրեական հանցագործության հետևանքով վնաս է պատճառվել,

բ) եթե առկա է մտավախություն, որ վկան չի կարող հարցաքննվել գործի դատական քննության ընթացքում, և եթե ձայնագրություն անհրաժեշտ է ճշմարտության վերհանման համար:

Նույն հոդվածն ամրագրում է նաև, որ տեսաձայնագրումը թույլատրելի է միայն քրեական հետապնդման նպատակներից ելնելով և միայն ճշմարտության վերհանման սահմաններում:

Գերմանիայի քրեական դատավարության օրենսգրքի 100c. բաժինն ամրագրում է լուսանկարահանման և տեսաձայնագրման հնարավորությունը, եթե անհրաժեշտ փաստերի հաստատումը որևէ այլ եղանակով ավելի դժվար կամ անիրագործելի կլինի:

Օրենսգրքի 118a. բաժինն, ամրագրելով գոր-

ծի քննության հրապարակայնությունը, պահանջում է այն արձանագրել: Արձանագրման յուրահատկությունները նախատեսված են 168a. բաժնի 3-րդ և 4-րդ կետերով, համաձայն որոնց՝ արձանագրությունն այնուհետև պետք է հնչեցվի՝ դատավարության մասնակիցների կողմից դրա բովանդակության ճշմարտացիության հաստատման համար, որից հետո այն պետք է ստորագրվի գործը քննող դատավորի կողմից:

Գերմանիայի վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածը իրավասու մարմիններին ապացույցներ ձեռք բերելու լիազորությամբ է օժտում, այդ թվում՝ հնարավորություն է տալիս պահանջել և ստանալ փաստաթղթեր և արձանագրություններ: Այսպիսով, հոդվածի բովանդակությունից բխում է, որ Գերմանիայի վարչական դատավարությունում արձանագրությունները դիտվում են որպես գրավոր ապացույցներ: Օրենսգրքի 68-րդ հոդվածն ամրագրում է գործի դատական քննության արձանագրման պահանջը, ինչը հրապարակայնության սկզբունքի ապահովման երաշխիք է:

Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության իրավունքը ևս տեսաձայնագրությունները և լուսանկարները դիտում է որպես իրեղեն ապացույցներ, քանի որ դրանց ապացուցողական նշանակությունը կախված է դրանց բովանդակությունից¹³:

Խնդրո առարկա հարցերի կարգավորմանն են ուղղված ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի¹⁴ 77-րդ, 79-րդ և 185-րդ հոդվածները: Համաձայն ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի՝ «էլեկտրոնային կամ այլ կրիչներում պարունակվող տեսաձայնագրություններ ներկայացնող կամ դրանք պահանջելու վերաբերյալ միջնորդող կողմը պարտավոր է մատնանշել՝ երբ, ում կողմից և ինչ պայմաններում է իրականացվել արձանագրումը: Այդ կրիչները պահվում են դատարանում՝ դրանց անփոփոխ տեսքն ապահովելու նպատակով:

Նույն օրենսգրքի 185-րդ հոդված նախատեսում է, որ եթե արձանագրման կրիչները պարունակում են անձնական բնույթի կամ այլ գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, ապա դրանց հրապարակումն իրականացվում է գաղտնիության ապահովման պայմաններում: Կրիչներում պարունակվող տեղեկությունների վերհանման նպատակով գործի քննությանը կարող է ներգրավվել մասնագետ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ փորձա-

գետ:

ՌԴ քաղաքացիական դատավարության իրավունքը նախատեսում է նաև դատական նիստերի տեսաձայնագրման և լուսանկարահանման հնարավորություն՝ կողմերի համաձայնությամբ և դատարանի թույլտվությամբ: Մակայն ՌԴ օրենսդիրն այս առնչությամբ նախատեսել է նաև սահմանափակումներ: Մասնավորապես, վկայակոչված դատավարական իրավունքից օգտվել կարող են միայն գործի դռնբաց քննության ընթացքում և պայմանով, դրանով չեն խաթարի գործի քննության բնականոն ընթացքը¹⁵:

Ադրբեջանի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 10.9 կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և այլ անձինք գործի քննության դատական նիստի ընթացքում իրավունք ունեն գործի քննության ընթացքի վերաբերյալ գրառումներ կատարել: Գործի քննության տեսաձայնագրումն ու լուսանկարահանումը, ինչպես և ռադիո հեռարձակումը կարող են իրականացվել միայն դատարանի թույլտվությամբ՝ գործին մասնակցող անձանց կարծիքները լսելուց հետո:

Վկայակոչված իրավական ակտի 76-րդ հոդվածը տեսաձայնագրությունները և լուսանկարները դիտում է որպես իրեղեն ապացույցներ:

Ադրբեջանի քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածը պարտավորեցնում է բոլոր դատավարական գործողությունները ոչ միայն հասարակ արձանագրման ենթարկել, այլև տեսագրել, ձայնագրել, լուսանկարել, պատկերել սխեմատիկ պատկերներով և այլն, սակայն ուղղակիորեն չի նախատեսում դրա իրականացման հնարավորությունը գործի դատական քննության նիստի ընթացքում:

Մի շարք պետությունների դատավարական ակտերից կատարված մեջբերումները վկայում են, որ խնդրո առարկա հարցի լուծումը մայրցամաքային իրավական համակարգի երկրներում գրեթե նույնն է: Ինչևէ, հարցի կարգավորման նույնականությունը դեռևս չի վկայում բացթողումներից զերծ մնալու հանգամանքի մասին:

Այս առնչությամբ, գտնում ենք, որ ՀՀ ներպետական դատավարական ակտերի որոշ դրույթներ հակասում են միջազգային պայմանագրերով ամրագրված՝ «արդար դատաքննության» գաղափարին:

Ավելորդ չէր լինի հիշատակել, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ «Միջազ-

գային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը»:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի¹⁶ 8-րդ և 10-րդ հոդվածների համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, սահմանադրությամբ կամ օրենքով իրեն վերապահված հիմնարար խախտման դեպքում, ունի ներպետական իրավասու ատյանների կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք»:

Յուրաքանչյուր ոք, իր իրավունքների և պարտականությունների սահմանման և իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, ունի լիակատար հավասարության պայմաններում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի ու հրապարակային դատաքննության իրավունք»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոնվենցիայի (փոփոխված 11-րդ արձանագրությամբ, 4-ը նոյեմբերի 1950թ., Հռոմ) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»:

Վերը նշվածից բխում է, որ համաձայն կոնվենցիայով ամրագրված դիրքորոշման՝ հասարակության և զանգվածային միջոցների ներկայացուցիչների ներկայությունը դռնբաց դատական նիստին համարվում է թույլատրված: Կոնվենցիան նա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

խատեսում է նաև բացառություններ, որոնց պարագայում հասարակության և զանգվածային միջոցների ներկայացուցիչների ներկայությունը գործի քննությանը չի թույլատրվում, եթե առկա են գործի դռնփակ քննության նախադրյալներ:

ՉԼՄ ներկայացուցիչների ներկայությունը, տրամաբանորեն, ենթադրում է նաև նրանց կողմից տեսաձայնագրություններ և լուսանկարահանումներ կատարելու իրավունքից օգտվելու հնարավորությունը, սակայն համապատասխան գործոնների առկայության դեպքում այն կարող է դատարանի կողմից սահմանափակվել:

Այս առումով, կարծում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում խնդրո առարկա հարցի առնչությամբ տեղ են գտել բացթողումներ: Ուստի, առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել տեսաձայնագրությունների և լուսանկարահանումների կարգը՝ նման հնարավորություն ընձեռելով դռնփակ կարգով քննվող քրեական գործի կողմերին, դատավարությանը մասնակցող այլ անձանց, ինչպես նաև՝ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև հասարակության և զանգվածային լրատվության ներկայացուցիչներին:

Ուստի, ամփոփելով վերը շարադրվածը, կարծում ենք, որ խնդրո առարկա հարցի ակտուալությունը ՀՀ գործող ճյուղային դատավարական օրենսդրության անկատարության պայմաններում առաջացնում է օրենսդրական դաշտում համապատասխան իրավական կարգավորիչներ նախատեսելու անհրաժեշտություն:

Ուստի, ամփոփելով վերը շարադրվածը, կարծում ենք, որ խնդրո առարկա հարցի ակտուալությունը ՀՀ գործող ճյուղային դատավարական օրենսդրության անկատարության պայմաններում առաջացնում է օրենսդրական դաշտում համապատասխան իրավական կարգավորիչներ նախատեսելու անհրաժեշտություն:

¹ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գիտահետազոտական վերլուծությունը մանրամասնորեն արտացոլված է երկհատոր ուսումնական ձեռնարկում. տե՛ս գլխ. խմբ. Գ.Ս. Դևազյան, ՀՀ քրեական դատավարություն (ընդհանուր և հատուկ մասեր), Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 2005թ.:

² Առավել մանրամասն տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդված (հարցաքննության արձանագրությունը), 218-րդ հոդված (զննում կատարելու կարգը), 98.13.-րդ հոդված (պաշտպանվող անձի հարցաքննությունը դատարանի կողմից):

³ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդված:

⁴ Տե՛ս Նախագծի իրականացումը նախաձեռնելու նպատակն է եղել դիտարկումների ենթարկված դատավարությունների՝ արդար դատաքննության ներպետական և միջազգային չափանիշներին համապատասխանության վերաբերյալ համակարգված եղանակով տեղեկություններ հավաքելը, ինչպես նաև քրեական արդարադատության համակարգում հնարավոր բացթողումների հայտնաբերումը:

⁵ Տե՛ս Ձեկույցի շարադրման ընթացքում դիտարկվել է 93 քրեական գործ՝ ընդհանուր թվով 109 ամբաստանյալների մասնակցությամբ: Համաձայն Ձեկույցի՝ 2008թ. ապրիլից մինչև 2009թ. հուլիս ընկած ժամանակահատվածում իրականացված դիտարկումների արդյունքում հայտնաբերվել են մեղադրյալների և ամբաստանյալների արդար դատաքննության իրավունքի և ազատության իրավունքի հետ կապված մտահոգություն առաջացնող զանազան խնդիրներ:

⁶ Տե՛ս ՀՀ ՎԳՕ 117-րդ հոդված:

⁷ Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ. ՀՀ քաղաքացիական դատավարություն, Երևան, 2003թ., էջ 321:

⁸ Տե՛ս Ֆրանսիայի նորմատիվ իրավական ակտերը կարելի է գտնել www.legifrance.gouv.fr/html/frame_codes_lois_regl.htm կայքում: Ֆրանսիայի քաղաքացիական դատավարության իրավունքն ուսումնասիրելիս օգտվել ենք հետևյալ դոկտրինալ մեկնաբանություններից. Vincent J., Guinchard S., Procédure civile. 24e e'd. Paris: Dalloz, 1996, էջ. 28:

⁹ Տե՛ս Елисеев Н.Г. Гражданское процессуальное право зарубежных стран. Изд.-во “Проспект”, 2004. С. 24, 26.

¹⁰ Տե՛ս Տարբեր երկրների ճյուղային նորմատիվ իրավական ակտերը կարելի է գտնել www.lexadin.nl էլեկտրոնային կայքում:

¹¹ Տե՛ս Գերմանիայի նորմատիվ իրավական ակտերը տեղակայված են http://jurcom5.juris.de/bundesrecht/BMJ_index.html հասցեում:

¹² Առավել մանրամասն տե՛ս Давтян А. Гражданское процессуальное право в Германии и странах СНГ. Ер., 2000. С. 28.

¹³ Տե՛ս Стольников М.В. Практика подготовки и ведения гражданских дел. М., 2008. С. 156.

¹⁴ Տե՛ս Ռ-Գ իրավական ակտերին կարելի է ծանոթանալ www.gdezakon.ru էլեկտրոնային կայքում:

¹⁵ Տե՛ս Стольников М.В. Практика подготовки и ведения гражданских дел. М., 2008. С. 251.

¹⁶ Տե՛ս Ընդունվել և հռչակվել է Գլխավոր Ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 10-ի 217 А (III) բանաձևով:

ԳՈՒՐԳԵՆ ԶՈԹԱՆՁՅԱՆ

Իրավաբան



**ՄԱՐԴՈՒՆ ԱՌԵՎԱՆԳԵԼՈՒ
ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ՊԱՏԱՆԴ ՎԵՐՑՆԵԼՈՒՑ**

Հաճախ թե՛ իրավակիրառ պրակտիկայում, թե՛ քրեական իրավունքի գիտության մեջ դժվարություններ են առաջանում մարդուն առևանգելու (ՀՀ քր. օր. հոդ. 131) հանցակազմի և ազատությունից ապօրինի զրկելու (ՀՀ քր. օր. հոդ. 133) ու պատանդ վերցնելու (ՀՀ քր. օր. հոդ. 218) հանցակազմերի սահմանազատման, հետևաբար նաև դրանց ճիշտ որակման հարցում:

Վերը նշված հանցագործությունների տարանջատման հիմնական չափանիշներից մեկը հանցավոր ոտնձգության օբյեկտն է: Մարդուն առևանգելու հիմնական անմիջական օբյեկտը մարդու անձնական ֆիզիկական ազատությունն է, որը նախատեսված է ՀՀ քր. օր. գլուխ 17-ում (անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործությունները): Իսկ պատանդ վերցնելու հանցակազմը նախատեսված է ՀՀ քր. օր. գլուխ 23-ում՝ (հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները), ուստի այս հանցակազմի հիմնական անմիջական օբյեկտը հասարակական անվտանգությունն է: Այս հանցագործությունը վնաս է պատճառում հասարակական հարաբերությունների լայն շրջանակներին, մարդկանց մեծ խմբերին և ոչ թե առանձին անհատներին:

Դրա մասին է վկայում պատանդ վերցնելու հատուկ նպատակը՝ պետությանը, կազմակերպությանը, քաղաքացուն որևէ գործողություն կատարելու, կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելը¹:

Պատանդ վերցնելը կամ պատանդ պահելը, պարզապես, հանդես են գալիս որպես նպատակին հասնելու միջոց: Պատանդ վերցնելու ժամանակ հանցավորին առաջին հերթին հետաքրքրում է տուժողին որպես նպատակին հասնելու միջոց օգտագործելու հնարավորությունը, այլ ոչ թե նրա անձը: Որպես կանոն, այս դեպքում տուժողը և հանցավորը միմյանց հետ ոչ մի կապ չեն ունենում²:

Այսպիսով, պատանդ վերցնելը՝ որպես հանցագործություն, առաջին հերթին վնասում է հասարակական անվտանգությանը: Դրա հետ մեկտեղ պատանդ վերցնելու դեպքում լրացուցիչ օբյեկտի դերում հանդես է գալիս անձի ֆիզիկական ազատությունը, որը մարդու առևանգման հանցակազմում հանդիսանում է անմիջական օբյեկտ: Այլ կերպ ասած՝ պատանդ վերցնելու դեպքում տուժողին ազատությունից զրկելը հանդիսանում է հանցավորի ոչ թե նպատակը, այլ նպատակին հասնելու միջոց: Պատանդ վերցնելու ժամանակ, ինչպես մարդուն առևանգելու դեպքում, տուժողի դերում կարող է հայտնվել ցանկացած անձ, որին ազատությունից զրկելով՝ հանցավորը փորձում է հասնել իր նպատակին: Տուժող կարող է լինել ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը: Սակայն, ի տարբերություն մարդու առևանգման, ՀՀ քր. օր. հոդ. 218-ի դիսպոզիցիայում նախատեսված է հատուկ նպատակ, այդ պատճառով էլ քննարկվող հանցակազմերում տուժողները ունեն տարբեր դերակատարություններ: Այսպես, մարդու առևանգման դեպքում տուժողը հանդես է գալիս որպես հանցագործության առարկա, իսկ հանցագործության օբյեկտն է տուժողի ֆիզիկական ազատությունը: Մինչդեռ պատանդ վերցնելու ժամանակ տուժողը հանդիսանում է հանցագործության օբյեկտին վնաս պատճառելու միջոց կամ այլ կերպ ասած՝ հանցագործության միջոց: Վերը թվարկված երկու հանցակազմերի սահմանազատման հաջորդ չափանիշը այդ հանցագործությունների օբյեկտիվ կողմն է:

Գրականության մեջ արդարացիորեն նըշվում է, որ մարդուն առևանգելու և պատանդ վերցնելու հանցակազմերը գործնականում հնարավոր չէ ճշգրիտ սահմանազատել, ինչը պայմանավորված է համապատասխան հողվածների դիսպոզիցիաներում այդ հանցագործությունների

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հատկանիշների ոչ հստակ ձևակերպումներով³: ՀՀ քր. օր. հոդ. 131-ը նկարագրում է անձին առևանգելու եղանակները՝ վստահությունը չարաշահելու, խաբեության, բռնության կամ բռնության գործադրման սպառնալիքի միջոցով, որը կարող է կատարվել գաղտնի կամ բացահայտ: ՀՀ քր. օր. հոդվ. 131-ի դիսպոզիցիայում, նկարագրելով մարդուն առևանգելու եղանակները, օրենսդիրը, հավանաբար, փորձել է սահմանել տվյալ հանցավոր արարքի հասկացությունը և այլ հանցագործություններից դրա սահմանազատման հիմքերը: Սակայն նման մոտեցմանը դժվար է համաձայնել, քանի որ, մեր կարծիքով, հնարավոր չէ նախատեսել մարդուն առևանգելու եղանակների սպառնիչ ցանկը: Մասնավորապես, տվյալ դեպքում անտեսված է, օրինակ, տուժողի անօգնական վիճակի օգտագործմամբ նրան առևանգելու հնարավորությունը: Մարդուն առևանգելու ձևերի և եղանակների մասին իրավաբանական գրականության մեջ շատ է խոսվել, ուստի նպատակահարմար չենք համարում այդ հարցերին կրկին անդրադառնալ: Իսկ ՀՀ քր. օր. հոդ. 218-ը ընդհանրապես չի բացահայտում պատանդ վերցնելու և պատանդ պահելու հասկացությունների իմաստը: Սակայն և՛ քրեական իրավունքի գիտությունը, և՛ իրավակիրառ պրակտիկան վկայում են, որ պատանդ վերցնելու հանցակազմի դեպքում էլ տուժողին ազատությունից կարելի է զրկել նույն միջոցներով, ինչ որ մարդու առևանգման ժամանակ: Սակայն, ինչպես գիտենք, ՀՀ քր. օր.-ի հոդ. 218-ում նախատեսված է հատուկ նպատակ՝ ուղղված երրորդ անձանց, որպես պատանդին ազատելու պայման, իսկ այդ հատուկ նպատակի բացակայության դեպքում արարքը պետք է որակվի կամ ՀՀ քր. օր.-ի հոդ. 131-ով կամ հոդ. 133-ով⁴:

Ի տարբերություն պատանդ վերցնելու, մարդուն առևանգելու դեպքերի՝ տուժողին իր միկրոսոցիալական միջավայրից տեղափոխելու հանգամանքը հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է: Ասվածից հետևում է, որ արարքը ՀՀ քր. օր. հոդ. 131-ով որակելու համար պարտադիր է տուժողին այլ վայր տեղափոխելը: Իսկ անձին պահելը չի համարվում մարդուն առևանգելու հանցակազմի պարտադիր հատկանիշ և հանդես է գալիս ընդամենը որպես օբյեկտիվ կողմի ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) հատկանիշ:

Այնուամենայնիվ, քննարկվող հանցակազ-

մերում առկա հակաիրավական արարքների նմանությունը, ամեն դեպքում, դժվարություն է հարուցում իրավակիրառողի մոտ դրանց որակման և սահմանազատման խնդրում: Եթե մենք ուսումնասիրենք պատանդ վերցնելու համար պատասխանատվություն նախատեսող նորմը, ապա կտեսնենք, որ օբյեկտիվ կողմը կազմում են երկու գործողություններ՝ պատանդ վերցնելը և պատանդ պահելը: Բացի այդ, ՀՀ քր. օր. հոդ. 218-ի դիսպոզիցիայի համաձայն՝ պատանդ վերցնելու պարտադիր հատկանիշ են համարվում հանցավորի կողմից երրորդ անձանց ներկայացվող պահանջները: Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել նշված հանցագործությունների ավարտման պահին: Ինչպես մարդուն առևանգելը, այնպես էլ պատանդ վերցնելը տևող հանցագործություններ են՝ ձևական հանցակազմերով: Պետք է նշել, որ պատանդ վերցնելը համարվում է ավարտված տուժողին ազատությունից փաստացի զրկելու պահից, եթե դրա հետ մեկտեղ հանցավորը նպատակ է հետապնդում հարկադրել օրենքով նախատեսված սուբյեկտներին կատարելու որոշակի պահանջներ, որպես պայման՝ պատանդին ազատ արձակելու համար: Ի տարբերություն պատանդ վերցնելուն՝ մարդուն առևանգելը սկսում է անձին վերցնելու պահից և ավարտված է համարվում տուժողին տեղափոխելու փուլում:

Հաջորդ հատկանիշը, որը թույլ է տալիս տարանջատել ուսումնասիրվող հանցագործությունները, հանցանք կատարող անձանց կողմից ներկայացվող պահանջներն են: Ինչպես արդեն նշվել է, ի տարբերություն մարդու առևանգման, պատանդ վերցնելու դեպքում հանցավորի կողմից առաջ քաշվող պահանջները մտնում են ՀՀ քր. օր. հոդ. 218-ի դիսպոզիցիայի մեջ: ՀՀ քր. օր. հոդ. 218-ով նախատեսված հանցագործության սուբյեկտի կողմից ներկայացվող պահանջների բովանդակությունը կարող է լինել տարբեր և արարքի որակման համար ոչ մի նշանակություն չունի: Ընդ որում, պահանջների հասցեատիրոջ դերում կարող են հանդես գալ ինչպես իր պետությունը, այնպես էլ՝ օտարերկրյա, ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա կազմակերպությունը: Կախված պահանջի բնույթից՝ հասցեատերը կարող է լինել հայտնի կամ ոչ, ինչը արարքի որակման վրա չի ազդում: Պատանդներին, ի տարբերություն առևանգված մարդկանց, պահանջներ չեն ներկայացվում: Պատանդը հան-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ցավորի համար հանդիսանում է որպես «ապրանք»: Դրա հետ մեկտեղ, մեր կարծիքով, պատանդ վերցնելու հանցակազմով նախատեսված սուբյեկտների շրջանակը, ում հանդեպ հանցավորը պահանջներ է ներկայացնում, չափից դուրս ընդարձակ է: ՀՀ քր. օր. հոդ. 218-ի ձևակերպման մեջ հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ մարդուն առևանգելու դեպքում հազվադեպ չեն դեպքերը, երբ պահանջներ են ներկայացվում տուժողի հարազատներին և մտերիմներին: Սակայն պատանդ վերցնելու դեպքում վտանգվում են ոչ թե կոնկրետ անձի շահերը, ինչպես որ մարդուն առևանգելու ժամանակ է, այլ վտանգվում է ամբողջ հասարակության անվտանգությունը: Ուստի, մեր կարծիքով, ճիշտ կլիներ ՀՀ քր. օր. հոդ. 218-ից հանել քաղաքացիներին վերաբերող նշումը: Դրա հետ մեկտեղ ճիշտ կլիներ դիսպոզիցիայում նշել այլ հասցեատիրոջ՝ պաշտոնատար անձին՝:

Այսպիսով, այն դեպքերում, երբ հանցավորի պահանջները ուղղված են ֆիզիկական անձանց, արարքը կարելի է որակել որպես մարդու առևանգում: Պետք է նաև նշել, որ այսպիսի մոտեցումը թույլ կտա վերացնել քննարկվող հանցակազմերի սահմանազատման հետ կապված բարդությունները:

Պրակտիկական ցույց է տալիս, որ ներկայացվող պահանջների բովանդակությունը բավականին բազմազան է: Դրանք կարող են կապված լինել երկիրը լքելու, խոշոր գումար ստանալու ցանկության հետ, որևէ քաղաքական որոշում չեղյալ հայտարարելու կամ, ընդհակառակը, պետությանը որևէ դատապարտյալի ազատ արձակելուն հարկադրելու, որևէ մեկին ներում շնորհելու, տրանսպորտային միջոցներ, զենք, թմրանյութ ստանալու հետ և այլն: Ընդ որում, պատանդ վերցնելու դեպքում պահանջները ներկայացվում են բացահայտ, շատ դեպքերում հանցավորը դիտավորյալ ցանկանում է իր արարքին տալ քաղաքական լայն հնչեղություն:

Այս երկու հանցագործությունները միմյանցից տարբերվում են նաև հետևյալ հանգամանքով. մարդու առևանգումը ենթադրում է որոշակի գաղտնիություն: Գաղտնիությունն այն է, երբ հանցավորը ձգտում է առևանգվածին պահել այնպիսի վայրում, որը հայտնի չէ իրավապահ մարմիններին և այն անձանց, ովքեր շահագրգիռ են տուժողի ազատման հարցում: Իսկ պատանդ վերցնելու

լու ժամանակ հանցավորը, ընդհակառակը, գործում է բացահայտ: Այս հանգամանքը վկայում է հանցավորի հանդգնության մասին, դրանով է պայմանավորված պատանդ վերցնելու հանրային բարձր վտանգավորությունը՝ մարդուն առևանգելու համեմատությամբ՝:

Այս երկու հանցակազմերում հանցավորի մեղքը բնութագրվում է ուղղակի դիտավորության ձևով: ՀՀ քր. օր. հոդ. 218-ի դեպքում հանցավորը գիտակցում է, որ այլ անձի պատանդ է վերցրել՝ պետությանը, կազմակերպություններին կամ քաղաքացիներին որևէ գործողություն կատարելուն հարկադրելու կամ որևէ գործողության կատարմից զերծ մնալու համար: Ի տարբերություն սրա, մարդուն առևանգելու դեպքում հանցավորը գիտակցում է, որ անօրինական կերպով վերցրել է այլ անձի և նրա կամքին հակառակ տեղափոխում է նրան այլ վայր, և ցանկանում է դա:

Պատանդ վերցնելու հանցակազմում, ինչպես արդեն նշել ենք, հանցակազմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում դիսպոզիցիայում նշված հատուկ նպատակը, որով էլ այն տարբերվում է ՀՀ քր. օր. հոդ. 131-ով և 133-ով նախատեսված արարքներից:

Սուբյեկտիվ կողմի հաջորդ հատկանիշը՝ շարժառիթը, չի համարվում պարտադիր հատկանիշ և արարքի որակման վրա չի ազդում ու չի կարող դրվել այս հանցագործությունների սահմանազատման հիմքում: Միայն մարդուն առևանգելը, որը կատարվել է շահադիտական դրդումներով, համարվում է հանցագործությունը ծանրացնող հանգամանք և ազդում է արարքի որակման վրա: Այս դեպքում արարքը որակվում է ՀՀ քր. օր. հոդ. 131-ի 2-րդ մասի 7-րդ կետով: Հանցագործության շարժառիթը կարող է ունենալ նաև այլ քրեաիրավական նշանակություն, մասնավորապես այն շարժառիթները, որոնք նշված են ՀՀ քր. օր.-ի հոդ. 63-ում, որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ: Չնայած դրանք արարքի որակման վրա չեն կարող ազդել, բայց հաշվի են առնվում դատարանի կողմից պատիժ նշանակելիս: Սրա օրինակ կարող է լինել մեր կողմից քննարկվող հանցագործությունների կատարումը ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով (ՀՀ քր. օր. հոդ. 63-ի, 6-րդ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կետ):

Տարբերություն կա մասնավոր հանցագործությունների սուբյեկտների հարցում: Եթե մարդուն առևանգելու սուբյեկտ է հանդիսանում 14 տարին լրացած մեղսունակ, ֆիզիկական անձը, ապա պատանդ վերցնելու սուբյեկտ է հանդիսանում 16 տարին լրացած մեղսունակ, ֆիզիկական անձը:

Պրակտիկայում որոշակի բարդություններ են առաջանում շահադիտական դրդումներով մարդուն առևանգելու (ՀՀ քր. օր. հոդ. 131, 2-րդ մաս. 7-րդ կետ) և շահադիտական նպատակներով պատանդ վերցնելու (ՀՀ քր. օր. հոդ. 218) դեպքերը սահմանազատելու հարցում: Սրա հետ կապված պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ առևանգման դեպքում հանցավորի պահանջները ուղղված են անմիջապես տուժողին կամ նրա հարազատներին: Պատանդ վերցնելու դեպքում նշված պահանջները ուղղված են ոչ թե պատանդ վերցված անձին, այլ ՀՀ քր. օր. հոդ. 218-ով նախատեսված այլ անձանց և կազմակերպություններին:

Հարկ ենք համարում ավելացնել, որ քրեմարկվող արարքները չեն կարող որակվել հանցագործությունների համակցությամբ, քանի որ

առկա է ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցություն: Ի տարբերություն ՀՀ քր. օր.-ի, ՌԴ քր. օր.-ում սահմանված է, որ եթե հանցագործությունը նախատեսված է ընդհանուր և հատուկ նորմերով, հանցագործությունների համակցությունը բացակայում է, և քրեական պատասխանատվություն է առաջանում հատուկ նորմերով: Ճիշտ կլիներ նման նորմի նախատեսումը ՀՀ քր. օր.-ում⁷:

Ինչ վերաբերում է մեր կողմից քննարկվող հանցագործություններին, ապա ընդհանուր պետք է համարել ՀՀ քր. օր.-ի հոդ. 131-ով նախատեսված նորմը, իսկ հատուկ՝ ՀՀ քր. օր. հոդ. 218-ով նախատեսվածը: Այդ պատճառով էլ կարելի է պնդել, որ պատանդ վերցնելը, փաստորեն, հանդիսանում է մարդուն առևանգելու տարատեսակ⁸:

Պատանդ վերցնելու և մարդուն առևանգելու համար պատասխանատվություն սահմանող նորմերի վերլուծությունը թույլ է տալիս ասելու, որ այս հանցագործությունները չի կարելի սահմանազատել առանձին հատկանիշի հիման վրա: Սահմանազատման համար անհրաժեշտ է հաշվի առնել այս արարքները միմյանցից սահմանազատող հատկանիշների ամբողջությունը:

¹ Տե՛ս Журавлев Н.А. Уголовно-правовая характеристика преступлений связанных с захватом заложников. Дисс. канд. юр. наук.- М., 2001. С. 89.

² Տե՛ս Овчинников Г.В., Павлик М.Ю., Коршунова О.Н. Захват заложников. СПб, 2001. С. 93.

³ Տե՛ս Российское уголовное право. особенная часть: учебник под. ред. В.Н. Кудрявцова, А.В.Наумова. М., 1997. С. 286.

⁴ Տե՛ս Беляева Н., Орешкина Т., Мурадов. Квалификация захвата заложников: Законность. 1994. N7. С. 21.

⁵ Տե՛ս Комисаров В. Захват заложников. Происхождения нормы, вопросы совершенствования. Законность. 1995. N3. С. 46.

⁶ Տե՛ս Парфиенко Н.Г. Уголовно-правовая и криминологическая характеристика похищения человека. Дисс. канд. юр. наук. Иркутск, 2007. С. 100.

⁷ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս: ԵՊՀ, 2003, էջ 314:

⁸ Տե՛ս Комисаров В. Захват заложников. Происхождения нормы, вопросы совершенствования. Законность. 1995. N3. С. 105.

ԴԱՎԻԹ ՀՈՒՆԱՆՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի, քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ



ԳՈՐԾԸ ՄԵՂԱԴՐՈՂԻՆ ՎԵՐԱԴԱՐՉՆԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԸ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Երկու հազար յոթ թվականի հուլիսի քսանչորսին Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) սահմանադրական դատարանն ընդունեց որոշում՝ քաղաքացի Գևորգ Գգրարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր.) 311-րդ հոդվածի 2-րդ կետի, 414.2.-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով (այսուհետ՝ ՍԳՈ-710 որոշում), որով քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու ինստիտուտը ճանաչվեց ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին (առաջին մաս) հակասող և անվավեր: Այսպիսի ճակատագրի չարժանացավ միայն ՀՀ քր. դատ. օր. 274-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որի համաձայն՝ դատախազը մեղադրական եզրակացությամբ գործը ստանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, պարտավոր է ընդունել 274-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը, որոնց թվում է նաև լրացուցիչ քննություն կատարելու կամ մեղադրական եզրակացությունը վերակազմելու նպատակով իր ցուցումներով գործը քննիչին վերադարձնելու մասին որոշումը:

Իրերի նման ընթացքը շատ տեսաբաններ համարում են լիովին արդարացված և հիմնավորված. ինչպես նախկինում, այնպես էլ ՍԳՈ-710 որոշման ընդունումից հետո հնչում են համանման կարծիքներ. «Մրցակցության, անմեղության կանխավարկածի, կասկածների փարատման, անկախ և տեսանելիորեն անաչառ դատարանի գաղափարների լույսի և ջերմության տակ խորհրդային այս քաղցկեղային վտանգներ պարունակող խալը չէր կարող հօդս չցնդել քրեական դատավարության դեմքի վրայից»¹:

Մինչ ՍԳՈ-710 որոշման ընդունումը քրեա-

կան դատավարության ընթացքում գործը լրացուցիչ նախաքննության կարող էր ուղարկվել երեք դատավարական սուբյեկտի՝ դատախազի, դատավորի կամ դատարանի կողմից հինգ դատավարական փուլերի ընթացքում. դրանք են՝ նախնական քննության փուլը, դատական քննության նախապատրաստման փուլը, վարույթն առաջին ատյանի, վերաքննիչ, վճռաբեկ դատարաններում:

Դատախազը մեղադրական եզրակացությամբ գործը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում պարտավոր էր ընդունել ՀՀ քր. դատ. օր. 274-րդ հոդվածում թվարկված որոշումներից մեկը, որոնց շարքում էր «լրացուցիչ քննություն կատարելու կամ մեղադրական եզրակացությունը վերակազմելու համար իր ցուցումներով գործը քննիչին վերադարձնելու մասին» որոշումը: Օրենսդրության վերլուծությունից պարզ է դառնում, որ դատախազը նման որոշում կայացնում է, եթե՝ 1. առկա են հիմքեր մեղադրանքը լրացնելու կամ այն առավել ծանր կամ փաստական հանգամանքներով նախորդ մեղադրանքից էապես տարբերվող մեղադրանքով փոխարինելու համար, 2. նախաքննության ընթացքում լրիվ չեն հետազոտվել գործի բոլոր հանգամանքները, 3. հանրորեն վտանգավոր արարքի մեջ մեղավոր ոչ բոլոր անձինք են ներգրավվել որպես մեղադրյալ, 4. խախտվել են դատավարության մասնակիցների իրավունքները²:

Նախնական դատական վարույթի արդյունքում դատավորը պարտավոր էր ընդունել ՀՀ քր. դատ. օր. 292-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը, այդ թվում՝ «գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին» որոշումը: Ընդ որում, դատավորն այդպիսի որոշում ընդունում էր, եթե հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից թույլ էին տրվել քրեադատա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վարական օրենքի էական խախտումներ, որոնք չէին կարող վերացվել դատական քննության ընթացքում (ՀՀ քր. դատ. օր. 297-րդ հոդված): ՀՀ քր. դատ. օր. 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեադատավարական օրենքի էական խախտումներ են օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Առաջին ատյանի դատարանը դատական քննության ընթացքում կարող էր ընդունել մի շարք դատական որոշումներ. «Այն բոլոր հարցերի առթիվ, որոնք լուծվում են դատարանի կողմից դատական քննության ժամանակ, դատարանը որոշումներ է կայացնում» (ՀՀ քր. դատ. օր. 313-րդ հոդվածի 1-ին մաս): Քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու որոշման ընդունման հիմքերը երկուսն էին՝ 1. երբ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից թույլ էր տրված քրեադատավարական օրենքի էական խախտում, որը չէր կարող վերացվել դատական քննության ընթացքում, 2. երբ առկա էին մեղադրանքն ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր: Վերջին դեպքում դատարանը գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշում կայացնում էր միայն մեղադրողի միջնորդության հիման վրա (ՀՀ քր. դատ. օր. 311-րդ հոդված):

Վերաքննիչ դատարանը քրեական գործի քննության արդյունքում կայացնում էր ՀՀ քր. դատ. օր. 394-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը, այդ թվում՝ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշումը, եթե առկա էին 311-րդ հոդվածում ամրագրված հիմքերը:

Դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը կարող էր ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել գործը և բեկանված մասով գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության կամ համապատասխան ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության: Չբեկանված մասով դատական ակտը մնում էր օրինական ուժի մեջ: Դատավճիռը ենթակա էր բեկանման՝ գործը

նոր նախաքննության ուղարկելով, եթե թույլ էր տրվել քրեադատավարական օրենքի կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի էական խախտում, որը չէր կարող վերացվել դատական քննության ժամանակ (ՀՀ քր. դատ. օր. 419-րդ, 421-րդ հոդվածներ):

Տեսական գրականության մեջ մինչ օրս գերիշխում է այն կարծիքը, որ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտն ուղղված է նախորդ դատավարական փուլում կոնկրետ դատավարական սուբյեկտի կողմից իրականացված աշխատանքում տեղ գտած թերությունների շրտկմանը: «Գործող քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է տարբեր եղանակներ՝ լրացնելու համար նախնական քննության ընթացքում տեղ գտած բացթողումները: Դրանց թվում կարևոր նշանակություն ունի գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելը»³: Ընդ որում, շատ դատավարագետներ բացասական են ընդունում այս ինստիտուտի վերացման փաստը. նրանք, որպես հիմնական փաստարկ, առաջ են քաշում այն գաղափարը, որ միայն լրացուցիչ նախաքննության արդյունքում է ստեղծվում իրական հնարավորություն վերացնել այն թերությունները և հակասությունները, որոնք դատարանին զրկում էին գործով դատավճիռ կայացնելու հնարավորությունից, նրանք մասնաշեղծ են, որ լրացուցիչ նախաքննությունից հետո գործերի մեծ մասը նորից մտնում էր դատական քննության փուլ և դրանցով կայացվում էին հիմնավորված մեղադրական դատավճիռներ»⁴:

Մինչ 2007թ. քրեական դատավարության օրենսդրությունում տեղի ունեցած փոփոխությունները գործը դատարանի կողմից կարող էր վերադարձվել մեղադրողին նախնական դատական վարույթի (ՀՀ քր. դատ. օր. 296-րդ հոդված) ընթացքում դատավարական օրենսգրքի պահանջներին և, մյուս կողմից, քրեական գործի նյութերին մեղադրական եզրակացության անհամապատասխանության դեպքում⁵: Նման թերությունները վերացնելու նպատակով՝ դատախազը (մինչ նախնական դատական վարույթը) կարող էր ընդունել որոշում՝ գործը քննիչին վերադարձնելու վերաբերյալ (ՀՀ քր. դատ. օր. 274-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ): 2007 թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով գործը մեղադ-

րողին վերադարձնելու ինստիտուտը մուտք է գործում նաև դատական քննության փուլ: Առավել ևս, որ մինչ այդ 2007 թվականի փետրվարի 22-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ Դատախազության մասին» ՀՀ օրենքով նման ընթացակարգ արդեն նախատեսվել էր (թեև, հաշվի առնելով նշված ակտերի ենթակարգությունը, առաջին հերթին օրենսգրքում պետք է ամրագրում ստանալին նշված դրույթները), իսկ ՀՀ սահմանադրական դատարանը նույնիսկ 2007 թվականի հուլիսի 24-ին իր կողմից ընդունված ՍԳ-Ո-710 որոշման մեջ հղում էր կատարել «ՀՀ Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածին:

Ռուսաստանի Դաշնության (այսուհետ ՌԴ) քրեական դատավարությունը, ինչպես նաև ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը հրաժարվել են լրացուցիչ նախաքննության ինստիտուտից, որի փոխարեն ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՌԴ քր. դատ. օր.) 237-րդ հոդվածը նախատեսում է, որ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ դատավորը սեփական նախաձեռնությամբ կամ կողմերից մեկի միջնորդությամբ վերադարձնում է քրեական գործը դատախազին դատարանի կողմից այն քննելու խոչընդոտները վերացնելու նպատակով, եթե՝ 1. մեղադրական եզրակացությունը կամ ակտը կազմված են օրենսգրքի պահանջներին ոչ համապատասխան, ինչը բացառում է դատարանի կողմից դատավճռի կամ այլ որոշման ընդունման հնարավորությունը տվյալ եզրակացության կամ ակտի հիման վրա, 2. մեղադրական եզրակացության կամ ակտի կրկնօրինակը չի տրվել մեղադրյալին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը հիմնավոր և օրինական է ճանաչում դատախազի՝ ՌԴ քր. դատ. օր. 222-րդ հոդվածի 4-րդ մասով կամ 226-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգով ընդունված որոշումը, 3. առաջացել է անհրաժեշտություն կազմել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վերաբերյալ որոշմամբ մեղադրական եզրակացություն կամ ակտ և ուղարկել դատարան, 4. առկա են ՌԴ քր. դատ. օր. 153-րդ հոդվածով նախատեսված քրեական գործերի միացման կամ անջատման հիմքերը, 5. մեղադրյալի կողմից գործի նյութերին ծանոթանալու ժամանակ նրան չեն բացատրվել ՌԴ քր. դատ. օր. 217-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավունքները: Ընդ որում, դատարանը դատախազին պարտա-

վորեցնում է հինգ օրվա ընթացքում ապահովել թույլ տրված սխալների վերացումը և դատախազին վերադարձված գործով՝ տվյալ հոդվածով չնախատեսված քննչական կամ այլ դատավարական գործողությունների իրագործումն արգելվում է: Միաժամանակ, հնգօրյա ժամկետի ավարտից հետո կամ տվյալ հոդվածով չնախատեսված դատավարական գործողությունների կատարման արդյունքում ստացված ապացույցները ճանաչվում են անթույլատրելի: Ավելացնենք նաև, որ ՌԴ սահմանադրական դատարանը, մեկնաբանելով գործը մեղադրողին վերադարձնելու ինստիտուտի սահմանադրա-իրավական իմաստը, իր 2003 թվականի դեկտեմբերի 8-ի N18-կ որոշմամբ՝ ՌԴ քր. դատ. օր. 237-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել է ՌԴ Սահմանադրությանը չհակասող, քանի որ դրանում պարունակվող դրույթներն իրենց սահմանադրաիրավական իմաստով իրավունքի նորմերի համակարգում չեն բացառում դատարանի իրավասությունը քրեական գործը սեփական նախաձեռնությամբ կամ կողմերից մեկի միջնորդությամբ վերադարձնել դատախազին, եթե մինչդատական փուլում թույլ են տրվել դատավարական օրենքի էական խախտումներ, որոնք հնարավոր չէ վերացնել դատական քննության ընթացքում, եթե գործը վերադարձնելը կապված չէ հետաքննության կամ նախաքննության բացերը լրացնելու հետ:

ՌԴ քր. դատ. օր.-ում նման ընթացակարգի նախատեսումը բազմաբովանդակ քննարկումների տեղիք է տվել: Մասնավորապես, Վ. Ազարովը, Ա. Բարանովը և Ս. Սուպրունը կարծում են, որ՝ «տրվյալ ինստիտուտի էությունը կայանում է նախնական քննության մարմինների կողմից հնգօրյա ժամկետում քրեական գործով դատավարական գործողությունների կատարման մեջ՝ դատարանի կողմից բացահայտված քրեադատավարական օրենքի էական խախտումները վերացնելու նպատակով՝ առանց նոր ապացույցների ձեռքբերման իրավունքի»⁷: Օ.Վ. Վոլկովուպը կարծում է, որ ՌԴ քր. դատ. օր. 237-րդ հոդվածն իրենից ներկայացնում է նոր քրեադատավարական մեխանիզմ՝ ուղղված բացառապես ձևական խախտումների շտկմանը, որոնք թույլ են տրվել նախնական քննության մարմինների կողմից, և խոչընդոտ են հանդիսանում գործն ըստ էության քննելու համար⁸: Ա. Ալեքսանդրովը և Ս. Բելովը մատնանշում են, որ օրենսդիրը ձգտել է գործը դատախազին վերադարձնելու ինս-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տիտուտին տալ դատական քննության ընթացքում ծագած խոչընդոտների վերացմանն ուղղված տեխնիկական սարքավորման բնույթ⁹: Ե.Վ. Եժովան կարծում է, որ ուսումնասիրվող ինստիտուտի էությունը (նրա ներքին կողմը) ներկայացնելու համար անհրաժեշտ է ընդունել հետևյալը. «մենք ելակետ ենք համարում այն, որ գործը դատախազին վերադարձնելը դատարանի հսկողական մեխանիզմ է նախնական քննության նկատմամբ, քանի որ Ռուսաստանի քրեական դատավարությունը կառուցված է այնպես, որ յուրաքանչյուր հաջորդ փուլ հսկողություն է իրագործում նախորդի նկատմամբ»¹⁰: Լիովին համաձայնելով հեղինակի այս կարծիքի հետ և վերացարկելով այն հայրենական քրեական դատավարության մեջ՝ նշենք նաև, որ կան հեղինակներ, որոնք կարծում են, որ գործը մեղադրողին վերադարձնելու ինստիտուտում իր արտահայտությունն է գտել նախկինում գոյություն ունեցող լրացուցիչ նախաքննության ինստիտուտը¹¹, իսկ որոշ տեսաբաններ հանդես են գալիս լրացուցիչ նախաքննության վերականգման տեսանկյունից¹²:

ՀՀ քրեական դատավարությունում տեղի է ունեցել նախկինում մերժված դրույթների քողարկում մեկ այլ ընթացակարգի շրջանակներում:

Այսպես, ի տարբերություն ՌԴ դատավարական օրենսդրության մեջ ամրագրված մոտեցման՝ հայրենական տարբերակում մեղադրողը ոչ թե վերացնում է դատավարական օրենքի էական խախտումները՝ առանց մեղադրանքը լրացնելու, այլ անմիջականորեն մշակում է այն: ՀՀ քր. դատ. օր. 309¹ հոդվածը, զարգացնելով «ՀՀ Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դրույթները, ամրագրում է. «Եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը **խստացման կամ մեղմացման**¹³ առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և **չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում**, և եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս **մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու**, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: Մեղադրո-

ղը մնան միջնորդությամբ կարող է հանդես գալ **մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը**» (ՀՀ քր. դատ. օր. 309¹ հոդվածի 1-ին մաս): Հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար: Նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամտորեն պահանջվում է **ավելի երկար ժամկետ**: Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու դեպքում մեղադրողը կազմում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում, **որը ձեռք բերված նյութերի հետ ներկայացնում է դատարան** (ՀՀ քր. դատ. օր. 309¹ հոդվածի 2-րդ մաս): Մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալ փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղաազրվում է (ՀՀ քր. դատ. օր. 309¹ հոդվածի 3-րդ մաս): Եթե դատաքննության ընթացքում պարզվում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ, իսկ մեղադրողը խստացնելու առումով արարքը վերաորակելու որոշում չի կայացնում կամ վերաորակելու համար դատական նիստը հետաձգելու միջնորդություն չի ներկայացնում, ապա **դատարանն իր նախաձեռնությամբ** մինչև 10 օր ժամկետով հետաձգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը: Մեղադրական եզրակացությունը վերահաստատելուց հետո դատարանը, մեղադրական եզրակացությանը համապատասխան, կայացնում է դատական ակտ:

Օրենսդիրն այնքան ուղղակի և ակնհայտ է վերակենդանացրել լրացուցիչ նախաքննության ինստիտուտը, որ այլակարծիքությունը բացառվում է: Միաժամանակ, առկա են որոշակի յուրահատկություններ, մասնավորապես՝

- որպես մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

լու վերաբերյալ միջնորդության ներկայացման անհրաժեշտություն է նախատեսվում նաև առաջադրված մեղադրանքի մեղմացումը,

- մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը պետք է ներկայացվի միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում՝ հուշելով մեղադրանքի լրացման կամ փոփոխման անհրաժեշտության մասին,

- օրենսդիրը չի բացառում մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու հնարավորությունը առանց դատական քննությունը հետաձգելու, և ամրագրում է, որ մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը պետք է ներկայացվի միայն այն դեպքում, երբ գործի փաստական հանգամանքները նման հնարավորություն չեն տալիս,

օրենսդրի մոտեցման համաձայն՝ եթե գործն ընդունվել է դատական վարույթ, ապա այն պետք է հանգուցալուծվի դատական նիստում¹⁴, և մեղադրանքը փոփոխվում կամ լրացվում է առանց լրացուցիչ նախաքննության՝ դատական քննության հետաձգման ժամանակահատվածում անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ կատարելու միջոցով,

- նախկինում լրացուցիչ նախաքննության համար ՀՀ քր. դատ. օր. 197-րդ հոդվածով նախատեսված ժամկետները առանց փոփոխության սահմանվել են նաև դատարանի կողմից գործը մեղադրողին վերադարձնելու դեպքերի համար,

- եթե ՀՀ քր. դատ. օր. 311-րդ հոդվածի 2-րդ կետով դատարանը լրացուցիչ նախաքննության որոշում ընդունում էր միայն մեղադրողի միջնորդությամբ, ապա ներկայումս դատարանը սեփական նախաձեռնություն է ցուցաբերում մեղադրանքը մշակելու համար:

Ավելացնենք նաև՝ քրեադատավարական օրենքի էական խախտումը, լիովին անհասկանալի կերպով, որպես գործը մեղադրողին վերադարձնելու հիմք նախատեսված չէ, և, սկզբունքորեն, ռուսաստանյան մոտեցումը, կապված (առանց նախնական քննության բացերը լրացնելու) նմանօրինակ խախտումների շտկման հետ, լիովին կիրառելի է նաև հայրենական դատավարությունում, ուր միայն նախնական դատական վարույթում է կիրառվում քրեական օրենսգրքի պահանջներին մեղադրական եզրակացության անհամապատաս-

խանությունը վերացնելուն ուղղված ընթացակարգը, և ենթադրվում է, որ տվյալ անհամապատասխանությունը կարող է շտկվել և պետք է շտկել նաև դատավարության այս փուլում:

Ուշագրավ է, որ տեսական գրականության մեջ փորձեր են արվել ընդգծել այն հանգամանքի կարևորությունը, որ դատական քննության ընթացքում կարող են ի հայտ գալ այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և ուղղակիորեն վկայում են մեղադրանքի փոփոխության կամ լրացման մասին: Մասնավորապես, Օ.Յ. Բակն իր մեծագրությունում նշում է. «...դատական պրակտիկայում կարող են հանդիպել (և արդեն հանդիպում է) այնպիսի իրավիճակներ, երբ դատական քննության ընթացքում բացահայտվում են նոր հանգամանքներ, որոնց ստուգումն անմիջականորեն դատաքննության ընթացքում անհնար է: Նշենք, որ նման անհնարիության ընկալման վրա է հիմնված պրոֆեսիոնալ պաշտպանության տարածված հնարքներից մեկը. պաշտպանը ձեռք է բերում ապացույցներ, որոնք վկայում են նախկինում նախնական քննության մարմինների համար անհայտ և մինչև դատական քննությունը գոյություն ունեցող հանգամանքների մասին՝ դրանով դատաքննության ընթացքում ստեղծելով պաշտպանյալի՝ քրեական հետապնդման հիմնավորված լինելու վերաբերյալ անհերքելի կասկածներ»: Շարունակելով միտքը՝ հեղինակը ևս մեկ անգամ նշում է. «... խոսքը ոչ թե դատական քննության ընթացքում մինչդատական վարույթում քրեական գործով թույլ տրված բացթողումների լրացման, այլ դատարանի կողմից գործի քննության ընթացքում նոր ի հայտ եկած հանգամանքներին արձագանքելու անհրաժեշտության մասին է, այնպիսի հանգամանքների, որոնց ի հայտ գալու կանխատեսումը նախնական քննության ընթացքում գործնականում անհնար է եղել»¹⁵:

Կարծում ենք՝ հեղինակը տվյալ դեպքում կարծես նոր ի հայտ եկած հանգամանքներով գործի նորոգման ընթացակարգը էքստրապոլյացիայի է ենթարկում առաջին ատյանի դատարանում գործի քննության վրա՝ այն տարբերությամբ, որ գործի (տվյալ դեպքում՝ նախաքննության) նորոգումը բխում է մեղադրանքի կողմի շահերից: Օ.Յ. Բակը, շարունակելով միտքը, հղում է կատարում նաև Ա. Սմիրնովի և Կ. Կալինովսկու հայտնած մտքին¹⁶.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«Քրեական դատավարության օրենսգիրքը¹⁷ չի պարզաբանում «այլ, նոր ի հայտ եկած հանգամանքների» բովանդակությունը (այն հանգամանքների, որոնց մասին այստեղ խոսվում է), սակայն կասկած չի հարուցում այն, որ դրանք են «այն հանգամանքները, որոնք անհայտ են դատարանին դատական որոշում կայացնելիս¹⁸, և վկայում են դատավճռի կամ ըստ էության կայացված այլ որոշման ոչ օրինական (սխալ) լինելու մասին»:

Լիովին համաձայնելով հեղինակի հետ՝ կարծում ենք, որ խոսքը լրացուցիչ նախաքննության որակապես նոր կամ գործը մեղադրողին վերադարձնելու ինքնուրույն հիմքի մասին է, որի ծնունդը պայմանավորված է մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու անհրաժեշտությունը պայմանավորող և դատական քննության ընթացքում բացահայտված հանգամանքների շարքում դասակարգում իրագործելու հետ: Իսկ նման դասակարգման չափանիշ է հանդիսանում մինչդատական վարույթի ընթացքում դատական քննության փուլում նման հանգամանքների բացահայտման կանխատեսման անհնարինությունը, կամ, առհասարակ, նախնական քննության մարմինների հիմնավոր անընդունակ լինելը՝ բացահայտելու տվյալ հանգամանքները նախնական քննության փուլում: Սակայն ողջ հիմնախնդիրը նրանում է, որ ընդհանուր՝ բոլոր գործերի վրա տարածվող չափանիշներ, կարծում ենք, չկան՝ որոշելու համար, թե արդյոք առկա է եղել նման անընդունակություն և անհնարինություն, թե ոչ: Տվյալ դեպքում, պետք է ղեկավարվել կոնկրետ գործի հանգամանքներով:

Միևնույն ժամանակ, պետք է նշել նաև հետևյալը. ՀՀ սահմանադրական դատարանը լիովին անհասկանալի կերպով լրացուցիչ նախաքննության հակասահմանադրականությունը հիմնավորելուց հետո հավանության է արժանացնում «ՀՀ Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասում տեղ գտած գործը մեղադրողին վերադարձնելու ընթացակարգը, որի պայմաններում կենսագործվում են այն նույն լծակները, որոնք անընդունելի են համարվում լրացուցիչ նախաքննության ինստիտուտի դեպքում: Մասնավորապես խոսքը՝ 1. ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքին հակադրվող մեկամսյա (և նույնիսկ երկարացման հնարավորություն ունեցող) ժամկետի մասին է, 2. մրցակցության, անմեղության կանխավարկածի սկզբունքին, չփարատված կասկածները

հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու՝ դատավարական կանոնին, դատարանի անաչառության և անկողմնակալության գաղափարին հակադրվող մեղադրանքի կողմի և դատարանի համագործակցության մասին է, համագործակցություն՝ ուղղված մեղադրանքը կատարելագործելուն կամ, ինչպես ՀՀ քր. դատ. օր. 309¹ հոդվածում է ձևակերպված, մեղադրանքը լրացնելուն կամ փոփոխելուն: Պետք է նշել նաև, որ ՀՀ քր. դատ. օր. 309¹ հոդվածի 2-րդ կետում ուղղակիորեն ամրագրված չէ, թե ով է իրավասու երկարացնել նշված ժամկետը: Հոդվածի ընդհանուր իմաստից կարելի է միայն ենթադրել, որ նման որոշում կարող է ընդունել միայն դատական նիստը հետաձգելու մասին որոշում ընդունած դատարանը:

Հուսադրող է, կարծես, միայն այն հանգամանքը, որ ի տարբերություն լրացուցիչ նախաքննության մեզ հայտնի բովանդակության, երբ դատարանը օժանդակում էր նախնական քննության մարմինների գործողություններում առկա բացթողումների լրացմանը կամ թերությունների շտկմանը, որոնք նրանք կարող էին թույլ չտալ և պետք է թույլ չտային, գործը մեղադրողին վերադարձնելու ինստիտուտում իր զարգացումն է գտել դատարանի կողմից մինչդատական փուլի նկատմամբ իրագործվող վերահսկողության մեխանիզմը՝ մեղադրանքի լրացումը կամ փոփոխումը կապելով ոչ թե թերի նախաքննության, այլ օբյեկտիվ հիմքերով կոնկրետ հանգամանքների բացահայտման անհնարինության հետ:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է նշել, որ հայրենական քրեական դատավարությունը որդեգրել է լիովին նոր (ՌԴ քրեադատավարական օրենսդրության համեմատ՝ լրացված) մոտեցում դատական քննության ընթացքում դատարանի կողմից մինչդատական վարույթի նկատմամբ հրսկողական մեխանիզմների կիրառման հարցում, որի էությունը կայանում է ոչ թե նախնական քննության թերությունները շտկելու, այլ նախնական քննությանը գործնականում անհասանելի հանգամանքների ստուգման մեջ, ինչը ևս, ինչպես լրացուցիչ նախաքննությունը, ուղղված է օբյեկտիվ ճշմարտության բացահայտմանը: Մյուս կողմից, դատավարությունը տվյալ դեպքում ևս բախվել է այն նույն լրացուցիչ քննչական գործողությունների իրականացման անթույլատրելիությունը հիմնավորող դրույթների հետ, որոնք ներկայացված են, մասնա-

www.moj.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վորապես ՍԳՈ-710 որոշման մեջ: Հետևաբար, կարծում ենք, որ գործը մեղադրողին վերադարձնելու ինստիտուտը չի հանդիսանում որպես լրացուցիչ նախաքննության համարժեք ընթացակարգ: Նոր պայմաններում նախնական քննության մարմինների գործունեության վրա ազդող գործոնների շարքում առանձնացվում են սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոններ՝ նախապատվությունը տալով վերջիններին: Միևնույն ժամանակ, վերակենդանացվել են քրեական գործի հետադարձ ուղղորդման միևնույն և, գերիշխող մոտեցման համաձայն, անընդունելի լծակները: Լրացուցիչ նախաքննության էությունը ամփոփված է դրա անհրաժեշտությունն առաջացնող հիմքերի բովանդակությունում: Ամրագրելով որակապես նոր հիմք՝ քրեական դա-

տավարությունը խնդրո առարկա ընթացակարգային բնագավառում ընթանում է լիովին այլ ուղիով: Սակայն ակնհայտ ակնառու և, միաժամանակ, գործը մեղադրողին վերադարձնելու ինստիտուտը որպես լրացուցիչ նախաքննության համարժեք ընթացակարգ համարելու կասկածներ առաջացնող հանգամանք է հանդիսանում այն, որ հայրենական քրեական դատավարությունը չի հաղթահարել լրացուցիչ նախաքննության անթույլատրելիությունը հիմնավորող, և լայն քննարկումների տեղիք տվող վերը նշված հակասությունները, որոնք իրենցից ներկայացնում են լրացուցիչ քննչական և դատավարական գործողությունների խոչընդոտ հանդիսացող անհերքելի գործոններ:

¹ Տե՛ս Խաչատրյան Գ.Մ. Քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելը: Աշխատությունը նախապատրաստվել և հրատարակվել է «Ֆենիդա» ՀԿ-ի կողմից: Երևան, 2006, էջ 8:
² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս (2-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) - Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2005, էջ 224:
³ Տե՛ս Направление судом уголовного дела на следствие. Гальперин И.М. Государственное издательство юридической литературы. М., 1960. С. 13.
⁴ Տե՛ս Дегтярев В.П., Гаврилов Б.Я. Возврат к институту следования: за и против // Уголовный процесс. 2005г. N 2. С. 25-29; Зыкин В. Необходимо восстановить институт возвращения судом уголовных дел для дополнительного расследования Законность. 2005. N 8. С. 33-35.
⁵ Տե՛ս ՀՀ Քրեական դատավարություն: Հատուկ մաս (2-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով): Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2005, էջ 274:
⁶ Տե՛ս Постановление Конституционного суда Российской Федерации “По делу о проверке конституционности положений статей 125, 219, 227, 229, 236, 237, 239, 246, 254, 271, 378, 405 и 408, а также глава 35 и 39 Уголовно-процессуального кодекса Российской Федерации в связи с запросами судов общей юрисдикции и жалобами граждан” // Российская газета. 2003. 8 дек.
⁷ Տե՛ս Азаров В., Баранов А., Супрун С. Возвращение уголовного дела для производства дополнительного расследования: правосознание и закон, толкование и применение // Уголовное право. 2004. N 2. С. 85.
⁸ Տե՛ս Волколуп О.В. Система уголовного судопроизводства и проблемы ее совершенствования. СПб., 2003. С. 119.
⁹ Տե՛ս Александров А., Белов С. Возвращение уголовного дела прокурору // Законность. 2004. N 12. С. 31.
¹⁰ Տե՛ս Ежова Е.В. Институт возвращения уголовного дела прокурору. М.: Издательство “Юрлитинформ”, 2007. С. 45.
¹¹ Տե՛ս Վ. Ազարովի, Ս. Բարանովի և Ս. Սուպրունի, Օ.Վ. Վոլկովուպի նշված աշխատանքները, ինչպես նաև Зыкин В. Необходимо восстановить институт возвращения судом уголовных дел для дополнительного расследования// Законность. 2005. N 8. С. 33-35.
¹² Տե՛ս Жеребятъев И.В. Личность потерпевшего в современном уголовном судопроизводстве России. Монография. Оренбург, 2004. С. 144-145; Петуховский А. Восстановить институт возвращения судом уголовного дела на дополнительное расследование // Российская Юстиция. 2004. N 2. С. 47-49; Яценко Е. Размышления у парадного фасада УПК // Российская Юстиция. 2002. N 12. С. 66-67; Александров А., Белов С. Возвращение уголовного дела прокурору // Законность. 2004. N 12. С. 31-32.
¹³ Տե՛ս Այստեղ և այսուհետ օրենքների հողվածների տեքստում առկա շեղագրումները՝ հեղինակի կողմից:
¹⁴ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ կետի, 414.2.-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի 24.07.2007թ.-ի որոշման 11-րդ կետ:
¹⁵ Տե՛ս Баев О.Я. Уголовно-процессуальные исследования преступлений: система и ее качество. М. Издательство “Юрлитинформ”, 2007. С. 162-164.
¹⁶ Տե՛ս Смирнов А., Калиновский К. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. СПб., 2004. С. 769.
¹⁷ Տե՛ս Խոսրը Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի մասին է:
¹⁸ Տե՛ս Կորագրումը Օ.Յ. Բակի կողմից:

www.moj.am

ԱՆՆԱ ԴԱՆԻԲԵԿՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի, քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ



**ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուր անձի կյանքի, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, անձնական և ընտանեկան կյանքի պաշտպանությունը ցանկացած ապօրինի միջամտությունից, սեփականության և բնակարանի անձեռնմխելիությունը: Օրենքով պաշտպանվող բարիքների դեմ ուղղված ոտնձգությունից անհրաժեշտ պաշտպանությունը, հանդիսանալով անձի սահմանադրական իրավունքների իրացման եղանակներից մեկը, հավասարապես վերապահվում է ինչպես ՀՀ բոլոր քաղաքացիներին, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց: Հանրության համար վտանգավոր ոտնձգություններից քաղաքացիների պաշտպանության իրավունքն ամրագրող իրավական նորմի առկայությունը քրեական օրենսդրությունում և վերջինիս ճիշտ կիրառումը խթանում են քաղաքացիների սոցիալապես ակտիվ վարքագիծը, հանդիսանում են կարևոր նախապայմաններ՝ պետության կողմից հանցավորության դեմ տարվող պայքարին բնակչությանը ներգրավելու և այն ավելի արդյունավետ դարձնելու համար, յուրաքանչյուր անհատին հնարավորություն է ընձեռվում անմիջականորեն կանխելու իրավախախտումները՝ աջակցելով իրավապահ մարմինների աշխատանքին: Օրենքով երաշխավորված իրավունքներն ու շահերը պաշտպանելիս քաղաքացիների ակտիվ վարքագծում պետության շահագրգռվածությունն իր արտացոլումն է գտել ՀՀ քրեական օրենսգրքի նորմերում:

մի շարք կարևորագույն հարցեր, որոնք երբեմն խոչընդոտում էին նշված իրավական նորմի իմաստի միատեսակ ըմբռնմանն ու կիրառմանը: Անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված գործողություններին իրավակիրառող մարմինների կողմից հաճախակի տրվում էր տարբեր իրավաբանական գնահատական, որը պայմանավորված էր համապատասխան իրավահարաբերությունները կարգավորող իրավական կարգադրագրերի ոչ բավարար պարզությամբ և որոշակիությամբ: 2003 թվականի օգոստոսի 1-ին գործողության մեջ է դրվել ՀՀ նոր քրեական օրենսգրքը, որը հանգեցրել է մի շարք ինստիտուտների քրեաիրավական կարգավորման արմատական փոփոխություններին: Գործող քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածով նախատեսված անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի օրենսդրական ձևակերպումն էապես ավելի լայն է իր բովանդակությամբ՝ նախկինի համեմատ, և թեև գուրկ չէ որոշ թերություններից, սակայն, անշուշտ, վկայում է նշված ինստիտուտի զարգացման մասին. այն պարունակում է մի շարք դրույթներ, որոնք նախկինում որոշվում էին միայն քրեական իրավունքի տեսությունում և կոչված են որոշակիություն մտցնելու տվյալ ինստիտուտի կիրառման գործընթացում, բացառելու տարածայնությունները՝ այն մեկնաբանելիս, նպաստելու այդ ինստիտուտի միատեսակ կիրառմանը և որպես հետևանք՝ նվազագույնի հասցնելու դատական սխալների թիվը համապատասխան կատեգորիայի քրեական գործեր քննելիս:

Նախկինում գործող՝ 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածում ամրագրված անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի օրենսդրական ձևակերպմամբ անտեսվում էին հանրորեն վտանգավոր ոտնձգությանը և պաշտպանությանը վերաբերող

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակու-

www.moj.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյան կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում»։ Ի տարբերություն նախկին խմբագրության, գործող քրեական օրենսգրքը ճանաչել է ոչ միայն հանրորեն վտանգավոր ոտնձգությունից, այլև դրա իրական սպառնալիքից պաշտպանվելու իրավաչափությունը։ Թեև մինչ այդ տվյալ տեսակետը արտացոլված էր քրեական իրավունքի տեսությունում, սակայն դրա օրենսդրական ամրագրումն, անշուշտ, պետք է նպաստի անհրաժեշտ պաշտպանության հետ կապված իրավահարաբերությունների ավելի արդյունավետ կարգավորմանը։ Գործող օրենսգրքում, ի տարբերություն նախկինի, օրենքով պաշտպանվող, թվարկվող բարիքներից առաջինը նշված են անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, այնուհետև՝ հասարակության և պետության շահերը, որը վկայում է պետական շահերի նկատմամբ անհատի իրավունքների և շահերի գերակայության սկզբունքի ճանաչման մասին և համապատասխանում է միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի պահանջներին։ Իրավական կարգավորում է ստացել նաև ոտնձգություն կատարողին մահ պատճառելու, ինչպես նաև պաշտպանվելիս զենք և որպես զենք օգտագործվող այլ միջոցներ կիրառելու իրավաչափության խնդիրը, որը կարևոր նշանակություն ունի անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման հարցը որոշելիս։ Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «Անձի կյանքի համար վտանգավոր բռնության կամ այդպիսի բռնության իրական սպառնալիքով զուգորդված ոտնձգությունից պաշտպանվելիս կարող է պատճառվել ցանկացած վնաս, այդ թվում՝ մահ»։ Նույն հոդվածի 5-րդ կետով սահմանվում է. «Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում չի համարվում և քրեական պատասխանատվության չի հանգեցնում զենքի կամ ցանկացած այլ միջոցների կամ առարկաների գործադրումը զինված անձի հարձակումից կամ անձանց խմբի հարձակումից պաշտպանվելու համար, ինչպես նաև սպորինաբար և բռնությամբ բնակարան կամ այլ շինություն ներխուժելը կանխելու համար՝ անկախ ոտնձգողին պատճառած վնասի ծանրությունից»։ Անհրաժեշտ պաշտպանության վիճակում ոտնձգողին կյանքից զրկելը

դատական պրակտիկայում հիմնականում դիտվել է որպես անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցում։ Նախկին քրեական օրենսգրքում կարգավորված չէր նաև պաշտպանվողի կողմից զենքի կիրառման հարցը, որն իրավակիրառողի կողմից նույնպես շատ հաճախ գնահատվում էր որպես սահմանազանցում։ Նշված դրույթների օրենսդրական ամրագրումն էապես նպաստում է իրավական կարգադրագրերի ճիշտ կիրառմանը՝ անհրաժեշտ պաշտպանության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորելիս։

Գործող քրեական օրենսգրքի նվաճումների թվին կարելի է դասել նաև 42-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմը, որի ուժով՝ «Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում՝ անկախ ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև անկախ անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից և պաշտոնական դիրքից»։ Սահմանելով վերոհիշյալ դրույթը՝ օրենսդիրը ելել է այն հանգամանքից, որ քրեական իրավունքի տեսությունում նշված հարցը լուծվում էր ոչ միանշանակ։ Իրավաբանական գրականությունում գերակշռող կարծիքը համահունչ էր վերը շարադրված տեսակետին։ Սակայն որոշ քրեագետների գիտական աշխատություններում արտահայտվում էր նաև հակառակ կարծիք, ըստ որի՝ անհրաժեշտ պաշտպանության իրավաչափությունը բացառվում է, եթե առկա է ոտնձգության խափանման նպատակով իշխանության ներկայացուցիչներին դիմելու կամ ոտնձգությունից խուսափելու հնարավորություն, որը չի օգտագործվում։ Տվյալ մոտեցումը զգալիորեն սահմանափակում էր պաշտպանվողի իրավունքները և այդ իսկ պատճառով չէր ընդունվում քրեագետների մեծամասնության կողմից։ Մինչդեռ, իրավական պրակտիկայում ոտնձգությունից խուսափելու կամ իրավապահ մարմինների օգնությանը դիմելու հնարավորության առկայության պայմաններում պաշտպանության գործադրման իրավաչափությունը երբեմն դրվում էր կասկածի տակ, քանի որ այդ խնդիրն օրենքով միանշանակ կարգավորված չէր։ Ներկայումս այն ստացել է օրենսդրական լուծում, որը բացառում է տարածայնությունները նշված հարցի շուրջ։

Միաժամանակ, առկա բացթողումների թվին կարելի է դասել այն, որ օրենքը չի պարունակում

www.moj.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«հանրության համար վտանգավոր ոտնձգություն» հասկացության բնորոշում. հատակեցված չեն ոտնձգության օբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշները (մասնավորապես, ոտնձգության՝ գործողությամբ կամ անգործությամբ դրսևորվելը), թեև օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար ավելի նպատակահարմար կլինեի դրա օրենսդրական ամրագրումը: Օբյեկտիվ կողմից հասարակական արժեքների դեմ ուղղված ոտնձգությունը, որպես կանոն, դրսևորվում է գործողությամբ, սակայն հնարավոր է նաև անգործությամբ ոտնձգություն կատարել: Որոշ հեղինակներ ժխտում են անգործության դեմ պաշտպանություն գործադրելու հնարավորությունը՝ գտնելով, որ այն հնարավոր է միայն ակտիվ գործողությունների դեպքում¹: Սակայն տվյալ մոտեցումն անհիմն սահմանափակում է անհրաժեշտ պաշտպանության իրավունքի իրացման ոլորտը, քանի որ օրենքով պաշտպանվող բարիքների համար վտանգ կարող են ներկայացնել վարքագծի տարբեր ձևերը: Պրակտիկական ցույց է տալիս, որ հանրորեն վտանգավոր ոտնձգությունը կարող է կատարվել նաև անգործությամբ: Օրինակ՝ երկաթգծի աշխատակցի կողմից սլաքը դիտավորությամբ չփոխելը՝ զնացքի խորտակում առաջացնելու նպատակով, բժշկի կողմից հիվանդին դիտավորյալ չբուժելը կամ մոր կողմից նորածին երեխային չկերակրելը՝ մահ պատճառելու նպատակով և այլն, երբ հանրորեն վտանգավոր անգործությունը խափանվում է բռնություն գործադրելու միջոցով, որը նպատակ է հետապնդում անձին հարկադրել իր պարտականությունները կատարելուն: Վ.Ի. Տկաչենկոն առաջարկել է առանձնացնել հանցավոր անգործություն դրսևորող անձանց գործելուն հարկադրելը որպես արարքի հանցավորությունը բացառող ինքնուրույն հանգամանք²: Կարծում ենք՝ այն ավելորդ է՝ հաշվի առնելով, որ նման դեպքերն ամբողջությամբ ընդգրկվում են անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի կարգավորման ոլորտում:

ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածը չի պարունակում նաև հանրության համար վտանգավոր ոտնձգության սուբյեկտիվ կողմի նկարագրություն. բացակայում է որևէ նշում ոտնձգությանը բնորոշ մեղքի ձևի վերաբերյալ, մինչդեռ տեսական գրականությունում մոտեցումը տվյալ հարցին միանշանակ չէ: Քրեական իրավունքի տեսությունում վեճերի տեղիք են տալիս այն դեպքերը, երբ անձի

անգույշ արարքի հետևանքով առաջացած վտանգը վերացվում է՝ դրա աղբյուր հանդիսացող անձին վնաս պատճառելու միջոցով: Իրավաբանական գրականությունում գերակշռող կարծիքն այն է, որ «անգույշությամբ ոտնձգելու» հնարավորությունը բացառվում է, քանի որ անգույշությամբ կատարված արարքը չի կարող դիտվել որպես ոտնձգություն. տվյալ իրադրությունում առկա է ծայրահեղ անհրաժեշտության վիճակ: Այլ հեղինակներ գտնում են, որ այդպիսի իրադրություններն ընդգրկվում են անհրաժեշտ պաշտպանության հասկացության մեջ: Այսպես՝ Յու.Վ. Բաուլինը նշել է, որ մեղքի առկայությունը չի հանդիսանում հանրորեն վտանգավոր ոտնձգության պարտադիր հատկանիշ և հետևաբար՝ անհրաժեշտ պաշտպանության հիմք, քանի որ բացի հանցագործություններից, այդպիսին կարող է լինել և՛ անմեղսունակ անձի կողմից կատարվող ոտնձգությունը, որի դեպքում մեղքի մասին խոսք լինել չի կարող, և՛ փաստական սխալի պայմաններում գործող անձի՝ վնաս պատճառող հանրորեն վտանգավոր արարքը, և այլն³: Ավելի հիմնավոր է թվում քրեական իրավունքի տեսությունում գերիշխող տեսակետը. ընդունված է համարել, որ ոտնձգությունը ենթադրում է դիտավորություն: Սակայն դա ևս վիճելի է, հետևաբար գտնում ենք, որ ոտնձգության սուբյեկտիվ կողմի բնորոշման խնդիրը պահանջում է միանշանակ օրենսդրական լուծում:

Իրավաբանական գրականությունում տարբեր է մոտեցումը պաշտոնատար անձանց գործողություններից անհրաժեշտ պաշտպանության թույլատրելիության հարցի նկատմամբ: Միանշանակ, այն անթույլատրելի է պաշտոնատար անձանց իրավաչափ գործողությունների կամ անգործության դեմ՝ նույնիսկ այն դեպքերում, եթե դրանք ուղղված են կամ կարող են հանգեցնել այլ անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակմանը (օրինակ՝ օրենքով սահմանված կարգով իրականացվող ձերբակալման, կալանավորման, ազատագրկման դատավճիռն ի կատար ածելու և այլ դեպքերում): Սակայն այն թույլատրելի է պաշտոնատար անձանց հանցավոր գործողություններին հակազդելիս: Մինչդեռ, իրավագետների մոտեցումը պաշտոնատար անձանց հանցավոր գործողությունների դեմ գործադրվող պաշտպանության իրավաչափության հարցին տարբերվում է: Որոշ հեղինակների կարծիքով՝ նման հանգամանքներ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րում պաշտպանությունը հնարավոր է միայն լրացուցիչ պայմանների առկայության դեպքում: Այսպես, Վ.Ֆ. Կիրիչենկոն գտնում է, որ անհրաժեշտ պաշտպանությունը հնարավոր է միայն պաշտոնատար անձանց այնպիսի գործողությունների կապակցությամբ, որոնք հակաօրինական են և՛ նյութական, և՛ ձևական առումներով: Ինչ վերաբերում է այն արարքներին, որոնք անհրավաչափ են ըստ էության, սակայն կատարվում են օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան (օրինակ՝ անմեղ անձը ձերբակալվում է դատավարական նորմերի պահանջների պահպանմամբ), ապա նման դեպքերում անհրաժեշտ պաշտպանության դիմելն արդարացված չէ՝ նկատի ունենալով, որ տվյալ պարագաներում առկա են անձի իրավունքների պաշտպանության այլ եղանակներ (օրինակ՝ պաշտոնատար անձի գործողությունների բողոքարկումը)⁴: Այլ քրեագետների կարծիքով՝ անհիմն է պաշտոնատար անձանց գործողությունների ձևի և բովանդակության սահմանազատումը, քանի որ իր բովանդակությամբ հանրորեն վտանգավոր, հակաօրինական արարքը չի կարող համարվել ձևականորեն օրինական և հակառակը: Ն.Գ. Դուրմանովը իրավաչափ է համարում իշխանության ներկայացուցիչների և այլ պաշտոնատար անձանց ակնհայտ հանցավոր գործողություններից անհրաժեշտ պաշտպանության իրավունքը՝ անկախ նշված գործողությունների ձևից և ոտնձգության սուբյեկտից⁵:

Կարծում ենք՝ անհրաժեշտ պաշտպանության իրավունքի սահմանափակումները, կապված ոտնձգության իրագործման ձևի և դրա սուբյեկտի հետ, չեն բխում օրենքի պահանջներից, քանի որ այդպիսիք նախատեսված չեն անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտն ամրագրող նորմերով: Հետևաբար, ոտնձգության սուբյեկտ կարող է լինել ցանկացած անձ՝ անկախ հանցագործության սուբյեկտին բնութագրող՝ քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի հասած լինելուց և մեղսունակության հատկանիշների առկայությունից, ինչպես նաև անկախ զբաղեցրած պաշտոնից: Բոլոր դեպքերում, կարծում ենք, որ տարածայնությունները բացառելու նպատակով ավելորդ չէր լինի անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի օրենսդրական ձևակերպմամբ անդրադառնալ ոտնձգության սուբյեկտին բնութագրող հատկանիշներին:

Օրենսդրի կողմից անտեսվել է անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտին առնչվող այնպիսի երևույթ, ինչպիսին է կարծեցյալ պաշտպանությունը, որն իրենից ներկայացնում է երևակայական, օբյեկտիվ իրականության մեջ գոյություն չունեցող ոտնձգությունից պաշտպանություն: Կարծեցյալ պաշտպանության վիճակում պաշտպանական գործողությունների դիմած անձին թվում է, որ կատարվում է ոտնձգություն, որն իրականում բացակայում է: Որպես կանոն, կարծեցյալ պաշտպանության դեպքում պաշտպանվողը մոլորության մեջ է գտնվում երևակայական ոտնձգողի գործողությունների բնույթի վերաբերյալ, որոնք նա սխալմամբ գնահատում է որպես հանրության համար վտանգավոր, կամ էլ «ոտնձգողի» անձի վերաբերյալ, երբ իրական ոտնձգության պարագաներում վնաս է պատճառվում դրա հետ առնչություն չունեցող երրորդ անձին, որին պաշտպանվողը սխալմամբ շփոթում է իրական ոտնձգողի հետ: Կարծեցյալ պաշտպանության իրավիճակում պաշտպանվողը գործում է փաստական սխալի ազդեցության տակ, հետևաբար՝ վնաս պատճառելու համար նրա պատասխանատվության հարցը լուծվում է փաստական սխալի կանոններով: Կարծեցյալ պաշտպանության խնդրին անդրադարձել է ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումը՝ 1984 թվականի օգոստոսի 16-ին ընդունված «Դատարանների կողմից հանրորեն վտանգավոր ոտնձգություններից անհրաժեշտ պաշտպանության իրավունքն ապահովող օրենսդրության կիրառման մասին» որոշման 13-րդ կետում պարզաբանելով, որ դատարանները պետք է տարբերեն անհրաժեշտ պաշտպանության և այսպես կոչված կարծեցյալ պաշտպանության վիճակը, երբ բացակայում է իրական հանրորեն վտանգավոր ոտնձգությունը և անձը միայն սխալմամբ ենթադրում է այդպիսի ոտնձգության առկայությունը: Այն դեպքերում, երբ դեպքի իրադրությունը հիմք էր տալիս ենթադրելու, որ կատարվում է իրական ոտնձգություն, և պաշտպանության միջոցներ գործադրած անձը չէր գիտակցում և չէր կարող գիտակցել իր ենթադրության սխալ լինելը, նրա գործողությունները պետք է դիտել որպես անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված: Մինչդեռ, եթե անձը վնաս է պատճառում՝ չգիտակցելով ոտնձգության կարծեցյալ լինելը, սակայն ըստ գործի հանգամանքների պարտավոր էր և կարող էր դա գիտակցել, ապա այդ անձի գործողու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյունները ենթակա են որակման անգուշտությամբ վնաս պատճառելու համար պատասխանատվություն նախատեսող քրեական օրենսգրքի հոդվածներով⁶: Միաժամանակ, եթե կարծեցյալ պաշտպանության վիճակում պաշտպանվողի կողմից դիտավորյալ կատարվում են այնպիսի գործողություններ, որոնք, նրա համար ակնհայտ, չեն համապատասխանում երևակայական ոտնձգության բնույթին և վտանգավորությանը, ապա արարքը պետք է դիտվի որպես անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարված: Հնարավոր են նաև դեպքեր, երբ պաշտպանվողին բոլորովին անհիմն թվում է, որ կատարվում է ոտնձգություն, թեև ստեղծված իրադրությունն ընդհանրապես հիմքեր չի տալիս մնան ենթադրություն անելու: Տվյալ պարագաներում վնաս պատճառելու համար անձը ենթակա է քրեական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով: ՀՀ քրեական օրենսգրքը չի պարունակում կարծեցյալ պաշտպանությանը վերաբերող դրույթներ, որը կարելի է դիտել որպես օրենսդրի բացթողում: Գտնում ենք, որ անհրաժեշտ պաշտպանության հետ կապված իրավահարաբերությունների առավել արդյունավետ կարգավորման համար նպատակահարմար կլինեն օրենքում ամրագրել կարծեցյալ պաշտպանության բնորոշումը և դրա իրավական հետևանքները սահմանող նորմերը:

Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի թերություններին կարելի է դասել ուսումնասիրվող ինստիտուտն ամրագրող 42-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերության անհամապատասխանությունը նույն օրենսգրքի ընդհանուր մասի որոշ նորմերին: Այսպես, 2004 թվականի հուլիսի 1-ին ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվել է փոփոխություն. լրացվել է երկրորդ պարբերությունը, ըստ որի՝ «Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ արարքը հանցագործություն է, եթե հատկապես նախատեսված է սույն օրենսգրքի հատուկ մասով»: Քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսվում է անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ երկու արարք՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանություն (108-րդ հոդված) և առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս հասցնելն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ (116-րդ հոդված): Հետևաբար, բացի վերը նշված

դեպքերից, անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ ոտնձգողին ցանկացած այլ վնաս հասցնելը հանցանք չի դիտվում:

Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները սահմանող օրենսգրքի 62-րդ հոդվածով անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմանների խախտմամբ հանցանք կատարելը նախատեսվում է որպես մեղմացուցիչ հանգամանք (62-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ): Միաժամանակ, նույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ «Եթե սույն հոդվածի առաջին մասում նշված որևէ հանգամանք սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված է որպես հանցագործության հատկանիշ, ապա դա չի կարող կրկին հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք»: Տվյալ պարագաներում՝ նույն իրավական ակտում իրարամերժ նորմերի առկայության պայմաններում, անհասկանալի է, թե ո՞ր դեպքերում պետք է կիրառվի օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը: Առաջանում է տրամաբանական հարց, թե ե՞րբ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ հանցանք կատարելը կարող է դիտվել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք: Այսպես, օրենսգրքի հատուկ մասի նորմերով նախատեսված չլինելու դեպքում անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարված արարքն ընդհանրապես հանցանք չի համարվում, իսկ հակառակ դեպքում այն նույնպես դուրս է մնում 62-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի կարգավորման ոլորտից, քանի որ մնան դեպքերում օրենսգրքի հատուկ մասի համապատասխան նորմերն արդեն իսկ նախատեսում են անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումը որպես արարքի օբյեկտիվ կողմը բնութագրող պարտադիր հատկանիշ (մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 108 և 116 հոդվածները): Այսպիսով, գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությամբ, ինչպես նաև 62-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դրույթների միաժամանակյա առկայության պարագաներում անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմանների խախտմամբ հանցանք կատարելը՝ որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք, գործակալում չի կարող կիրառվել, ուստի օրենսգրքի 62-

րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվող հանգամանքների թվում այն ընդգրկելն ավելորդ է և անտրամաբանական (նույնը վերաբերում է նաև հանցանք կատարած անձին բռնելու իրավաչափության պայմանների խախտմամբ հանցանք կատարելու հանգամանքին):

Վերը շարադրված վերլուծության հիման վրա կարելի է առաջարկել հետևյալը.

1. Օրենքում սահմանել «հանրության համար վտանգավոր ոտնձգություն» հասկացության բնորոշումը, որը պետք է ընդգրկի ոտնձգության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմը բնութագրող հետևյալ հատկանիշները՝ ա) ոտնձգության՝ օբյեկտիվորեն և՛ գործողությամբ, և՛ անգործությամբ դրսևորվելը, բ) ոտնձգությանը բնորոշ մեղքի ձևը,

2. Անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի օրենսդրական ձևակերպմամբ անդրադառնալ ոտնձգության սուբյեկտին բնութագրող հատկանիշներին,

3. Օրենսդրական լուծում տալ կարծեցյալ

պաշտպանության խնդրին՝ սահմանելով դրա հասկացությունը և իրավական հետևանքները,

4. Օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում կատարել փոփոխություն՝ թվարկվող հանգամանքներից հանելով անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմանների խախտմամբ հանցանք կատարելը:

Հասարակական առաջընթացով պայմանավորված պահանջները բավարարող, հնարավորինս հստակ ձևակերպված անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի օրենսդրական ամրագրումը կարևոր նշանակություն ունի մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների, հասարակության և պետության շահերի լիակատար իրացման և պաշտպանության իրական երաշխիքների ապահովման համար, նպաստում է իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը և հետևաբար՝ օրինականության և իրավակարգի ամրապնդմանը:

¹ Տե՛ս Կիրիչենկո Վ. Փ. Основные вопросы учения о необходимой обороне в советском уголовном праве. Л., 1948. С. 26-27.

Баулин Ю. В. Обстоятельства, исключающие преступность деяния. Харьков, 1991. С. 232-233.

² Տե՛ս Կաչենկո Վ. Ի. Необходимая оборона по уголовному праву. Л., 1979. С. 11.

³ Տե՛ս Կաուլին Ե. Վ. Обстоятельства, исключающие преступность деяния. Харьков, 1991. С. 234-235.

⁴ Տե՛ս Կիրիչենկո Վ. Փ. Основные вопросы учения о необходимой обороне в советском уголовном праве. Л., 1948. С. 97.

⁵ Տե՛ս Դурմանով Ն. Դ. Обстоятельства, исключающие общественную опасность и противоправность деяния. Советское уголовное право. Часть общая. М., 1961. С. 13.

⁶ Տե՛ս Բյուլլետենը Վերխովնոյ Կուրս ԿՍՏՐ, 1984. N 5. С. 12.

⁷ Տե՛ս Գրիգորյան Մ. Վ. Право на необходимую оборону. Ереван. Изд-во «Раздан», 2002.

⁸ Տե՛ս Վարդանյան Լ. Գ. Уголовная ответственность за убийство при превышении пределов необходимой обороны: теория и практика правового регулирования. Автореферат дисс. канд. юрид. наук. Ереван, 2008.

⁹ Տե՛ս Սոնով Ա. Ն. Обстоятельства, исключающие преступность деяния. СПб., 1998.

ԼԻԼԻԹ ԱԶԱՏՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի, քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ, դասախոս



«ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻՆ

Փողերի լվացումը հանցագործության յուրահատուկ տեսակ է: Ի տարբերություն այլ հանցագործությունների, փողերի լվացման առանձնահատկությունն ան է, որ առաջին հայացքից թվում է, թե կատարվում են օրենքով թույլատրելի գործողություններ, սակայն իրականում հանցագործը ձեռնարկում է թաքցնել իր եկամուտների անօրինական ծագումը: Այս է պատճառը, որ հասարակության համար երբեմն անհասկանալի է մնում այն հանգամանքը, թե ինչու է կայանում փողերի լվացման իրական վտանգը, ով է հանդիսանում տուժող, և հետևաբար, ինչի համար է հարկավոր փողերի լվացումը ճանաչել որպես հանցագործություն: Հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացման կործանարար հետևանքները ակնհայտ կերպով ցուցադրելու դժվարությունը հիմք է տալիս տատանվելու այդ արարքը քրեականացնելու հարցում: Դա է պատճառը, որ մի շարք երկրների օրենսդրությամբ փողերի լվացումը չի համարվում հանցագործություն: Չնայած դրան, այն պետությունները, որոնք ունեն կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մեծ փորձ, արդեն գիտակցել են, որ այդ աղետալի երևույթի հետ պայքարելու ամենարդյունավետ միջոցը կազմակերպված խմբերին զրկելն է այն հանցավոր եկամուտից, որը նրանք ցանկանում են ներդնել օրինական տնտեսության մեջ կամ օգտագործում են քաղաքական ազդեցություն ձեռք բերելու համար, որպեսզի լայնացնեն իրենց ապօրինի բիզնեսի ծավալները:

Ուշագրավ է այն փաստը, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացման ոլորտում միջազգային օրենսդրության հիմք են հանդիսացել ներպետական իրավունքի նորմերը: Առաջին օրենքները, որոնք ուղղված էին հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացմանը, մշակվել և ընդունվել են ԱՄՆ-ում¹:

Փողերի լվացման դեմ պայքարը միջազգա-

յին հանրության կողմից ընդունվում է, որպես կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հիմնական տարրերից մեկը: Միջազգային համագործակցությունը այդ ոլորտում զարգանում է երկու հիմնական ուղղություններով՝ երկկողմանի և բազմակողմանի միջազգային պայմանագրերի կրճատմամբ (կոնվենցիոն համագործակցություն) և համագործակցություն միջազգային կոնֆերանսների շրջանակներում (ինստիտուցիոնալ համագործակցություն): Զարգացած պետությունների մեծ մասը հանդիսանում են հիմնարար միջազգային կոնվենցիաների մասնակից, ինչպես նաև նրանք համագործակցում են միջազգային կազմակերպությունների հետ ինստիտուցիոնալ համագործակցության շրջանակներում:

1988թ. նոյեմբերի 10-ին Վիեննայում ընդունվեց ՄԱԿ-ի «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին» Կոնվենցիան, որը ունիվերսալ բնույթի միջազգային իրավական ակտ է: Նրանում առաջին անգամ հռչակվեց փողերի լվացման և թմրամիջոցների միջազգային անօրինական շրջանառության կապը, որը թույլ է տալիս հանցավոր խմբերին ներգործել յուրաքանչյուր պետության քաղաքականության և տնտեսության մեջ:

Կոնվենցիան առաջարկում է իր մասնակիցներին, որոնց թվում 2004թ. նաև Հայաստանն է, քրեական պատասխանատվություն նախատեսել հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների իրավական ծագումը խեղաթյուրելու համար և կանխարգելել օրինական տնտեսության մեջ հանցավոր եկամուտների ներդնումը: Կոնվենցիայի կարևոր նորամուծություններից են այն առաջարկությունները, որոնք ուղղված են բանկային գաղտնիքի սահմանափակմանը, այն դեպքերում, երբ դա խոչընդոտում է քրեական հետաքննությանը:

1990թ. նոյեմբերի 8-ին Ստրասբուրգում ընդունվեց Եվրախորհրդի «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետա-

www.moj.am

խուզման, առգրավման և բռնագրավման մասին» Կոնվենցիան: Իր դրույթներում Կոնվենցիան զարգացնում է 1988թ. ՄԱԿ-ի Վիեննայի Կոնվենցիայի փողերի լվացման դեմ պայքարի նորմերը՝ առաջին հերթին ընդլայնելով հիմնական իրավաստատումների շրջանակները, որոնք հանդիսացել են անօրինական եկամուտների աղբյուր²: Բացի այդ, Կոնվենցիան մանրամասնորեն սահմանում է միջազգային համագործակցության և փոխօգնության, փողերի լվացման հետ կապված հանցագործությունների քննության և անօրինական եկամուտների բռնագանձման սկզբունքներն ու կարգը: Ստրասբուրգյան Կոնվենցիայի ընդունմամբ սկսվում է փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում մասնագիտացված միջազգային օրենսդրության ձևավորումը: 2001թ.-ից Կոնվենցիայի մասնակից է հանդիսանում Ռուսաստանի Դաշնությունը, իսկ 2004թ.-ից՝ նաև Հայաստանի Հանրապետությունը:

Ստրասբուրգյան Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված է, որ կոնվենցիային միացող պետությունը կարող է հայտարարությամբ հայտնել, թե որ կատեգորիաների հանցագործություններն են դիտվում որպես հիմնական հանցագործություններ:

Կոնվենցիային միացած պետությունները ցուցաբերել են տարբեր մոտեցումներ հիմնական հանցագործությունների ցանկը և կատեգորիաները որոշելու հարցում: Առանձին պետություններ հիմնական հանցագործություններ դիտվող արարքների վերաբերյալ որևէ հայտարարություն չեն արել: Դա նշանակում է, որ ցանկացած հանցագործությունից ստացված եկամուտի օրինականացումը հանցավոր է: Ռուսաստանի Դաշնության հայտարարության համաձայն, օրինակ, փողերի լվացում է դիտվում ակնհայտ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների լեգալիզացիան, բացառությամբ ՌԴ քրեական օրենսգրքի 193, 194, 198, 199, 199¹ և 199² հոդվածներով նախատեսված հանցագործությունների³: Պետությունների գերակշռող մասը հայտարարություններում նշել է հանցագործությունների կատեգորիաները, որոնց արդյունքում ստացված եկամուտների օրինականացումը հանցագործություն է: Հայաստանի Հանրապետության հայտարարության համաձայն՝ փողերի լվացում է դիտվում այն հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտը, որը ձեռք է բերվել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հանցագործությունների արդյունքում: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 4-րդ կետին վերաբերող հայտարարությունում նաև նշվել է, որ Հայաստանի Հանրապետությունն իրավունք է վերապա-

հում իրեն հետագայում ավելացնել կամ պակասեցնել հանցագործությունների կատեգորիաները:

Կոնվենցիայի «Ազգային մակարդակով ձեռնարկվող միջոցներ» վերնագրով 2-րդ գլխում սահմանվել են այն նվազագույն չափանիշները, որոնք Կոնվենցիային միանալու դեպքում վերածվում են պարտավորության: Չափանիշները միաժամանակ կատարում են իրավական կարգավորման մեխանիզմի դեր: Կոնվենցիային միացող պետությունների համար առաջին հերթին կարևորվում են օրենսդրության համապատասխանեցման խնդիրները, որոնք ներառում են քրեական, քրեական դատավարության, քաղաքացիական, տնտեսական և վարչական օրենսդրության վերանայումը:

Կոնվենցիային միացող պետությունները, մասնավորապես, պարտավոր են սահմանել՝

- հանցավոր եկմուտների օրինականացման այնպիսի հասկացություն, որը ներդաշնակ է Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ներառված հասկացությանը,

- բռնագրավմանը վերաբերող այնպիսի մեխանիզմներ, որոնք պետությանը հնարավորություն կընձեռեն բռնագրավել հանցագործության գործիքները և եկամուտները կամ եկամուտներին համապատասխանող արժեք ունեցող սեփականությունը,

- բռնագրավման ենթակա գույքի նույնացման ու հայտնաբերման և այդպիսի գույքի հետ կապված ցանկացած փոխակերպման կանխարգելման մեխանիզմները,

- նախաքննության հատուկ լիազորություններ և միջոցներ, որոնք կնպաստեն համապատասխան ապացույցների հավաքմանը: Դրանց շարքին են դասվում բանկային հաշիվների վերահսկողությունը, հեռահաղորդակցության դիտարկումը և վերահսկողությունը, մուտքը համակարգչային համակարգեր ու բազմաթիվ այլ միջոցներ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն, հիմք ընդունելով 1990թ. Կոնվենցիայի ուժի ներքո հանցավոր եկամուտների օրինականացման դեմ պայքար մղելու արդյունավետությունը, 2005թ. մայիսի 3-ին ընդունել է երեք միջազգային իրավական փաստաթուղթ, ներառյալ՝ «Հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագանձման ու ահաբեկչության ֆինանսավորման մասին» Կոնվենցիան, որը բացվել է ստորագրության համար Վարշավայում 2005 թ. մայիսի 16-ին: Այն առաջին փաստաթուղթն է, որը ահաբեկչության ֆինանսավորման և հանցավոր գործունեությունից ձեռք բերված եկամուտների օրինականացման դեմ պայքար-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ընդ որում է որպես միասնական խնդիր⁴ :

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա փողերի լվացման դեմ իրականացվող պայքարի մեխանիզմներ մշակվել են նաև այստեղ: Մասնավորապես, 2004թ. դեկտեմբերի 14-ին ընդունվեց «Հանցավոր ճանապարհով ստացած եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ առաջին օրենքը, որի հիման վրա 2005թ. ստեղծվեց **Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ-ՈՒ)**: ՖԴԿ-ն գործում է Կենտրոնական բանկի կազմում և հանդիսանում է ՀՀ ֆինանսական հետախուզության մարմին: Նրա գործունեության նպատակն է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմների ներդրումը: ՖԴԿ-ի ջանքերի շնորհիվ 2008թ-ին մշակվել և ընդունվել են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ նոր օրենքը և դրա հիման վրա շուրջ 15 օրենքներում փոփոխությունները և լրացումները: Այս նոր օրենսդրական հենքը էապես ներդաշնակեցրել է Հայաստանի իրավական համակարգը՝ ոլորտում գործող միջազգային ստանդարտներին:

Եվրոպայի խորհրդի 1991թ. հունիսի 10-ի թիվ 98/308 «Փողերի լվացման համար ֆինանսական համակարգի օգտագործումը կանխելու մասին» Դիրեկտիվը այլ միջազգային կոնվենցիաներից տարբերվում է նրանով, որ Եվրախորհրդի անդամ-պետությունների համար ունի պարտադիր բնույթ: Այն պարունակում է մանրամասն ցուցումներ, որոնք պետությունները պետք է ընդունեն ներպետական մակարդակում՝ փողերի լվացման դեմ պայքարում: Այդ միջոցները ներառում են հետևյալ սկզբունքների օրենսդրական ամրապնդումը.

- ֆինանսական համակարգի միջոցով խոչոր գործարքների գրանցում և հաճախորդի մասին մանրամասն տեղեկության հավաքում,

- խստացնել քրեական պատիժը՝ փողերի լվացման և այդ հանցագործությունում մասնակցելու համար, ապահովել «վազված» սեփականության և դրանից ստացված եկամուտների բռնագանձումը,

- քրեական գործերի քննության ընթացքում բանկային գաղտնիքի մասին օրենքների սահմանափակումը,

- ապահովել պետությունների միջև փողերի լվացման քրեական գործերի քննության վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը:

ԱՊՀ Միջխորհրդարանական Ասամբլեայի կողմից 1998թ. դեկտեմբերի 8-ին հաստատված

«Անօրինական ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը (լվացմանը) հակազդելու մասին» մոդելային օրենքում նույնպես արտացոլվում է օրենսդրության ունիֆիկացիայի դրական տենդենցը⁶ :

Անդրազգային հանցավորության առավել արդյունավետ կանխարգելման և դրա դեմ պայքարի ուղղությամբ իրականացվող համագործակցությանը աջակցելու նպատակով ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 2000թ. նոյեմբերի 15-ին Պալերմոյում ընդունեց «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի Կոնվենցիան: Պալերմոյի Կոնվենցիայում առաջին անգամ սահմանվել են կազմակերպված հանցավոր խմբի, կառուցվածքայնորեն ձևավորված խմբի, անդրազգային հանցագործության և տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպության միջազգային իրավական բնորոշումները, բացի այդ, վերստին պարզաբանվել են մի շարք այլ հասկացություններ, այն է՝ «գույք», «հիմնական իրավախախտում», «կալանք կամ առգրավում», «բռնագրավում», «հանցագործությունից ստացված եկամուտ», առանց որի տարբեր իրավական համակարգեր ունեցող պետություններում դրանց իրավաբանական բովանդակության միասնական մեկնաբանությունն անիրագործելի կլիներ⁷ :

Կոնվենցիայի կիրառման ոլորտն է հանդիսանում հակազդումը հետևյալ հանցավոր արարքներիին.

- մասնակցությունը կազմակերպված հանցավոր խմբում,
- հանցագործություններից ստացված եկամուտների լվացումը,
- կաշառակերությունը,
- արդարադատության իրականացմանը խոչընդոտելը,

կոնվենցիայի 2-րդ հոդվածի «բ» կետում սահմանված լուրջ հանցագործությունները, եթե այդպիսիք կրում են անդրազգային բնույթ և կատարվել են կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ:

Անդրազգային կազմակերպված հանցավորության և անդրազգային բնույթի այլ հանցագործությունների դեմ պայքարը հիմնվում է կոնվենցիայով սահմանված պարտավորությունների կատարման և միջպետական համագործակցության ընդլայնման անհրաժեշտության վրա, որոնցով պայմանավորվում են միջազգային հանրության համար համընդհանուր վտանգավորություն ներկայացնող արարքների, այդ թվում նաև՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինակա-

նացման, ահաբեկչության ֆինանսավորման քրեականացման, ինչպես նաև այդ արարքների կատարման համար արդյունավետ, համաչափ պատժական քաղաքականության իրականացման վրա⁸ :

Քրեականացման հիմնական սկզբունքների թվում է նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության խնդիրը: Նշենք, որ այդ ինստիտուտը բացակայում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության մեջ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ և 23-րդ հոդվածները ճանաչում են սոսկ մեղսունակ, հանցանքը կատարելու պահին օրենքով սահմանված տարիքի հասած ֆիզիկական անձի իր կատարած հանցանքի համար անձնական քրեական պատասխանատվության սկզբունքը:

Միջազգային չափանիշներին համապատասխանող օրենսդրություն ընդունելու բնագավառում, մասնավորապես, Պալերմոյի կոնվենցիայում և այն լրացնող երկու արձանագրություններում մատնանշված արարքները քրեականացնելու ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունը իր պարտավորությունները կատարել է: Առանցքային քրեաիրավական հասկացություններ բնորոշած կոնվենցիայի դրույթները իրենց արտացոլում են գտել ՀՀ գործող քրեական օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերում: Այսպես, ըստ բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանված հանցագործությունների դասակարգումը, ինչպես նաև 41-րդ հոդվածում սահմանված կազմակերպված հանցավոր խմբի և հանցավոր համագործակցության հասկացությունների բնորոշումները բխում են Պալերմոյի կոնվենցիայի 2-րդ հոդվածի նորմից:

Հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի համաձայն՝ փողերի վացում է համարվում հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելիությունը թաքցնելը կամ պատկանելիությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե

այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում): Այս սահմանումը համապատասխանում է Պալերմոյի կոնվենցիայի 6-րդ հոդվածում պարունակվող փողերի վացման հասկացության բնորոշմանը, մինչդեռ քննարկվող քրեաիրավական նորմի նախկին խմբագրությունը՝ «անօրինական ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը (լեգալացնելը)» հանգեցնում էր դրա անհիմն լայն մեկնաբանության, քանի որ ոտնձգության անմիջական օբյեկտի և օբյեկտիվ կողմի հասկացությունների բնորոշումների միջև ի հայտ էր եկել ակնհայտ հակասություն⁹ :

Փողերի վացման դեմ պայքարին նվիրված միջազգային-իրավական նորմերի զարգացումը ուսումնասիրելով՝ կարելի է առանձնացնել փողերի վացումը կանխարգելող միջազգային համակարգի զարգացման հետևյալ միտումները՝

- համընդհանուր բնույթի տերմինաբանության և միջազգային իրավական ակտերի տեքստում փողերի վացման հետ կապված հիմնական հասկացությունների մշակում՝ FATF-ի առաջարկությունների հիման վրա օրինական տնտեսության մեջ «կեղտոտ» փողերի ներմուծմանը հակադրելու համակարգի ստեղծում,

- մերձավորեցման ձգտում, իսկ մի շարք դեպքերում, տարբեր իրավական համակարգերի ներպետական օրենսդրության ունիֆիկացիան՝ փողերի վացմանը հակադրելու ուղղությամբ,

- փողերի վացման դեմ պայքարի համար պատասխանատու կենտրոնների ստեղծում և դիտարկված ոլորտում միջազգային համագործակցության արդյունավետ ուղղությունների և գործընթացի մշակում՝ ազգային ֆինանսական և իրավապահ համակարգերի շրջանակում:

Սկզբում ամերիկյան, իսկ հետո միջազգային իրավունքի ազդեցությամբ XX-րդ դարի 90-ական թթ. զարգացած պետությունների մեծ մասում կազմավորվեցին փողերի վացման դեմ պայքարի իրավական համակարգերի հիմքերը և ընդունվեցին հատուկ օրենքներ: Փողերի վացումը որպես հանցագործություն նախատեսվում է գրեթե բոլոր երկրների օրենսդրությամբ: Հարկավոր է նաև նշել, որ մի շարք երկրներում հանցագործություն է համարվում ամեն տեսակի անօրինական գործունեությունից ստացված եկամտի վացումը (օրինակ՝ Ղազախստանը), մյուսներում՝ միայն հանցագործության հետևանքով ձեռք բերված փողերի վացումը (օրինակ՝ Ռուսաստան), իսկ այլ պետություններում փողերի վացումը համարվում է հանցագործություն, միայն եթե դրանք ստացվել են օրենքում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թվարկված հանցագործությունների և իրավախախտումների կատարման հետևանքով¹⁰ :

Այն երկրները, որտեղ այս աղետալի երևույթի դեմ պայքարում են վաղուց, ունեն հարուստ դատական փորձ, պետական մեղադրողների համար հրատարակվում են օրենքի կիրառման առաջարկություններ¹¹ :

Միջազգային օրենսդրության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բացի այն, որ փողերի լվացումը համարվում է քրեորեն պատժելի արարք, նրա դեմ արդյունավետ պայքարն իրականացվում է այնպիսի միջոցների իրագործմամբ, ինչպիսիք են՝ փողերի լվացման հետ կապված քրեական գործերի քննության ժամանակ բանկային գաղտնիքի սահմանափակում, բռնագանձման սանկցիաների կիրառում, բանկերի կողմից «իմացիր քո հաճախորդին» կանոնի կիրառում:

Ինչ վերաբերում է բանկային գաղտնիքի ապահովմանը, ապա, օրինակ, Մեծ Բրիտանիայի օրենսդրությամբ նախատեսվում է, որ եթե բանկը գործում է բարեխիղճ, ապա նրա դեմ բանկային գաղտնիքի խախտման վերաբերյալ մեղադրանք չի առաջադրվի¹² : FATF-ն (ՖԳ-ՀՀ-ն) նախատեսում է, որ երկրները պետք է հսկեն, որպեսզի ֆինանսական հաստատությունների գաղտնիքի պաշտպանության մասին օրենսդրությունը չխոչընդոտի իր առաջարկությունների կենսագործումը: Դա վկայում է, որ միջազգային հանրությունը ֆինանսական համակարգի պաշտպանությունը հանցագործություններից դատում է ավելին, քան բանկային գաղտնիքի ապահովումը:

Փողերի լվացման դեմ պայքարի նորմերի ներդրումը միջազգային և շատ երկրների ներպետական օրենսդրության մեջ, ինչպես նաև մի շարք հեղինակավոր միջազգային կազմակերպությունների գործունեությունը այս աղետալի երևույթի դեմ պայքարի ուղղությամբ վկայում է այն մասին, որ ամբողջ միջազգային հանրությունը լուրջ մտահոգված է այս հանցագործությանը հակազդելու խնդրով:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման ծավալների ընդլայնմանը, ապա այն սերտորեն կապված է հանցավորության աճի կայուն միտումով: Ընդ որում քրեական իրավիճակի վրա ներգործում են կազմակերպված հանցավորությունը և կոռուպցիան, որոնք իրական վտանգ են ներկայացնում պետու-

թյան համար: Արագ տեմպերով աճում է հանցագործների մտավոր մակարդակը: Լայնածավալ անօրինական գործունեությունը տնտեսության տարբեր ոլորտներում ապահովում են կազմակերպված խմբերին հզոր ֆինանսական ռեսուրսներով, որով և իրենց գերակայությունն են ամրապնդում պետության քաղաքականության մեջ: Փողերի լվացման խնդիրը ձեռք է բերել միջազգային բնույթ, քանզի շատ հաճախ անօրինական եկամուտները փոխանցվում են արտասահման՝ այնտեղ օրինականացնելու նպատակով: Փողերի լվացման լայն ոլորտ է հանդիսանում պետական ունեցվածքի մասնավորեցումը, քանի որ դա հնարավորություն է տալիս հանցագործներին օգտագործել այդ ունեցվածքն իրենց շահերի համար:

Փողերի լվացման տարածումը շատ դեպքերում պայմանավորված է հասարակության ցածր իրավագիտակցության մակարդակով: Կազմակերպված հանցավորության դերը հետզհետե ուժեղանում է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տնտեսությունը, քաղաքականությունը, մշակույթը, սպորտը և այլն:

Բարդություններ են հաճախ առաջանում փողերի լվացման հետ կապված գործերի որակման և քննության ժամանակ: Այդ խնդիրների շարքին են դասվում օրինակ՝

- ՀՀ-ում դատական և քննչական փորձի պակասը,
- օպերատիվ աշխատողների, քննիչների, դատախազների մոտ տվյալ ոլորտում մասնագիտական փորձի պակասը,
- հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների վերադարձման արդյունավետ մեխանիզմների պակասը և այլն:

Հայաստանի Հանրապետությունում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի ընդունումից և մի շարք միջազգային պայմանագրեր վավերացնելուց հետո զգալի առաջընթաց է նկատվել այս բնագավառում: Մասնավորապես, ՀՀ-ի քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածում կատարված փոփոխությունների արդյունքում ներկայիս սահմանումը կարելի է ասել համապատասխանում է այդ հանցագործության միջազգային սահմանմանը: Բացի այդ, զգալի առաջընթաց է նկատվում ՀՀ օրենսդրությունը տվյալ ոլորտում միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ քրեական օրենսգիրք // «Պաշտոնական տեղեկագիր».-Եր., 2009, էջ 179:
2. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք.
3. «Թմրամիջոցների և հոգեմեդիկամենտիկայի նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիա, Վիեննա 1988թ.:
4. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին» Կոնվենցիա, Ստրասբուրգ 1990թ.:
5. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի Կոնվենցիա,Պալերմո 2000թ.:
6. Երենյան Ա.Վ., Բոշնալյան Ա. Հանցավոր եկամուտների օրինականացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու վերաբերյալ հիմնարար միջազգային փաստաթղթեր (տեսական մեկնաբանություններով), Ժողովածու.- Եր.: Ասողիկ, 2005թ., 410 էջ:
7. Բոշնալյան Ա. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողի լվացման) հիմնախնդիրը և պայքարը դրա դեմ: Մաս առաջին. Եր.:Ասողիկ, 2003թ., 175էջ:
8. FATF 40 առաջարկությունները // Փողերի լվացման դեմ պայքարի արդյունավետ ծրագրերի մշակումը.Ժողովածու.- Եր.,2001թ.
9. Панов В.П. Международное уголовное право. М.: ИНФРА-М, 1997. – 450с.
10. Алешин К.Н. Легализация (отмывание) доходов, полученных преступным путем, как преступление международного характера. СПб. Центр-Пресс, 2004. С. 432.
11. Кисилев И.А. Грязные деньги: Уголовная ответственность за отмывание преступных доходов и ее применение в борьбе с коррупцией. М., 2009. С. 152.
12. Дьяков С.В. Борьба с организованной преступностью в аспекте международного сотрудничества. Организованная преступность - 4/ Под. ред. А.И Долговой. М., 8.-367 С.
13. Кернер Х.Х., Дах Э. Отмывание денег. М. Международные отношения, 1996. С. 432.
14. Якимов О.Ю. Легализация доходов, приобретенных преступным путем. Юридический Центр-Пресс, 2005. С. 262
15. Лопашенко Н.А. Преступления в сфере экономики. М.: Волтерс лувер, 2006.-720с.
16. Волевозд А.Г., Соловьева А.Б. Международный розыск, арест, конфискация и передача иностранным государствам денежных средств и имущества, полученных преступным путем. А также вещественных доказательств по уголовным делам.-М.: Юрлитинформ, 2007.-440с.
17. Anti-Money Laundering Act of 1992. Washington,1993.
18. William C. Gilmore. Dirty money, third edition, Council of Europe,2004.
19. Money Laundering Federal Prosecution Manual. Chapter three. Washington,1994.
20. Council Directive 91/308 EEC of 10 June on prevention of the financial system for the purpose of money laundering Official Journal L 166,28/06/1991, R,0077-0082.

¹ Տե՛ս Պանով В.П. Международное уголовное право. М., ИНФРА-М, 1997. С. 305; Anti-Money Laundering Act of 1992. Washington, 1993.

² Տե՛ս «Грязные» деньги и закон. Правовые основы борьбы с легализацией преступных доходов: Сборник материалов.- М., 1994. С. 135.

³ Տե՛ս Դրանք են՝ արտարժույթով միջոցները արտասահմանից ձվերադարձները,կազմակերպությունից կամ ֆիզիկական անձից զանձվող մարսային վճարները վճարելուց խուսափելը, ֆիզիկական անձի կողմից հարկերը և (կամ) վճարները վճարելուց խուսափելը, կազմակերպությունից հարկերը և (կամ) վճարները վճարելուց խուսափելը, հարկային գործակալի պարտականությունները չկատարելը, կազմակերպության կամ անհատ ձեռներեցի այն դրամական միջոցների կամ գույքի քաբցները, որոնց հաշվին պետք է կատարվի հարկերի և (կամ) վճարների զանձումը:

⁴ Տե՛ս Երենյան Ա.Վ., Բոշնալյան Ա. Հանցավոր եկամուտների օրինականացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու վերաբերյալ հիմնարար միջազգային փաստաթղթեր (տեսական մեկնաբանություններով). Ժողովածու.- Եր.,2005, էջ 115:

⁵ Տե՛ս Council Directive91/308 EEC of 10 June on prevention of the financial system for the purpose of money laundering Official Journal L 166,28/06/1991, R, 0077-0082.

⁶ Տե՛ս Дьяков С.В. Борьба с организованной преступностью в аспекте международного сотрудничества. Организованная преступность -4 / Под. ред. А.И Долговой.- М.: Криминологическая ассоциация, 1998. С. 216:

⁷ Տե՛ս William C. Gilmore. Dirty money, third edition, Council of Europe, 2004, p. 65-71.

⁸ Տե՛ս Բոշնալյան Ա. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողի լվացման) հիմնախնդիրը և պայքարը դրա դեմ: Մաս առաջին.- Եր.: Ասողիկ, 2003, էջ 29-38:

⁹ Տե՛ս Երենյան Ա.Վ., Բոշնալյան Ա. Հանցավոր եկամուտների օրինականացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու վերաբերյալ հիմնարար միջազգային փաստաթղթեր (ժողովածու, տեսական մեկնաբանություններով). Երևան, 2006, էջ 263-265:

¹⁰ Տե՛ս Money Laundering Federal Prosecution Manual. Chapter three. Washington, 1994.

¹¹ Տե՛ս Кернер Х.Х., Дах Э. Отмывание денег. М.; Международные отношения, 1996. С. 30-31.

¹² Տե՛ս Кисилев И.А. Грязные деньги: Уголовная ответственность за отмывание преступных доходов и ее применение в борьбе с коррупцией. М., 2009. С. 27.

ՍՈՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ժուռնալիստիկայի տեսության և պատմության ամբիոնի հայցորդ



**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՄԱՍՈՒԼԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հայտնի է, որ ժողովրդի զանգվածային վարքագծի դրսևորման գործում վճռական դեր են խաղում սոցիալական ինստիտուտները: Ոչ պակաս կարևոր են հասարակության մեջ ձևավորված բարոյահոգեբանական մթնոլորտը, հասարակական կարծիքը: Հասարակական կարծիքը հաճախ կարող է դրական ազդեցություն ունենալ հասարակության համախմբմանը կամ, ընդհակառակը, պատճառ հանդիսանալ սոցիալական ցնցումների և քաղաքական փոփոխությունների համար: Այլ կերպ ասած, հասարակական կարծիքի ձևավորումը անքակտելիորեն կապված է մեր երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր գաղափարական զարգացման պայմանների հետ:

Այս պարագայում կարևորվում է հասարակական կարծիքի՝ որպես երկրի քաղաքական և տնտեսական կյանքի ներկա և ապագա զարգացման ուղիների հստակեցման նշանակությունը:

Հասարակական կարծիքի ձևավորման գործում առաջնային դերակատարում ունեն ՋԼՄ-ները և մասնավորապես պարբերական մամուլի հասարակական-քաղաքական թեմատիկայով հրապարակումները:

Հասարակական կարծիքի ձևավորման գործում քաղաքական հրապարակախոսության դերակատարումը ըմբռնելու համար համոզիչ է հնչում հետևյալ բնորոշումը. «Հրապարակախոսական ժանրը ենթադրում է ոչ միայն արձանագրող խոսք, այլև վերաբերմունքի արտահայտում հաղորդածի նկատմամբ: Հրապարակախոսական տեքստը ուղղված է ներգործելու, համոզմունքներ ձևավորելու»¹:

Քաղաքական հրապարակախոսության լսարանի հետ կապի ապահովումը հնարավորություն է տալիս ճշգրիտ տեղեկություն ստանալ զանգվածային գիտակցության իրական վիճակի

մասին: Նման պարագայում հրապարակախոսությունը ապահովում է հետադարձ կապ, որը հասարակական կարծիքը վեր է ածում ժողովրդավարական հասարակության գործուն ինստիտուտի:

Հրապարակախոսությունը միաժամանակ հասարակական գործընթաց է, որի վրա ազդեցություն են թողնում առկա սոցիալական, ինչպես նաև տեխնոլոգիական պայմանները:

Ժողովրդավարական հասարակությունում քաղաքական հրապարակախոսությունը հնարավորություն ունի հասարակական կարծիքի ձևավորման միջոցով փոփոխել մարդկանց պատկերացումները սեփական կյանքի և հեռանկարի նկատմամբ, սակայն մի վերապահումով. եթե հասարակության մեջ չեն ձևավորվել կարծրացած պատկերացումներ երկրի և պետության հետագա զարգացման և նրանցում անհատի դերի նկատմամբ:

Այս դեպքում հրապարակախոսության նպատակը ոչ թե ընթերցողների կողմից նոր գաղափարների պասիվ ընկալումն է, այլ երևույթների նկատմամբ ակտիվ արձագանքի խրախուսումը:

Ռուս մտածող Դ. Պիսարևը դեռևս մեկուկես հարյուրամյակ առաջ գրում էր, որ մտավոր և բարոյական քարոզչությունը որոշ չափով ուրիշի ազատության վրա ոտնձգություն է. «Ես կամենում եմ ոչ թե ընթերցողին հարկադրել համաձայնելու ինձ հետ, այլ ոգեկոչել նրա մտքի ինքնագործունեությունը և առիթ տալ նրան ինքնուրույն քննարկելու իմ կողմից առաջադրված հարցերը»: Ըստ նրա՝ ընթերցողի հետ հարաբերվելը կարող է լինել երկխոսության ձևով, խելամիտ հարցադրմամբ և նրանց հավաստի պատասխանով: Դ. Պիսարևը ընդգծում է, որ հրապարակախոսը պետք է կանխատեսի իր ընթերցողների բոլոր սպասումները, կասկածները և առարկությունները. ինքը պետք է

www.moj.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

քարճրացնի հարցադրումներ և փորձի պատասխանել դրանց:

Ուստի հրատապ է պարզել, թե որքանով է ներկայիս հայ հրապարակախոսությունը համապատասխանում վերը նշված չափանիշներին, և որքանով է նրան հաջողվում ձևավորել հասարակական կարծիք:

Հայ հրապարակախոսությունը, որպես կանոն, անցյալում ունեցել է երկու ուղղվածություն՝ գրական-քննադատական և քաղաքական: Ի դեպ, քաղաքական հրապարակախոսության մեջ գերիշխել է ազգային-ազատագրական պայքարի և հայ պետականության ստեղծման թեմատիկան: Ներկա քաղաքական հրապարակախոսությունում առաջնային տեղ են գրավում իշխանություն-ընդդիմություն փոխհարաբերության և արցախյան հիմնահարցի կարգավորման խնդիրները:

Քաղաքական հրապարակախոսության նշանակությունը որոշվում է նրանով, որ փորձում է կանխորոշել մարդկանց հասարակական վարքագիծը, նրանց վերաբերմունքը պաշտոնական իշխանությունների, քաղաքական կուսակցությունների, տարատեսակ հասարակական շարժումների, և, ի վերջո, վերաբերմունքը միմյանց նկատմամբ:

Ելակետ պետք է ունենալ այն, որ հասարակական կարծիքի ձևավորումն անքակտելիորեն կապված է մեր երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր, գաղափարական զարգացման հիմնախնդիրների հետ:

Պետք է գիտակցել, որ վերջին երկու տասնամյակում հրապարակախոսությունը, ՉԼՄ-ները զգալի դեր խաղացին անցման շրջանի գաղափարախոսության քարոզչության գործում: Ըստ որում, ՉԼՄ-ները և հատկապես քաղաքական հրապարակախոսությունը ոչ միայն զբաղվեցին քարոզչությամբ, այլև փաստացիորեն նպաստեցին մարդկանց մոտ նոր մտածողության և հասարակության հեռանկարի նկատմամբ նոր մոտեցումների մշակմանը: Ավելին, այդ ընթացքում արմատական փոփոխություն կրեցին նաև ՉԼՄ-ների գաղափարական-քաղաքական ուղղվածությունը և հասարակական երևույթների գնահատման չափանիշները: Այլ կերպ ասած՝ տեղի է ունենում երկակի, փոխկապակցված գործընթաց. մի կողմից հասարակության մեջ ձևավորվում է ազատամտական գաղափարախոսություն, մյուս կողմից՝ դրան համարժեք ՉԼՄ-ներ:

Հրապարակախոսական ստեղծագործությունների հնչեղությունը պայմանավորված է նրանով, թե ինչ չափով են նրանք արտացոլում ժամանակակից հասարակական շահերը և որքանով են նրանք ներգործում հասարակական կարծիքի ձևավորման վրա:

Այս երևույթն ավելի խորությամբ բացահայտելու համար արժե հետադարձ հայացք գցել դեպի պատմական նախորդ ժամանակաշրջանը: 1990-ական թվականներին նախկին խորհրդային գրեթե բոլոր տարածքներում փորձ կատարվեց ազատամտությունը ներկայացնել որպես միակ օբյեկտիվ և համակարգված քաղաքական գիտակցության ձև: Նույն կերպ ՉԼՄ-ներում գովազդվում էին ազատախոհական վերափոխությունները: Հայկական մամուլում ազատամտական գիտակցությունը և ազատամիտ վերափոխությունները գրեթե միանշանակ գնահատվեցին դրականորեն: Նման կերպ վարվեցին հրապարակախոսները և գիտականությանը հավակնող առանձին հոդվածների հեղինակները:

Այս երևույթը հայ հետազոտողների կողմից այդպես էլ գիտական գնահատականի չարժանացավ: Մինչդեռ ԱՊՀ մյուս երկրների գիտնականները փորձեցին նման իրողությանը տալ որոշակի բացատրություններ: Այսպես՝ Լ. Կովալոֆինը «Իշխանությունը և բարոյականությունը» ժողովածույում քննադատում է ազատամտական վերափոխությունը և փորձում ազատախոհությունը կապել այնպիսի պահպանողական արժեքների հետ, ինչպիսիք են կրոնն ու ընտանիքը²:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության հասարակության մեջ ընթանում են ոչ միանշանակ սոցիալ-քաղաքական գործընթացներ, որը պահանջում է նրանց համակողմանի ուսումնասիրություն և վերաիմաստավորում: Նկատելի է նաև հասարակական-քաղաքական հիմնախնդիրների նկատմամբ ժողովրդի հետաքրքրության աճ, որը բացատրվում է նաև մարդկանց մոտ սեփական մոտեցումները ձևավորելու հոգեբանական հակվածությամբ:

Միաժամանակ նկատելի է մարդկանց տարբեր հատվածների ոչ միանշանակ վերաբերմունք հասարակական-քաղաքական երևույթների գնահատման նկատմամբ: Նման մոտեցումը հատկապես զգալի է խնդրի հանդեպ իշխանական շրջանների և ընդդիմության՝ միմյանցից էապես

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տարբերվող տեսակետներով: Կառավարական շրջանները պնդում են, որ ժողովրդավարությունը չի նշանակում ամենաթողություն, իսկ ընդդիմադիրները ընդվզում են իրենց իրավունքների և ազատությունների սահմանափակման դեմ:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքական հրապարակախոսությունը մամուլի մեջ, որն ուղղված էր հասարակական կարծիքի ձևավորմանը, անցել է մի քանի փուլեր: 1990-ական թվականների սկզբին քաղաքական հրապարակախոսությունը նպատակաճշգրտված էր հասարակական կարծիքը ձևավորել հայրենասիրության և ազգային-ազատագրական շարժմանը գորավիզ լինելու տեսակետից: Հետագա տարիներին հասարակական կարծիքի ձևավորումը գրկվեց պատմահայրենասիրական արժեքային բնույթից:

Ճշմարիտ է, եղան առանձին հրապարակումներ, որոնք, սակայն, անհրաժեշտ հասարակական հնչեղություն այդպես էլ չստացան: Դրական իմաստով առանձնանում է «Հայաստանի Հանրապետություն» թերթը, որտեղ «Տիգրան Մեծ՝ պետականության խորհրդանիշ», հրապարակախոսական հոդվածում թերթը վերլուծաբար ներկայացնում է ականավոր պետական գործչին նվիրված գիտաժողովի նյութերը: Հոդվածի ատաղձն է կազմում այն գաղափարը, որ պետականության կերտման ճանապարհին միշտ չէ, որ մեր հասարակությունը խոհեմություն է ունեցել ետ նայել և ուշադրության արժանացնել երբեմնի ունեցած մեր հզոր պետականությունը և այն թագավորներին, ովքեր նպաստել են այդ պետականության կայացմանն ու հզորացմանը: Պատմաբաններն անգամ խոստովանում են, որ պատմության բազմաթիվ հատորներում նման հարցերը կարծես երկրորդ պլան են մղված: Ու թեև պատմության կերտող ուժը համարվում է ժողովուրդը, սակայն լինում են անհատներ, որոնց ազդեցությունն այդ գործընթացում անհնար է ուրանալ: Հենց այդպիսի անհատ է հայոց Տիգրան Մեծ թագավորը, միակը, որին արքայից արքա տիտղոսն է շնորհվել³:

Թվում էր, թե ՀՀ ԳԱԱ գիտաժողովը արձագանքներ կգտներ հասարակության լայն շրջաններում, դրան կանդորադառնային նաև ԶԼՄ-ները, մինչդեռ հայ պետականության ամենամեծ խորհրդանիշը հանդիսացող Տիգրան Մեծի կյանքին և գործունեությանը նվիրված այլ քննարկումներ կամ մամուլի հրապարակումներ այդպես էլ չեղան:

Գրեթե նույն ճակատագրին արժանացավ հայ ժողովրդի համար բախտորոշ այնպիսի իրադարձության հոբելյանը, ինչպես հայոց գրերի գյուտի 1600-ամյակն է, որը չդարձավ կրթամշակութային և քաղաքական խոշոր երևույթ: Մամուլում եղան հիշարժան տարեթվին նվիրված ընդամենը մի քանի հրապարակումներ: Թերևս արժե նշել «Մինչև Մաշտոցը և նրանից հետո» վերտառությամբ միջազգային գիտաժողովի ելույթների վերլուծականը⁴: Կարելի է առանձնացնել նաև «Ուխտագնացություն դեպի Հայաստան» հիմնախնդրային հոդվածը, որում քննության է առնվում հայոց գրերի ստեղծման և 1600-ամյա տարելիցի նշանակությունը հայ ժողովրդի հոգևոր հարստացման համար: Հոդվածում կանադահայ թեմի եպիսկոպոսն ընդգծում է հայոց գրերի ստեղծման բացառիկ նշանակությունը համայն հայության համախմբման գործում⁵: Սակայն նման բովանդակության հրապարակումները եզակի էին և լայն արձագանք չգտան հանրության շրջանում:

Հասարակական կարծիքի՝ սոցիալական իրականության հետ ունեցած փոխկապակցումը զգալի է հատկապես այնպիսի ժամանակաշրջաններում, երբ հասարակության քաղաքական կյանքը միտում ունի գերիշխելու՝ արտացոլելով հասարակության տարբեր քաղաքական և սոցիալական շերտերի քաղաքական հայացքները, տեսակետները՝ և, ի վերջո, ռազմավարությունը:

Այդ իմաստով կարևոր է ժողովրդի բոլոր հատվածների և հատկապես երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունը՝ գործողության մեջ դնելով հրապարակախոսության նորանոր դրսևորումներ: Բնորոշ է «Սե տառի ողիսականը» հոդվածը, որը փորձում է հասարակական կարծիք ձևավորել հայ ժողովրդի հոգևոր արժեքների և ականավոր գործիչների ստեղծագործական ժառանգության նկատմամբ: Հ. Թումանյանի արձանի վրա ազգանվան «Մ» տառը ջնջվել է՝ աղավաղելով մեծ բանաստեղծի ազգանունը: Թերթը ընդվզում է մարդկանց անտարբերության նկատմամբ. «Եղածը ընդամենը մի «Մ» տառ է, ցավը՝ նրա բացակայությունը, խռովքը՝ զարմանալի, անհանդուրժելի կուրությունը, խնդիրը՝ թերությունն ու թերացումը մատնանշելն ու վերացնելուն նպաստելը⁶»:

Հասարակության ժողովրդավարացման գործընթացը բացահայտում է հասարակական

www.moj.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կարծիքի հնարավորությունները որպես հասարակական- քաղաքական կյանքի կարևոր գործոն, որը նպատակամղված է քաղաքացիական, ազատ հասարակության ձևավորմանը:

Մինչդեռ մեր հասարակությունում ժողովրդավարության ձևավորումը ընթանում է բարդ ուղով՝ արտացոլելով սոցիալ-քաղաքական և տրնտեսական վերափոխությունների ամբողջ դժվարությունը: Այդպիսի դժվարություններ է կրում նաև հասարակական կարծիքի ձևավորումը սոցիալական իրականության հակասական զարգացման պայմաններում, քանի որ քաղաքական հրապարակախոսությունը պաշտպանում է գաղափարներ և արժեքներ՝ ուղղված երկրի առաջադիմական զարգացմանը մի միջավայրում, որտեղ տիրում են անկատար հասարակական հարաբերություններ:

Հայաստանի Հանրապետությունում հասարակության մեջ նկատելի է տարբեր հայացքների և մոտեցումների բազմազանություն: Նման բազմազանությունն իր ազդեցությունն է թողնում նաև մամուլի կողմից հասարակական կարծիքի ձևավորման, քաղաքական հրապարակախոսության թեմատիկայի և բովանդակության վրա:

Մամուլի հրապարակախոսության մեջ հասարակական-քաղաքական թեմատիկայի հիմնահարցը միանշանակ չի ընկալվում:

Ակնհայտ են դառնում հասարակության տարբեր ուժերի ձգտումները: Իշխանությունները փորձում են հասարակական կարծիքը ձևավորել սեփական դիրքերը ամրապնդելու և հետագայում իշխանությունը վերարտադրելու, իսկ ընդդիմությունը՝ հասարակական կարծիքը սեփական շահերի հունով նպատակամղելու համար:

Ժողովրդական զանգվածները հասարակական կարծիքի ձևավորմանը մոտենում են առավել այլընտրանքայնորեն: Մի մասը պաշտպանում է իշխանությունների, մյուսը՝ հակընդդեմ ուժերի դիրքորոշումը: Ժողովրդի մեծ մասը հակված է որդեգրելու սպասողական դիրքորոշում՝ հույս ունենալով, թե իշխանություն-ընդդիմություն պայքարը, ի վերջո, կհանգեցնի նոր ճշմարտությունների բացահայտմանը:

Փաստորեն ժողովրդի մեծ մասի հասարակական կարծիքում անվստահություն է դրսևորվում ձևավորված քաղաքական համակարգի՝ իշխանության և ընդդիմության նկատմամբ:

Այս պայմաններում տարբեր ուղղվածու-

թյան քաղաքական հրապարակախոսության հաճախակի դրսևորվող ձգտումները, այն է՝ սեփական մեկնակետով ձևավորել հասարակական կարծիք, չեն տալիս ցանկալի արդյունքներ:

Մամուլի՝ հասարակական կարծիքի ձևավորման ջանքերի անարդյունավետությունը առանձնապես դրսևորվում է նախընտրական շրջանում:

«Հայաստանի Հանրապետություն», «Գոլոս Արմենիի», «Նովոյե վրեմյա» և մի քանի այլ պարբերականներ փորձում են հասարակական կարծիքը ձևավորել ի նպաստ ներկայիս իշխանությունների: Ե՛իշտ հակառակ կողմնորոշում ունեն ընդդիմության շահերի պաշտպան «Հայկական ժամանակ», «Չորրորդ իշխանություն» թերթերը:

Այսպես՝ 1996թ. և հետագա տարիների նախագահական ընտրությունների նախօրյակին տարբեր կողմնորոշման թերթերը հրապարակեցին բնակչության շրջանում անցկացված իրական թեչիմոս հարցումների արդյունքներ, որոնք պարզորոշ դրսևորեցին հասարակական կարծիքի տարակարծությունները:

Ուստի կարելի է հետևություն անել, որ Հայաստանում հասարակական կարծիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ, գտնվում է տարընթացության վիճակում:

Այն պարզորոշ դրսևորվում է, երբ ձևավորված բարոյահոգեբանական աննպաստ մթնոլորտում խորանում է հասարակության տարբեր շերտերի միջև բևեռացումը, միաժամանակ նվազում մարդկանց միջև փոխըմբռնումը:

Դրա պատճառները օբյեկտիվ են և սուբյեկտիվ: Ժողովուրդների պատմության մեջ առաջին անգամ նախկին ԽՍՀՄ երկրներում փորձ է կատարվում սոցիալիստական հասարակարգից անցում կատարել կապիտալիստականին, որը հղի է անկանխատեսելի հետևանքներով: Հայաստանի Հանրապետությունում այդ գործընթացները կրեցին տարերային, անկառավարելի բնույթ, որը հանգեցրեց հասարակության տարբեր շերտերի միջև բևեռացմանը: Դրան ավելացան բացասական սուբյեկտիվ գործոններ, որոնցից հարկ է ընդգծել իշխանական թևի կողմից սեփական կոնյուկտուրայի շահերով ղեկավարվելը, իշխանության և մեծ բիզնեսի միաձուլումը, մամուլի միջոցով հասարակական գիտակցության և հասարակական կարծիքի մանիպուլյացիան:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Այդ ամենը բնակչության զգալի մասի մոտ իշխանությունների նկատմամբ անվստահության մթնոլորտ ձևավորեց: Մինչդեռ գործնականում իշխանական հաստատությունների լեգիտիմությունը պաշտպանվում է նրա նկատմամբ քաղաքացիական հասարակության բոլոր կառույցների և ամենից առաջ՝ հասարակական կարծիքի միջոցով:

Հասարակական կարծիքը Հայաստանում բացասաբար է տրամադրված նաև ընդդիմության նկատմամբ, որում գերիշխում են անցյալում վարկաբեկված նախկին իշխանավորները:

Հետաքրքիր է դիտարկել, թե, ի տարբերություն փակ հասարակության, ժողովրդավարականը հասարակական կարծիքի ձևավորման խնդրում ինչպիսի բնորոշ հատկանիշներ ունի.

ա. հասարակության կենսագործունեության և նրա զարգացման հեռանկարի նկատմամբ քննադատական մոտեցումը,

բ. իրավական, բարոյական և արժեքային դիրքերից հասարակական իրականության գնահատման դրսևորումը,

գ. իշխանական մարմինների և քաղաքացիական հասարակության քաղաքակիրթ փոխգործողությունը:

Ժողովրդավարական հասարակությունում քաղաքական հրապարակախոսությունը հնարավորություն ունի հասարակական կարծիքի միջոցով փոխելու մարդկանց պատկերացումներն իր կյանքի և հեռանկարի վերաբերյալ:

Մինչդեռ փակ հասարակությունում վարքագծի նորմերը և արժեքները կարող են պարտադրվել անհատին և մարդկանց խմբերին:

Արդի հրապարակախոսությունում ժողովրդավարության ձևավորման քարոզչությունը անփոփոխ մոտեցում չէ: Հասարակական-քաղաքական զարգացումներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում ժողովրդավարության, հասարակության անդամների ինքնաճանաչման և ազգային կերտվածքի ձևավորման վրա:

Բնակչության քաղաքական ինքնաճանաչման գործընթացը ենթարկվում է ոչ միայն ներքին պայմանների, այլև արտաքին ազդակների ազդեցությանը: Դրա դրսևորումներից մեկն այն է, որ հայ հասարակության մեջ տասնամյակներ շարունակ ձևավորվել է այն տեսակետը, ըստ որի՝ Արևմուտքը հանդիսանում է ժողովրդավարության խորհրդանիշ: Ճշմարիտ է, որ վերջինիս ազդեցու-

թյունը 1990-ական թվականներին շատ ավելի զգալի էր: Սակայն ամբողջ աշխարհում ծավալվող գործընթացները զգալիորեն փոխեցին ժողովրդավարության վերաբերյալ մեր հասարակության պատկերացումները: Դրանք չեն համընկնում ներկայիս արևմտյան ռացիոնալ մոտեցումներին:

Հասարակական կյանքի արմատական փոխակերպման հետևանքով զգալիորեն փոխվում են ժողովրդավարության նկատմամբ մարդկանց պատկերացումները:

Այնհայտ է՝ վերջին տարիներին բնակչության կեսից ավելին հիասթափություն է ապրել ժողովրդավարության արժեքներից և իդեալներից:

Ժողովրդավարության պատկերի փոփոխման և ազատամիտ քաղաքական գործիչների նկատմամբ համակրանքի նվազման պարագայում մարդկանց մոտ աճում են Արևմուտքի արժեքների նկատմամբ անտարբերությունը:

Անցկացված հարցումները ցույց են տալիս, որ ժողովրդավարական արժեքները բարձր են գնահատում հիմնականում կրթված, եկամտների միջին մակարդակ ունեցող, 25-50 տարեկան մարդիկ: Մինչդեռ ավելի տարեցները և հատկապես կենսաթոշակառուները առաջնային են համարում հայրենասիրությունը, պետականության ամրապնդման գաղափարը: Մարդկանց 60 տոկոսն էլ թերահավատ է ժողովրդավարության արժեհամակարգի նկատմամբ, և միայն 30 տոկոսն է այն համարում իրենց երկրների առաջընթացի գրավական:

Հայ հասարակայնությունը առանձնապես զգայուն է ցեղասպանության համաշխարհային ճանաչման հետ առնչվող հարցերի քննության խնդրում: Ուշագրավ է «Խտալացին և մեծ եղեռնը» հրապարակախոսական գրախոսությունը, ուր ներկայացված է հայերին և Հայաստանին վերաբերող երեք գրքերի հեղինակ Ջ. Գուայտայի «Ճիշ Արարատից», «Արմին Վեզները» և «Հայերի ցեղասպանությունը» գիրք-ալբոմը: Թերթը մեջբերում է իտալացու խոսքերը, որ եղեռնը «հանցագործություն է մարդկանց և նաև իմ հանդեպ»⁷:

Այս նույն թեման արծարծվում է թերթի մեկ ուրիշ հրապարակման մեջ՝ արտատպելով Ստամբուլի «Մարմարա» օրաթերթի հրապարակումը, որտեղ տպագրված էր թուրքահայ թերթի խմբագրի քաղաքական բնույթի հարցազրույցը հայաստանցի տնտեսագետի հետ: Հոդվածը եզրափակվում է հետևյալ դատողությամբ. «Թուրքիայի կառավա-

www.moj.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րությունը պետք է ուժ գտնի ընդունելու 1915 թ. եղեռնը»⁸:

Վերջին ժամանակների հայ հրապարակախոսության մեջ ձևավորվել է նոր ուղղվածություն՝ գիտական-վերլուծական, որի ատաղձն է տնտեսության, քաղաքականության, մշակույթի ներկա վիճակի, ազգի բարոյահոգեբանական կերտվածքի կամ պատմական փորձի իմաստավորման գիտատեսական վերլուծությունը:

Հասարակական կարծիքի ձևավորման կարևոր ուղղություններից է հանրակրթական դրպրոցի, բուհի, մասամբ նաև գիտության հիմնահարցերի քննությունը: Ընդ որում, հրապարակումների մեծ մասն ունի քննադատական ուղղվածություն: Այսպես՝ «Ազգ» թերթը տպագրել է հրապարակախոսական բնույթի հոդված «Բռնի բարեփոխումների բողոքները» վերնագրով, որում հանրագումարի բերելով դպրոցի բարեփոխումների վերաբերյալ ուսուցչական կոլեկտիվներում ծավալված քննարկումները՝ թերթը համամիտ է նրանցում արտահայտված ընդհանուր տեսակետին, որ «տասներկու ամյա դպրոցը սուտ է ֆիկցիա»⁹:

Հանրապետության հասարակական կյանքում 2004-2005 թթ. նշանավորվեցին սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտության քարոզչությամբ և հանրաքվեի անցկացման նշանաբանով: Քաղաքական հրապարակախոսությունը նպատակ էր հետապնդում ձևավորել հասարակական կարծիք, ըստ որի՝ սահմանադրական բարեփոխումները կոչված են ամրապնդելու մեր երկրի վարկանիշը՝ որպես մի հասարակություն, որը հավատարիմ է ազատական և ժողովրդավարական արժեքներին:

Ինչպես և կարելի էր ակնկալել, սահմանադրական բարեփոխումների քարոզչությունում առաջնային դերը վերապահվում էր իշխանության ներկայացուցիչներին: Այսպես, «Հայաստանի Հանրապետություն» թերթը մեջբերումներ է կատարում նախագահ Ռ. Քոչարյանի՝ Երևանի պետական համալսարանում ունեցած ելույթից, ուր հիմնավորվում էր այն տեսակետը, որ սահմանադրական բարեփոխումները հանգեցնելու են նրան, որ «Հայաստանը դառնալու է, անկասկած, առաջատար երկիր՝ բոլոր դրական հետևանքներով»¹⁰: Նկատելի է, որ «Հայաստանի Հանրապետություն» թերթի վերը նշված հրապարակախոսական մեկնաբանությունն ավելի շատ կրում է տեղեկատվական,

քան վերլուծական բնույթ: Թերթը, առանց սեփական տեսակետը հայտնելու, շարադրում է հանրապետության նախագահի մոտեցումները խնդրո առարկայի վերաբերյալ: Նման պարագայում թուլանում է հրապարակման հասարակական հնչեղությունը:

Գրեթե նույն ոճով է շարադրված «Հայաստանի Հանրապետություն» թերթում «Դաշնակցությունը չի փոխում իր դիրքորոշումը» տեղեկատվական հոդվածը: Նշվում է, որ Սահմանադրության փոփոխությունների ընդունման պարագայում կրնա դրանից բխող նոր օրենքներ: Ըստ հոդվածագրի՝ լուծման են սպասում երկքաղաքացիության, քիկնագորային ծառայության և այլ խնդիրներ:

Հոդվածի ատաղձն է այն մոտեցումը, որ ժողովրդավարությունը պահանջում է պարզաբանել բարեփոխումների անհրաժեշտությունը երկրի և հասարակության առաջընթացի համար:

Ուշագրավ է նույն թեմայով «Սահմանադրական բարեփոխումները և դատական իշխանությունը» պրոբլեմային հոդվածը, որում ընդգծվում է, որ յուրաքանչյուր հասարակության համար մնալուն արժեքներից է արդարադատության գործընթացը: Հոդվածում կարդում ենք. «ՀՀ գործող Սահմանադրությունը նախատեսել է ժողովրդավարական առաջադեմ երկրներին բնորոշ դատական իշխանության անկախությունն ապահովող մի շարք սկզբունքներ ու երաշխիքներ»¹¹: Վերջում հոդվածագիրը եզրահանգում է. «Նախագծով առաջարկվող փոփոխությունները և լրացումները ՀՀ Սահմանադրության մեջ կատարվելու դեպքում դատական իշխանությանը վերաբերող 6-րդ գլուխն էականորեն կբարելավվի, կստեղծվեն օրենսդրական բավարար հիմքեր իշխանության այդ թևի անկախ և արդյունավետ գործունեության համար»¹²:

Մասնագիտորեն շարադրված հոդվածը ունի խոցելի կողմ այն առումով, որ հոդվածագիրն իրավական դաշտի բարեփոխումները դիտում է երկրի ժողովրդավարական գործընթացներից տարաբաժան: Եթե անգամ դատական մարմինների գործունեության վերաբերյալ ընդունվեն որոշումներ՝ միտված ոլորտի բարեփոխմանը, առանց երկրում ժողովրդավարության սկզբունքների արմատացման այն չի կարող գտնել գործնական կիրառում:

Կարելի էր կարծել, որ սահմանադրական

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բարեփոխումները հանրաքվեի միջոցով ընդունվելուց հետո հասարակության բոլոր շերտերը պետք է արտահայտեն իրենց գոհունակությունը ժողովրդավարական գործընթացի կապակցությամբ: Մակայն ընդդիմադիր մամուլում ծավալվեց քննադատություն ոչ այնքան ընդունված օրենքի, որքան հանրաքվեի արդյունքների կեղծարարության վերաբերյալ: Ընդդիմադիր թերթերի հրապարակումների հիմնական ատաղձն այն էր, որ սահմանադրական բարեփոխումների ընդունմամբ գործող իշխանությունները փորձում են Արևմուտքի առջև պատրանք ստեղծել, թե իրենք ժողովրդավար են:

Հասարակական կարծիքի ձևավորման գործում զգալի դերակատարում ունեն քաղաքական կուսակցությունները: Առավել ևս ժողովրդավարության հաստատման կարևոր քաղաքական քաղաքական համակարգի ձևավորումն է: Թվում է, թե այս խնդրում հասարակական բոլոր ուժերը միակարծիք են: Մինչդեռ նկատելի է իշխանության և ընդդիմության միջև տարածայնությունների առկայությունը: Երկուսն էլ հրապարակավ ընդունում են բազմակուսակցական համակարգի և կուսակցությունների ազատ գործունեության կարևորությունը: Մակայն, եթե իշխանությունները ձգտում են սահմանափակել ընդդիմադիր կուսակցությունների ազդեցության ոլորտները, ապա ընդդիմությունը նույնքան ջանասիրությամբ փորձում է հախուռն քննադատել իշխանությունների ցանկացած գործունեությունը:

Ընդդիմության հիմնական փաստարկը այն է, որ իշխանությունները փորձում են քայքայել հակընդդեմ կուսակցությունները և դրանով իսկ սահմանափակել հասարակական կարծիքի ձևավորման նրանց հնարավորությունները:

Ամիսների ընթացքում պարբերականների հրապարակախոսական հոդվածների նյութը «Ժառանգություն» կուսակցությունում և «Հայ ազգային կոնգրեսում» տեղի ունեցող գործընթացներն էին, նրանցում տիրող գծությունները: Մամուլի հրապարակումներում այդպես էլ քննարկման նյութ չդարձան գաղափարական հարցերը, այլ՝ սոսկ անձնական բնույթի բախումները: 2009թ. տարեմուտին համանման իրադարձություններ ծավալվեցին «Հնչակյան» կուսակցությունում: «Հայք» թերթը տպագրել է կուսակցության ատենապետի հետ հարցազրույց, որտեղ հեղինակը խոսում է կուսակցության որոշ անդամների կողմից կաշառք տալու

միջոցով համախոհներ հավաքագրելու մասին¹³:

Իրականում, կան ճշմարտություններ, որոնցից խուսափելն անհնարին է: Ցանկացած կուսակցություն կարող է գոյատևել գաղափարաբանական հենքի առկայությամբ: Նույնքան կարևոր է հասարակության մեջ տվյալ կուսակցության գործունեության անհրաժեշտության գիտակցումը: Կուսակցությունը կենսունակ է, երբ ունի հանրության կողմից ընդունելի առաջադրված խնդիրներ, և առկա են դրանց իրականացման մշակված մեխանիզմները: Կարևոր է նաև կուսակցությունում հանրության համակրանքը վայելող գործիչների առկայությունը:

Հասարակական կարծիքի ձևավորման գործում կուսակցությունները, որպես կանոն, դիմում են ՋԼՄ-ների օգնությանը, որոնք, ըստ քաղաքական կողմնորոշման, տարատեսակ մեկնաբանություններ են տալիս հասարակական կյանքում այս կամ այն կուսակցության դերակատարմանը:

Այդ իմաստով բնորոշ է «Առավոտում» տպագրված առաջնորդող հոդվածը: Ըստ հեղինակի, իշխանությունները «շատ լավ գիտեն մարդկային մանր կրքերի՝ փողասիրության և փառամոլության ուժը, և այդ օգտագործում են կուսակցություններ քանդելու համար: Այդպես են քանդվել Կոմունիստական կուսակցությունը և ԱԺՄ-ն: Այդ կուսակցությունների պառակտումը լուրջ հարված էր Հայաստանի քաղաքական համակարգի համար»¹⁴:

Նույն հոդվածում մտահոգություն է հայտնվում, որ այժմ էլ «վերևներում մատած խարդախսերները ձեռնամուխ են եղել ՍԻՄ կուսակցության քայքայմանը»:

Գժվար է համաձայնել հեղինակի այն տեսակետին, թե վերը նշված կուսակցությունների պառակտումը մեծ հարված է Հայաստանի քաղաքական համակարգին: Իրականում կոմկուսը 1990-ական թվականների կեսերից երկրի ներքաղաքական կյանքում կորցրել էր երբեմնի դերը: Ինչ վերաբերում է ԱԺՄ-ի և ՍԻՄ-ի ջանքերին՝ ակտիվորեն ներգրավվելու երկրի հասարակական-քաղաքական կյանքում, ապա նրանք որևէ շոշափելի արդյունքի չեն հասել:

Կարելի է հասկանալ, բայց ոչ արդարացնել իշխանական թևի նկրտումները՝ թուլացնելու ընդդիմադիր կուսակցությունների ազդեցությունը հասարակական գործընթացներում: Իրականում նման գործընթացներ նկատելի են անգամ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Արևմուտքի ժողովրդավարական երկրներում:

Ընդդիմության որոշ ներկայացուցիչների արտահայտած այն տեսակետը, թե իբր իշխանությունները պետք է շահագրգռված լինեն ուժեղ ընդդիմության ձևավորմամբ, անկեղծ չէ, քանի որ ընդդիմության հեղինակությունը աճում է, երբ նվազում է իշխանական թևի վարկանիշը:

Հայաստանում փոփոխվող տնտեսական համակարգի պայմաններում աճում է արդյունաբերական նախկին հզորությունների առնվազն մի մասի վերականգման անհրաժեշտությունը: Նման պարագայում հրատապ է դառնում բնապահպանական խնդիրների լուծումը:

Դժվար է պատկերացնել հայ ժողովրդին ամենից շատ հուզող բնապահպանական խնդիր, քան Սևանի փրկության հարցը, որը արագ կերպով ջրագուրկ է լինում: Արդեն մի քանի տասնամյակներ է, ինչ այն գտնվում է հայ հասարակության ուշադրության կենտրոնում: Արդյունավետ չեն նաև Սևանի հիմնախնդիրների վերաբերյալ կառավարության որոշումները, որոնց մեծ մասը չեն իրագործվում: Մինչդեռ Սևանը այդպես էլ իրական օգնություն չի ստանում: Գանդաղում են Արփա-Սևան ջրագծի վնասված հատվածների վերականգնողական աշխատանքները: Գեռես ոռոգման և այլ նպատակներով շարունակվում է Սևանից մեծաքանակ ջրերի բացթողումը: Հետևողականորեն չեն իրականացվում նաև Սևանի ափամերձ շրջանների մաքրման աշխատանքները, որին հարուցվում են արհեստական խոչընդոտներ:

